Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

33-34(535-536)
15.12.2018
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Դեկտեմբերի 10-ն Արցախում ըստ տոնացույցի ոչ աշխատանքային օր է՝ կապված ԱՀ Սահմանադրության ընդունման հերթական տարեդարձի հետ: Բայց միայն երկրի հիմնական օրենքի ընդունման կապակցությամբ չի կարևորվում այդ օրը. 27 տարի առաջ, դարձյալ դեկտեմբերի 10-ին, Արցախի ժողովուրդը հանրաքվեով քվեարկել է իր անկախության օգտին:

Անկախության և սահմանադրական հանրաքվեներն Արցախում տոնականության նույն բովանդակությունն ունեն, որովհետև ընդհանրացնում են համաժողովրդական կամարտահայտությունը: Օրվա խորհուրդը նաև այն է, որ դեկտեմբերի 10-ը միաժամանակ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրն է: Անկախ այն բանից, թե միջազգային իրավունքի տեսանկյունից այս փաստաթղթերն ինչքանով են ազդել ղարաբաղյան կարգավորման բանակցային ընթացքի վրա, շեշտում են հիմնախնդրի լուծման տրամաբանական մոտեցումը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը գերակայող հիմք է: Այս մոտեցումն անփոփոխ է մնացել ԱՀ իշխանությունների պաշտոնական դիրքորոշումներում և բազմիցս պաշտպանություն գտել երկրի հասարակական-քաղաքական ուժերի կողմից:

Հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջնորդներն, ի թիվս այլ առաջարկների, մատնանշում են նաև Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշտման նպատակով երբևէ նոր հանրաքվե անցկացնելու գաղափարը: Բայց Արցախի ժողովուրդը ոչ մի պարագայում հետ չի կանգնի իր ընտրած ուղուց. նոր հանրաքվե կամ պլեբեսցիտ պարտադրելն ուղղակի հեռանկար չունի: Պետք է հաշվի առնվի այն կարևոր հանգամանքը, որ 1991-ի հանրաքվեն անցկացվել է ռումբերի տարափի տակ, Ադրբեջանի կողմից Ղարաբաղի խուլ շրջափակման պայմաններում: Իրենց իրավունքների համար պայքարող ժողովուրդների պատմության մեջ դա հազվադեպ երևույթ է, հատկապես կիրառված ճնշումների ծավալների փաստի առումով: Թվաքանակով ու ռազմատնտեսական ներուժով տասնյակ անգամ գերազանցող Ադրբեջանի հետ դեմ-հանդիման կանգնած Արցախի ժողովուրդը չվախեցավ հաշվեհարդարներից ու վստահաբար քվեարկեց հանուն անկախ պետականության: Եվ այժմ, 27 տարի անց, երբ Արցախն իրեն պարտադրված պատերազմում հաղթել ու հաստատել է իր անպարտելիությունը, առավել ևս՝ երբ ունի հուսալի պաշտպանական բանակ, աշխարհի հետ խոսում է հենց այդ կռվաններով: Ճշմարիտ է ասված՝ կարկտահարվածին անձրևով չես վախեցնի, և Ադրբեջանի ռազմատենչ կեցվածքը չի կարող անդրադառնալ մեր ազատ ինքնորոշման վրա:

Արդեն տասներեք տարի է՝ Արցախի Հանրապետությունն ունի իր Սահմանադրությունը, որն իրավամբ անվանվում է հաղթողների փաստաթուղթ: Սա է այն հիմքը, որի վրա պիտի խարսխվի ազատատենչ երկրի միջազգային ճանաչումը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱԽԸ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին Արցախի գիտական կենտրոնում անցկացվեց սեմինար-քննարկում՝ «Արցախը ինքնորոշման համար մղվող մարտերում. 1918-1920թթ.» խորագրով՝ նվիրված Արցախի պատմության ամենահերոսական էջերից մեկի՝ Մսմնայի ճակատամարտի 100-ամյակին: Այն կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարության և Արցախի գիտական կենտրոնի համատեղ ուժերով: Գիտական սեմինարը մեկնարկել էր Երևանում, շարունակվել Արցախում: Ստեփանակերտում տեղի ունեցած նիստին ներկա էին ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, Կենտրոնի գիտխորհրդի անդամները, պատմաբաններ, ուսանողներ: Սեմինարը ներածական խոսքով բացեց գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը: Ողջույնի խոսք ասաց ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, որը նշեց, որ 2018 թվականն արցախցիների և ընդհանրապես ողջ հայության համար նշանավորվել է մի շարք հոբելյաններով՝ Հայաստանի 1-ին հանրապետության 100-ամյակ, Ղարաբաղյան շարժման 30-ամյակ, Մսմնայի ճակատամարտի 100-ամյակ: Բազմաթիվ միջոցառումներ են տեղի ունեցել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախում և Սփյուռքում: Դրանք բոլորը կապված են հանուն պետականության վերականգնման ազգային-ազատագրական պայքարի գաղափարական նույն հիմքով: Այս գաղափարական կապն էր արտացոլում նաև ՀՀ ԳԱԱ նախաձեռնությամբ նոյեմբերի 27-ին Երևանում մեկնարկած այս թեմայով գիտական սեմինարը:

Ներկայացվեցին հետևյալ զեկուցումները. «Արցախի պետականության վերակերտմանն ուղղված երկրամասի քաղաքական ուժերի քայլերը և դրանց արդյունքները» (Վահրամ Բալայան), «Մսմնայի ճակատամարտի լուսաբանումը հայ պատմագրության մեջ» (Միհեր Հարությունյան), «Երկրամասի ազատագրական և ինքնորոշման համար պայքարում Արցախում ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների 1918-1920թթ. համագումարների որոշումներն ու ձեռնարկումները միջազգային իրավունքի լույսի ներքո» (Ալեքսանդր Մանասյան):

Սեմինար-քննարկմանը եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը:

Պատմական ակնարկ

Մսմնայի ճակատամարտին նվիրված հուշարձանը:

1918թ. աշնանը ծանր օրեր էր ապրում արցախահայությունը: Բաքումի պայմանագրի ստորագրումից հետո Թիֆլիսից Երևան փոխադրված հայկական կառավարությունը հայտնվել էր մի երկրում, որտեղ տիրում էին աղքատությունը, սովը, համաճարակները: Հայաստանի անփորձ ու անօգնական կառավարողները հազիվ թե ի վիճակի էին մտածելու Արցախի մասին, ուր մնաց թե կռվեին թուրք-թաթարական հրոսակախմբերի դեմ, որոնք նենգորեն մտադրվել էին հայերից ազատել Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտին: Սարդարապատի պարտությունից ու Բաքումի խորհրդաժողովից հետո թուրքերը եզրակացրին, որ իրենց համար անհնար կլինի հայերի հետ միանգամից հաշիվներ մաքրելը, ուրեմն՝ կարելի է բավարարվել վերոհիշյալ միջանցքը բացելով:

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը Օսմանյան Թուրքիայի՝ Ադրբեջան ներթափանցած գործակալներով լուրջ ծրագրեր ուներ Արցախն Ադրբեջանին բռնակցելու գործը շուտափույթ իրականացնելու ուղղությամբ: Ճակատագրական այդ պահին Շուշիում հրավիրվում է արցախահայության համագումար գավառի գյուղերի պատգամավորների մասնակցությամբ: Արդյունքում ստեղծվում է նոր՝ Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: Համագումարն ընդունում է Հռչակագիր, որի առանցքն էին կազմում ժողովրդի դիմադրության ու մարտունակության, ազգային ինքնորոշման ճանապարհով անկախ գոյության խնդիրները: Դրան հաջորդում է մյուս համագումարը 1918թ. սեպտեմբերի կեսերին, որտեղ ուշադրություն է դարձվում թուրք «կոմենդանտների» գործողություններին, կոչ է արվում ծայրագույն զգուշություն ցուցաբերել նրանց լարած թակարդներին կուլ չգնալու համար:

Ադրբեջանում իր հաղթանակը տոնող թուրքական զորքերի հրամանատար Նուրի փաշային, այնուամենայնիվ, հաջողվում է մտնել Շուշի՝ վերջնագիր ներկայացնելուց 14 օր անց: Թուրքերը կարծում էին, թե Շուշի մտնելը բավական է, որ տեր դառնան նախկին Շուշի գավառին, որի մեջ մտել էր նաև Սյունիք-Զանգեզուրը: Ի պատասխան՝ Զանգեզուրում կազմակերպվում է զորահավաք. ժողովուրդը պատրաստվում է ինքնապաշտպանության: Հոկտեմբերի երկրորդ կեսին թուրքական հրամանատարությունը որոշում է իրեն խեղդող պարանը կտրել բարակ տեղից. Կարյագինոյի (Ֆիզուլի) փաշայի անունից Դիզակի գավառին կարգադրում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը թուրք պարետին տված իր խրոխտ պատասխանում նշում է, որ չնայած գավառը փոքր է ու ոչ այնքան հրապուրիչ, բայց երբեք չի խոնարհվել բռնակալի առաջ և հիշեցնում է, թե ինչպես Եսայի Աբու Մուսե իշխանն իր Գտիչ վանքի մոտ ջարդեց արյունռուշտ Բուղա թուրք զորավարին: Իսկ եթե ուզում են ստուգել իր խոսքերի ճշմարտացիությունը, փորձեն զենքով գալ իրենց վրա:

Նման պատասխանից կատաղած՝ փաշան որոշեց քարուքանդ անել Դիզակի գավառը և այդ նպատակով օգնական զորք է կանչում Շուշիի կայազորից: Չորս հարյուր ընտիր զինվորներից կազմված մի ջոկատ, Շուշիից ելնելով, Վարանդայով պիտի գնար Հադրութի վրա: Զորաշարժի մանրամասները հայտնի են դառնում աշխարհազորայիններին, որոնք շարժվում են թուրքերին ընդառաջ՝ կեմրակուճեցի Ասլան Մուրադխանյանի գլխավորությամբ:

1918թ. հոկտեմբերի 18-ին Վարանդայի Մսմնա գյուղի մոտ՝ Զրատափեր կոչվող տեղամասում, աշխարհազորայինները գլխովին ջախջախում են թուրքերին:

(Ըստ Բ. Ուլուբաբյանի «Արցախի պատմություն» գրքի)

100-ԱՄՅԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՀԱԶԱՆԳՈՒՄ ԵՆ ԵՎ ՀԻՇԵՑՆՈՒՄ...

Նարինե ԱՂԱԲԱԼՅԱՆ, *ԱՀ ԿԳՍ նախարար*

- Թեմանխիստ արդիական է ոչ միայն անցած ճանապարհն օբյեկտիվորեն գնահատելու և վերաիմաստավորելու առումով, այլև ներկայի համար ընտրություն անելու տեսանկյունից: Հայկական պետականության կայացման կարևորագույն փուլ ենք թևակոխել ազգովի, և այս փուլում չափազանց կարևորվում է, թե ինչ հետևություններ ենք արել անցյալի դասերից, ինչքանով ենք գիտակցում պահի լրջությունը և յուրաքանչյուրիս պատասխանատվությունը: 1918թ. «Հուսաբեր» լրագրում Մսմնայի ճակատամարտի մասին հետևյալն է գրվել. «Ի տես այս խառնակ կացության՝ Ղարաբաղի հայության մեջ խոսում է առողջ բնազդը: Ժողովուրդը համախմբվում է իր մարմինների շուրջ և ձեռք զարկում ինքնապաշտպանության գործին»:

Թե՛ 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունները և թե՛ 20-րդ դարի 80-ականներին սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը հիշեցնում են մեզ մեր ուժեղ կողմերը՝ թշնամու առաջ երբեք գլուխ չխոնարհելու, ինքնակազմակերպվելու, միաբանվելու և ռազմարվեստի փայլուն դասեր տալու կարողությունը:

Միևնույն ժամանակ այդ իրադարձությունները մեզ ահազանգում և հիշեցնում են, թե ինչը կարող է խոցելի դարձնել մեզ՝ ներքին անհամաձայնությունն ու քաղաքական ուժերի պառակտումը: Ակնկալիքս է, որ գիտական այս սեմինարը ոչ միայն լույս կսփռի մեկդարյա հիշողություն ունեցող այդ անցքերի վրա, այլև կուրվագծի ապագայի տեսլականը և այն, թե ինչպես պետք է դիմագրավենք ներկա մարտահրավերներին:

ԱՐՑԱԽՅԱՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Միհեր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու*

- Գնալով աճում է հետաքրքրությունը Արցախի Վարանդա գավառի Մսմնա գյուղի մոտ 1918թ. հոկտեմբերին տեղի ունեցած ճակատամարտի նկատմամբ: Դա պայմանավորված է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունում թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանության համապատկերում այդ ճակատամարտի վերաիմաստավորման և Արցախում ռազմարվեստի զարգացման դինամիկայի արտածման անհրաժեշտությամբ:

☞ 2

ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՐՑԱԽԸ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՄԱՐՏԵՐՈՒՄ

1 Ժամանակին մամուլում եղել են հիմնականում տեղեկութային բնույթի արձագանքներ, որոնք թուրք զավթիչներին Անդրկովկասում ունեցած ռազմաքաղաքական ներկայության պայմաններում Արցախում հայ ազգաբնակչության ինքնապաշտպանական մարտերը, այդ թվում՝ Մսմնայի ճակատամարտը ներկայացրել են որպես փրկության փարոս և հայրենիքը պաշտպանելու օրինակ: Մսմնայի ճակատամարտին անդրադարձել են մի շարք հեղինակներ, որոնք, որպես կանոն, ընդամենն արձանագրել են որոշ տեսակետներ, բայց որևէ եզրակացություն, պատմագրության համար պիտանի հետևություն այդպես էլ չի արվել, և Մսմնայի ճակատամարտի 100-ամյակը լավագույն առիթ է՝ ընդհանրացնելու ամբողջ նյութը: Հեղինակների մի մասը Մսմնայի ճակատամարտը համարել է Մայիսյան հերոսամարտերի շարունակություն, Մսմնան՝ Արցախյան Սարդարապատ: Մսմնայի ճակատամարտն Արցախում հայ ռազմարվեստի զարգացման և թուրք զավթիչների դեմ պայքարի ավանդույթների շարունակման արտահայտություններից մեկն է:

Ռուբեն Սիմոնյանը գրել է. «Արցախահայության ինքնաբուխ հերոսամարտերի պսակը դարձավ Վարանդայի Մսմնա գյուղի մոտ հոկտեմբերի 18-ին տեղի ունեցած կռիվը, երբ թուրք-ադրբեջանական կանոնավոր գումարտակները ծանր պարտություն կրեցին հայերից»:

Անշուշտ, միաբանված ուժերով կարելի է ավելի նշանակալի հաղթանակներ տոնել: Ընդհանրացնելով ասենք, որ Մսմնայում թուրքական զորքերի ջախջախումը չեզոքացրեց թուրքական գնդի զորաշարժը դեպի Վարանդայի պաշտպանների թիկունք, որի նպատակն էր մի քանի օր տևած հրետանային նախապատրաստությունից հետո Կարյագինոյի կողմից թուրքական ուժերի հարձակմանն աջակցելը, որն ի դերև եղավ: Բավականին հարուստ նյութ կա, ուսումնասիրությունները պետք է շարունակվեն:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ՆՈՒՅՆՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՉԵՆՔ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, *ՀՀ ԱԺ փոխխոսնակ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

-Ցավոք, մեր դիվանագիտությունն ավելի շատ կենտրոնացել է ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի վրա, բայց իրականում մենք հանգիստ կարող ենք խոսել տարածքային ամբողջականության սկզբունքից, այսինքն՝ մեր հարցը կարող ենք լուծել և՛ ազգերի ինքնորոշման իրավունքով, և՛ տարածքային ամբողջականության սկզբունքով ու համաշխարհային հանրությանը ներկայացնել, որ մեր նախորդ ժամանակահատվածի պատմական իրադարձություններն էլ վկայում են այդ մասին: Վկայում են, որ մինչև մուսավաթական Ադրբեջանի ի հայտ գալը մենք Արցախում պետականություն ենք ունեցել, նույնիսկ մինչև Հայաստանի 1-ին հանրապետության ձևավորումը և կարող ենք հղում կատարել պատմական փաստերի վրա ու պաշտպանել մեր դատը:

Դժվարին այն պայմաններում քաղաքական ուժերը մեծ դերակատարում ունեցան: Ղարաբաղում մինչև խորհրդային իշխանություն հաստատվելը կուսակցությունների միջև գոյություն ունեին միայն փոխադարձ հարգանք և մտերմական հարաբերություններ, ու ամենափոքր ուժը մասնակցում էր հասարակական աշխատանքներին: Հենց այդ իշխանությունների համախորհուրդ ուժերով էլ հնարավորություն ստեղծվեց, որ 1917թ. դեկտեմբերին Արցախում ձևավորվի ազգային իշխանություն: 1917թ. դեկտեմբերի 23-ին Շուշիում կայացավ հայ քաղաքական ուժերի հավաք, և ստեղծվեց տեղական ուժերի մի մարմին, որն անվանվեց Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ, հետագայում՝ միջկուսակցական բյուրո, որն օժտված էր օրենսդիր և գործադիր ֆունկցիաներով: Անգամ վարչական առանձին միավորներ բաժանվեցին, ներկայացուցիչներ նշանակվեցին գավառում, և այսպես լիարժեք իշխանություն ձևավորվեց, որը մինչև 1918թ. Շուշիի մարտյան ողբերգական դեպքերը կարողացավ տիրություն անել ժողովրդին և պահել արցախցու պատիվն ու ինքնությունը:

Մենք աշխարհին պետք է ներկայացնենք, որ տարածքային ամբողջականության տեսակետից նույնպես խոցելի չենք հարցի լուծման համար:

100-ԱՄՅԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ, *ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, փ.գ.դ.*

- Չի կարելի Արցախյան գոյամարտը պատմության մի հանգրվանում՝ միայն 88-ից հետո քննարկել ու կտրել ամբողջական համատեքստից, որովհետև այդպիսի տարանջատումը թույլ չի տալիս ճիշտ գնահատել, ճիշտ իմաստավորել նաև ներկան: Ադրբեջան-Արցախ հակամարտության 3 փուլ կարելի է առանձնացնել՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային՝ 88-ից հետո: Երբ շեշտադրումը դնում ենք և փորձում խնդիրն իմաստավորել միայն վերջին 30 տարվա փորձի վրա, մեր հակառակորդը հնարավորություն է ստանում խեղել նույնիսկ այդ փուլի փաստերը: Իսկ երբ հարցը քննում ենք երեք փուլերի համատեքստում, պարզ լուծումներ ենք ստանում, քանի որ դրանք նույն հակամարտության փաստերն են: 100 տարվա ընթացքում չեն փոխվել ո՛չ հակամարտության կողմերը, ո՛չ դրանց նպատակները: Թուրքի նպատակը նույնն է՝ կապված Արցախի հետ, և Արցախը 100 տարի է՝ դիմակայում է: Երբ այդ խնդիրը ներկայացնում ենք որպես 100 տարվա հակամարտություն և 100 տարվա դիմակայություն, եվրոպացին և օտարն ընդհանրապես այլ կերպ են ընկալում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը, այլ կերպար է բացվում հակամարտության, քան եթե ասենք, որ դա սկսվել է ԽՍՀՄ-ի փլուզման ենթատեքստում:

Տարածքային ամբողջականության սկզբունքն այսօրվա ադրբեջանական պետության նկատմամբ չի կարելի կիրառել: Իսկ ազգերի ինքնորոշման սկզբունքը մեզ չի վերաբերում, որովհետև մի քանի անգամ են մեզ ճանաչել: Տարածքային ամբողջականության հարցերի հարթության վրա կա մեկ ուրիշ հարցադրում, որը խիստ կարևոր է մեզ համար. դա այն է, որ երբ Ադրբեջանական Հանրապետությունը հրաժարվեց լինել Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը, վերադարձավ 1918-1920 թվականներին: Բայց այդ դեպքում Լեռանային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է ադրբեջանական մեր օրյա հանրապետությանը իրավաբանորեն չպատկանող տարածքներում, քանի որ այն թվականներին մուսավաթական Ադրբեջան կոչվածը ոչ Նախիջևանում է իշխանություն ունեցել, ոչ Արցախում:

Այսպիսի հարցադրումների պայմաններում մեր խոսքը կարևորվում է: Մսմնան այդ խոսքերից մեկը պետք է լինի: Այսինքն՝ խնդրի կերպարի փոփոխության հարցն է դրվում: Եթե մենք լռենք, ո՞վ պետք է դրա մասին խոսի, ո՞վ պետք է ասի, որ 1918թ. մենք ինքնորոշվել ենք միջազգային իրավունքի ամենաանբասիր ձևով: Ո՞վ պետք է ասի, որ հակամարտությունը 100 տարեկան է, 100 տարվա պատերազմ է սա: Մե՛նք պետք է ասենք, և սա մեր բանակցությունների գնացողների կողմից պետք է յուրացվի, այլապես կարելի է տապալվել բանակցությունների ընթացքում:

1918թ., երբ մենք Արցախը հռչակել էինք Հայաստանի անկապտելի մաս և ստեղծել պետական մարմիններ, այստեղ անտերունչ տարածք է եղել. Ռուսաստան չկար, Ադրբեջան չի եղել: Մենք ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի ամենաբարձր կիրառությամբ այստեղ ստեղծել ենք իշխանության մարմիններ, և ինքնորոշման մեր առաջնային ակտը 1918թ. ավելի անվիճելի է եղել, քան 88-ին, 91-ին: Ինքնորոշման փաստը 1918թ. իր հզորությամբ իբրև փաստարկ անմրցակից է: Ահա թե ինչու պատմությունը պետք է ներկայացնել ոչ թե 88-ից, այլ 1918-ից: Մենք անընդհատ պետք է ասենք՝ 100-ամյա կոնֆլիկտ: Պետք է անընդհատ արծարծել նաև այն հարցը, որ Ադրբեջանը ցեղասպանության միտված և ցեղասպան պետություն է, ինչո՞ւ է այս փաստը բացակայում նրա քաղաքական կերպարում: Պետք է բոլոր ուղղություններով աշխատենք. այն հարցերը որ Մսմնայի կապակցությամբ բարձրացնում ենք, այդ խնդիրների մի դրվագն են միայն, մի մասը՝ հակամարտության ամբողջ կերպարը կերտելու:

ԹԵՄԱ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աշոտ ՂՈՒԼՅԱՆ, *ԱՀ ԱԺ նախագահ*

- Գիտական այս միջոցառման ամենակարևոր հետևությունն այն է, որ մենք թեմա ենք բացել երիտասարդ մասնագետների համար: Սա ամենօրյա հետազոտության և ուսումնասիրության թեմա է: Այս մասին պետք է ամեն օր խոսել, ոչ միայն ելույթների, զեկուցումների ձևով, այլև բանավեճի միջոցով: Ե՛վ 1918թ., և՛ 1988թ. թուրքական նույն էքսպանսիան էր Ղարաբաղում: 100 տարի հետո շատ քիչ բան է փոխվել մեր շրջապատում ու աշխարհագրական իրավիճակում: Կարող է՝ դերակատարներն են փոխվել, այդ նույն երկրների ղեկավարները, քաղաքական գիծն է թվացյալ փոխվել, բայց նպատակները նույնն են, և տարածաշրջանում կռիվները շարունակվում են: Մենք պետք է ճիշտ դասեր առնենք 100 տարի առաջ իրադարձություններից: 100 տարի է անցել, բայց ընդհանուր աշխարհաքաղաքական և տարածաշրջանում այս խաղաղության և կայունության հաստատման հանգամանքը մեծ հաշվով չի փոխվել: Այսօր էլ մենք այդ պայքարի ճանապարհին ենք: Եթե ճիշտ օգտագործեն մեր հնարավորությունները, մեր սեփական ուժերին ապավինելու կարևոր սկզբունքը, այսօրվա մարտահրավերներն ու սպառնալիքները նույնպես հնարավոր է հաղթահարել: Մենք այդ ճանապարհի մեծ մասն անցել ենք: Եվ այսօր էլ շատ կարևոր առավելություններ ունենք միջազգային իրավունքի հետ կապված, մեր գիտական միտքը ճիշտ կազմակերպելու առումով: Շատ կարևոր է, որ կարողանանք մեր փորձագիտական միտքը զարգացնել: Այս թեմաներն այսօրով չպետք է ավարտենք:

ՄԻՋԱՆԿՅԱԼ

Ալ. Մանասյանը պատմում է.

- Ես փնտրում էի հարյուրամյա հակամարտության տիպական օրինակ ու չէի գտնում, և այսօր Շահեն Աբրահամյանը պատմեց մի ցնցող դեպք.

«Ողջ խորհրդային տարիներին մեր տան դռան վերևի մասում մի տախտակ կար խփած, կարծում էինք՝ դռան ամրության համար է, դռան մաս է: Երբ սկսվեց Շարժումը, և արդեն հրացաններ էինք փնտրում, հայրս պոկեց այդ տախտակը: Այնտեղ «Մոսին» կար, և ասաց՝ տվեք տղաներին: Մեր տանը երկփողանի հրացան կա, դա էլ տվեք»:

Հեռուստալրագրող Լուսինե Ավանեսյանի պատմածից.

- Պապիցս փոքր ժամանակ լսել եմ, որ նրա եղբայր Արտեմը մասնակցել է Մսմնայի ճակատամարտին: Արցախյան շարժումը երբ սկսվեց, պապս, որը 80-ին մոտ էր, կանչեց հորս և ասաց, որ երբ իրենց տունը սարքում էին, Արտեմը Մսմնայի ճակատամարտից իր երկու «Մոսինը» թաքցրել է գերանների տակ: Գերանները որ քանդեք, կգտնեք: Տունը չենք քանդել, «Մոսին»-ները մինչև հիմա այնտեղ մնում են:

- 1918թ. կրակած «Մոսինը» մասնակցել է 88-ի Ազատամարտին: Եվ սա ցնցող օրինակ է, նյութական ապացույցն այն բանի, որ նույն պայքարն է,- ասաց Ալ. Մանասյանը:

Իսկ ԿԳՍ նախարարն առաջարկեց հանել «Մոսին»-ները և հանձնել թանգարանին:

ՀԵՐԻՔՆԱԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ցանկացած հերոսամարտ, Մսմնայի ճակատամարտն էլ ունի իր ավանդապատումը: Այն կապված է Հերիքնազ անունով

մի կնոջ հետ:

Պատմությունն այդ հետևյալն է. Շուշիից դեպի Դիզակ գնացող թուրքական զորքը Խոսրով բեյ Փոլադովի գլխավորությամբ հանկարծակի ճանապարհից շեղվում և մտնում է Մսմնա գյուղ: Ասում են՝ պատճառն այնտեղ գտնվող Հերիքնազն էր, որը Շուշին գրավելուց հետո ընտանիքով տեղափոխվել էր Մսմնայի իրենց ամառանոցային տունը՝ Փոլադովի ցանկությանը հագուրդ չտալու համար, որը սիրահետում էր նրան: Ասում են, որ Հերիքնազի մտահղացումն էր, որ թուրք զորավարը մտել էր Մսմնա: Հերիքնազը պայմանավորվել էր շրջակա գյուղերի երիտասարդների հետ՝ թուրքերին դարանակալել և ոչնչացնել: Նրա խորհրդով գյուղացիները հյուրընկալում են թուրքերին իրենց տներում, նրանց ուտեցնում-խմեցնում, իսկ առավոտյան իբր ապահով կածանով նրանց ճանապարհում: Դարանակալած հայ երիտասարդները հանկարծակի հարձակվում և զորքը կոտորում են:

Խմբագրության կողմից

Մսմնայի ճակատամարտից անցել է 100 տարի: Սերունդների հիշողությունից ոչ միայն չի ջնջվել Արցախի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ իրադարձությունը, այլև այն նորովի գնահատելու անհրաժեշտությունը կա:

Դա միայն պատմաբանների խնդիրը չէ, բոլորս պետք է մեր ներդրումն ունենանք: Ինչքա՜ն ընտանեկան պատմություններ կան Մսմնայի ճակատամարտի մասին: Մեր ընթերցողներին հորդորում ենք գրի առնել և ուղարկել խմբագրություն՝ տպագրելու: Դրանք կամբողջացնեն մեր պատմությունը:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Շնորհանդես

ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ

ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի, Մայր օրենքի՝ Սահմանադրության ընդունման տոների և Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միություն» ՀԿ-ն դեկտեմբերի 10-ին Ստեփանակերտի «Արմենիա» հյուրանոցի խորհրդակցությունների դահլիճում կազմակերպեց «Իրավագիտակցության հիմնախնդիրն Արցախի Հանրապետության հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում» գրքի շնորհանդեսը: Այն նվիրված է սովորողների իրավագիտակցության հիմնախնդրին, որի շրջանակներում համահեղինակներ Ավետիք Հարությունյանը, Սիրանուշ Պետիկյանը և Լուսինե Բարխուդարյանը ուսումնասիրություններ են կատարել Արցախի հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների իրավագիտակցության մակարդակի ձևավորման, այն բարձրացնելու և հարակից այլ հարցերի շուրջ:

Միջոցառումը վարող՝ ԱԵԳՄՄ անդամ Անուշ Դոլուխանյանը, ներկայացնելով գրքի բովանդակությունը, նշեց, որ նրանում սոցիոլոգիական հարցման եղանակով դպրոցներում և բուհերում իրականացված աշխատանքի արդյունքներն են, կատարված վերլուծությունը և հիմնախնդիրների լուծման ուղիների վերաբերյալ առաջարկությունները, ԱՀ-ում իրավական իրազեկվածության, իրավական գրագիտության և իրավագիտակցության բարձրացման հայեցակարգը:

Գրքի համահեղինակ՝ ԱԵԳՄՄ նախագահ Ավ. Հարությունյանն ասաց, որ գիրքն Արցախի գիտական կենտրոնում երկամյա գիտական թեմայի շրջանակներում իրականացված աշխատանքի արդյունք է և նվիրված է Արցախյան շարժման 30-ամյակին: Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են Արցախի բոլոր շրջկետրոններում, ընդգրկել են 35 դպրոց՝ 475 աշակերտ, դրանից բացի՝ 239 երիտասարդ: Հետազոտության արդյունքը պարզելու համար իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ թրենինգներ, դասընթացներ, 1-ին անգամ դպրոցական օլիմպիադա՝ «Սահմանադրություն և իրավունք» թեմայով, որը պետական մարմինների աջակցությամբ շարունակական կլինի: Ծրագրի իրականացման համար համագործակցել են տարբեր իրավական և գիտական շրջանակների հետ, մասնավորապես, անչափահասների հանցավորության հետ կապված՝ ոստիկանության, դպրոցների և համալսարանների: Քննարկվել են ուսանողների իրավաբանական կրթության խնդիրները, անդրադարձել ուսանողների իրավական ակտիվությանը, ինչպես նաև իրավական ժխտողականությանը: Գրքի համահեղինակները շատ ուրախ կլինեն, որ նմանատիպ ուսումնասիրություններ իրականացվեն հասարակության մյուս շերտերում:

Համահեղինակներից Լուսինե Բարխուդարյանը տեղեկացրեց, որ դա հիմնախնդրի շուրջ սոցիոլոգիական հարցում անցկացնելու առաջին փորձն է: Գրքում վերհանված խնդիրների մասին զրուցել են դպրոցներում «Հասարակագիտություն» դասավանդող ուսուցիչների հետ: Հետաքրքրական է, որ վերջիններս այն կարծիքին են, որ առարկայի նյութերը վերանայման կարիք ունեն: Համահեղինակների ներկայացրած առաջարկություններից մեկն էլ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը: Գաղտնիք չէ, որ առարկան դասավանդում են ոչ մասնագետներ:

Նրա փաստմամբ՝ մեր սովորողները բավական մեծ հետաքրքրություն ունեն իրավունքի նորմերի նկատմամբ, և ցանկալի է, որ գործող մասնագետների կողմից էլ միջոցներ գործադրվեն՝ բարձրացնելու ուսումնական ծրագրերով միջոցառումներ կազմակերպելու և մեր ազգաբնակչության իրավագիտակցության մակարդակը:

Գրքի վերաբերյալ արտահայտվեցին Արցախի իրավաբանական համայնքի ներկայացուցիչները:

ԱՀ գերագույն դատարանի նախկին նախագահ, վաստակավոր իրավաբան Վլադիմիր Հովսեփյանն ասաց, որ իրավագիտակցության հիմնախնդիրը ցանկացած հասարակության մեջ հրատապ է: Առանց իրավագիտակցության երկրում իրավական ճգնաժամ կլինի, ինչն էլ կհանգեցնի իրավական նիհիլիզմի, որից էլ՝ հանցագործությունների թվի աճի: Այս հարցն է, որ կարմիր թելի պես անցնում է ողջ գրքով: Հեղինակները քննության են առել դպրոցական միջավայրում իրավագիտակցության աստիճանը: Բայց և նկատել, որ իրավագիտակցությունը նույնիսկ ավելի վաղ է ծագում մարդու մոտ՝ նրա ծննդյան պահից, մոր կաթի հետ, երբ մայրը, դաստիարակելով երեխային, սովորեցնում է՝ ինչն է կարելի և ինչը չի կարելի: Նա բարձր գնահատեց հեղինակների տքնաջան աշխատանքը՝ նշելով, որ Արցախի իրավաբանական աղքատիկ գրադարանը հարստացավ ևս մեկ գրքով:

Գիրքն արժևորեց նաև ԱՀ նախկին դատավոր, իրավագիտության թեկնածու, վաստակավոր իրավաբան Գրետա Արզումանյանը՝ նշելով, որ հետազոտությունները կարող են դառնալ հետագա վերլուծությունների հիմք:

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ Անատոլի Թադևոսյանն ասաց, որ իրավագիտակցության բարձրացումը բոլորի շահերից է բխում՝ թե՛ հասարակության անդամների և թե՛ իրավակիրառողների: Իրավագիտակցության բարձր մակարդակը քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքն է:

Մենագրության շուրջ իրենց կարծիքը հայտնեցին ԱԵԳՄՄ անդամներ, հյուրեր:

Գիրքը լավ ուղեցույց է նաև ոչ մասնագետների համար:

Տես. լրատվություն

1988-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԸ

Իմ օրագրից

1988-ի նոյեմբերի մասին գրառումներումս նշել եմ, որ նոյեմբերի 7-ը՝ որպես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տարեդարձի օր, առաջին անգամ մենք չնշեցինք: Մեր քաղաքը հանգիստ էր թվում ու անշուք, նույնիսկ քաղբյուրոյի անդամներից որևէ մեկի նկարը չկար, այդ թվում՝ Մ.Գորբաչովի. զգացվում էր մեր անջատման շունչը: Այդ ամսիվ՝ նոյեմբերի 29-ին, Հայաստանի խորհրդայնացման օրվա մասին էլ մի բառ անգամ չհիշատակվեց: Այդ երկու իրադարձությունների չնշումն էր, որ ես օրագրումս ընդգծված գրել էի. «Զգացվում է անջատման շունչը»: Ինչևէ, թող ինձ ներեն նրանք, որոնց ծանձրույթ եմ պատճառում, բայց պարտավոր եմ գրել, քանի որ պատմության էջեր են, մեր ժողովրդի, հայ ժողովրդի մի «խենթ» զավակի՝ Արցախի, որն իր կամքին հակառակ, դեռ 5-րդ դարից անջատված, պարսիկ, արաբ, սելջուկ, մոնղոլ, թուրք նվաճողներից փրկվել, բայց Խորհրդային Ռուսաստանի (որին ես իմ գիտակցական կյանքում անչափ նվիրված էի) անհեռատես քայլով դեղնակտուց Ադրբեջանի մահաբեր գիրկը նետվեց և ահա 30 տարի է՝ փաստորեն նրանից անջատված, բայց քծուծի պես կպել է, բաց չի թողնում, դարաբաղցու ասած՝ «կերած տեղերը հեռում ա»: Այնպես որ, 1988-ի փետրվարին պոռթկաց մեր Շարժումը. այն ոչ միայն Մայր Հայաստանին միացման Շարժում էր, այլ նաև ազգային-ազատագրական նորովի շարժում, հեղափոխություն էր նոր ձևի, նոր բովանդակությամբ: Պետք է ամբողջ աշխարհը հասկանա, որ Ղարաբաղյան շարժումը համաշխարհային հեղափոխություն էր և սկսած օրից մինչև հիմա էլ ցույց է տալիս, որ Անդրկովկասը տվել է մի վիժվածք՝ իրանական Ադրբեջանի անունը պղծող շինծու Ադրբեջան, որի ղեկավարները ոտից գլուխ ստերով հարստացել ու չեն կշտացել, այլ ձգտում են «Արցախ աշխարհ» յուղալի թիքան (կտորը) կուլ տալ: Ցավոք, աշխարհի տերերը, մեծ տերությունները այդ չեն նկատում կամ էլ նկատում են, բայց չտեսնելու են տալիս: Այնպես որ, ստիպված եմ ներկայացնել նաև 1988թ. Դեկտեմբերը՝ դաժան Դեկտեմբերը...

1-4 դեկտեմբեր, 1988թ.: Մեր ժողովրդի ամբողջ ուշադրությունն ուղղված է Ա.Վոլսկու ելույթի և Ադրբեջանի ու Հայաստանի մի խումբ դեպուտատների հետ Մ.Գորբաչովի հանդիպմանը մեր ռեգիոնում իրադրությունը նորմալացնելու շուրջ:

Չգիտեմ ինչու՝ վերևում (Մոսկվայում) չեն հասկանում, որ մեր ռեգիոնում նորմալացման միակ լուծումը ԼՂԻՄ-ի անջատումն է Ադր.ՍՍՀ-ից, ավելի ճիշտ՝ Ադրբեջանից, որը Սումգայիթով ցույց է տվել իր իսկական պատկերը: Մինչդեռ Գորբաչովը պնդում է, որ տերիտորիան մնում է Ադր.ՍՍՀ կազմում: Չգիտեմ ինչու՝ ադրբեջանցիները իրենց ուզածը կարողանում են անել, իսկ մենք...

Թոփխանայում արդեն աշխատանքները դադարեցվել են: Մանուչարովը մի խումբ ակտիվիստների հետ ձերբակալվել է հանգստաքարերի (գերեզմանաքարերի) պատրաստման ընթացքում «յուրացումներ» կատարելու մեղադրանքով: Ադրբեջանից Հայաստան են փախել մոտ 70 հազ. հայեր):

2.12.1988թ.: «Կոմունիստ» և «Սովետական Ղարաբաղ» թերթերում հրապարակվել են «Հանդիպում ՍՄԿԿ Կենտկոմում» (ՏԱՍՍ) և ՍՍՀՄ ԳՍ որոշումը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և նրա շուրջ իրադարձությունների մասին մի խումբ դեպուտատների հարցապնդման առթիվ որոշումը» (Մոսկվա, Կրեմլ, դեկտեմբերի 1, 1988թ.), որը ստորագրված է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահ Մ.Գորբաչովի կողմից: Օրագրիս կցում եմ որոշման տեքստը, որն իրենից ոչինչ չի ներկայացնում. այն բաղկացած է չորս կետից և այսօր՝ 30 տարի հետո, ընթերցում եմ ու ընթերցողներին ներկայացնում որոշման 4-րդ կետը.

«ՍՍՀՄ ԳՍ-ն դիմում է Հայաստանի ու Ադրբեջանի աշխատավորներին՝ ջերմորեն կոչ անելով ցուցաբերել իմաստություն և զսպվածություն, մի կողմ դնել փոխադարձ վիրավորանքներն ու մեղադրանքները, վերահաստատել ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների աշխատանքի ռիթմը, բոլոր ուժերը գործադրել, որ ցանկացած ազգության սովետական քաղաքացի երկու հանրապետությունների տարածքում իրեն զգա վերակառուցման այն մեծ գործի լիիրավ և իրավահավասար մասնակիցը, որ կատարում է սովետական ժողովուրդը» (ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ.Գորբաչով):

Այս տեքստն այսօր ընթերցում եմ և համեմատում ԵԱՀԿ Մինսկի համանախագահների արդեն քանիերորդ հայտարարությունների հետ և ոչ մի տարբերություն չեմ գտնում ու կրկին և դարձյալ համոզվում եմ, որ չափազանց ճիշտ ենք վարվել, որ մեր հարցը մենք ենք լուծել 1991թ. սեպտեմբերի 2-ի մեր Հռչակագրով և նույն թվի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով: Այսօր էլ մեր բախտի որոշողը մենք պետք է լինենք:

5.12.1988թ.: Լուրեր են տարածվել, թե ԼՂԻՄ-ի հարցը կլուծվի դրականորեն, որ Ա.Մանուչարովը ժապավեն ունի, որում գրված է, որ Բ.Կևորկովը իրենից պահանջել է ամսական 50 հազ. ռուբլի (զարմանում եմ, մի՞թե դա մեր հարցի լուծմանը կնպաստի, ընդհակառակը...): Այդ օրը Բաքվում Լենինի անվան հրապարակից ադրբեջանցիներին ուժով դուրս են քշել՝ սանիտարական մաքրման նպատակով և երեկոյան ռադիոյով հայտարարել. «Չնայած այն լուրերին, որ հրապարակում սպանվածներ կան, սուտ է»: Մտածում եմ՝ իսկ Բաքուն ե՞րբ է ճիշտն ասել... Այսօր երեկոյան «Լրաբեր»-ը հայտնեց, որ Հայաստանի 16 շրջաններում պարետային ժամ է մտցվում... Մեր վիճակն ավելի է սրվում. Բաքվում սանիտարական մաքրում, իսկ մեզ մոտ՝ պարետային ժամ...

7.12.1988թ.: Մայր Հայաստանն անասելի ողբերգություն ապրեց: Լենինականում, Սպիտակում, Կիրովականում, Ստեփանակերտում և այլ վայրերում օրը ցերեկով ժամը 11-ն անց 40 րոպեին դաժան երկրաշարժ եղավ: 900 հազարանոց բնակչությամբ տարածքն ավերվեց, հողի տակ ընկավ դպրոցական պարապմունքների պահին, մսուրմանկապարտեզների, ֆաբրիկա-գործարանների աշխատանքների պահին... Մայր Հայաստանը ողբի մեջ է: Կարծես մեր գլխին սառը ջուր լցվեց: Ամենուրեք սուգ ու լաց է: Օ՜, ինչպիսի՜ չտեսնված դաժանություն է մեր ժողովրդի նկատմամբ... Արդեն լուրեր են տարածվում, որ զոհերի թիվը 20-25 հազարից անցնում է:

8.12.1988թ.: Դեկտեմբերի 9-ը և 10-ը համազգային սուգ հայտարարվեց:

9.12.1988թ.: Երեկոյան «Время»-ն հաղորդեց, որ դեկտեմբերի 10-ը ամբողջ Սովետական Միությունում սգո օր է հայտարարվում, խոնարհել պետական բոլոր դրոշները:

10.12.1988թ.: ՍՍՀՄ ավելի քան 200 միլիոնանոց բնակչությունը սգում է, խոնարհվել են բոլոր դրոշները, իսկ Ադրբեջանի հեռուստատեսությամբ ծիծաղելի մուլտֆիլմեր են ցուցադրվում, լուրեր են տարածվում, որ նրանք խնջույքներ են կազմակերպում, իրար շնորհավորում տեղի ունեցածի առթիվ, նույնիսկ այնքան անպատկառ են, որ զանգում են հայերին ու շնորհավորում... Ինչպիսի՜ լկտիություն...

Այդ օրը ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովը, որը դադարեցրել էր իր այցը Կուբա և Անգլիա, վերադարձավ Մոսկվա, այնտեղից՝ Հայաստան և առանց Երևան մտնելու եղավ երկրաշարժի վայրում: Ասում են մի պառավ կին, որին հանել են փլատակներից, տեսնելով Գորբաչովին, հարցրել է. «Հը, Ղարաբաղի հարցը ի՞նչ եղավ», իսկ Գորբաչովի առանց այն էլ սակավ մազերը ղարաբաղցու ասած՝ դիք-դիք կանգնեցին: Երբ նա վերադառնում էր Մոսկվա, օդանավակայանում պատասխանեց լրագրողների հարցերին. երևում է «Ղարաբաղ» կոմիտեն իրեն գռեհկորեն է դրսևորել:

Երկրաշարժը սարսափելի երևույթ է, բայց այն ցույց տվեց, թե ՍՍՀՄ-ը ինչ հարգանք ունի հայ ժողովրդի նկատմամբ, ոչ միայն ՍՍՀՄ-ը, այլ նաև ամբողջ աշխարհը: Այդ օրերին ամեն տեղից օգնություն էր ցուցաբերվում հայ ժողովրդին, այդ օգնությունը կազմակերպելու և ղեկավարելու նպատակով ստեղծվեց պետական հանձնաժողով ԽՍՀՄ Մինիստրի սովետի նախագահ Նիկոլայ Ռիժկովի գլխավորությամբ: (Այսօր էլ իմ աչքի առաջ է նրա արտասվալից աչքերով դեմքը): Որքա՜ն սրտացավ էր... Այդ ծանր օրերին իր օգնության ձեռքն էր մեկնել նաև Արցախ աշխարհը: Քանի՜-քանի ջոկատներ են գնացել աղետի գոտի: Մենք՝ մարզի ուսուցիչներս, մեր ամսական աշխատավարձի 35-50%-ը, բանվորները՝ 4-5 օրվա աշխատավարձը փոխանցեցինք օգնության ֆոնդին, իսկ գյուղացիությունը բազմատեսակ մթերքներով օգնեց Մայր Հայաստանին: Մեր կողմից ուղարկված գումարն անցնում էր 3 միլիոն ռուբլուց: Մենք սրտանց կիսում ենք Մայր Հայաստանի վիշտը և միայն նրան օգնելու մասին ենք մտածում, իսկ Ադրբեջանը դարձյալ քշում է հայերին, կոտորածներ կազմակերպում Բաքվում, Կիրովաբադում և այլուր, ոչնչացնում է այն, ինչ որ հայկական է՝ մոռանալով, որ հայերի շնորհիվ են գլուխ բարձրացրել:

17.12.1988թ.: ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար . Ս.Հարությունյանը ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ և իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր ինչ-որ չափով իրենց օգնությունն են ցուցաբերում հայ ժողովրդին, խարազանեց «Ղարաբաղ» կոմիտեի լիդերներին, նշեց, որ իր արյունն է տվել նաև Ֆիդել Կաստրոն, բայց, չգիտես ինչու, չնշեց նաև Նիկարագուայի պրեզիդենտի անունը, որն առաջիններից մեկն էր, որ իր արյունը տվեց մեր հայերին: Ուրախացա, որ հայտարարվեց այն մասին, թե սուտ է, որ իբր որոշ հայեր տուժած շրջան են գնացել գողության ու թալանի համար, որ 41 հոգի ձերբակալվել են, և 39 դեպքերի համար քրեական գործ է բացված:

19.12.1988թ.: «Պրավդա»-ի այդ օրվա համարում վրդովմունքով ծանոթացա «Диалог в армянском переулке» Ն.Սիտեժևի հոդվածին, որտեղ սևով սպիտակի վրա գրված է. «Удивляемся вашей предусматрительности, которая спасла азербайджанское население в Армении от божьей кары, обрушившейся на вашу голову. Целую. Азер»: Սա անանուն հեռագիր է, բայց իրական փաստ է, որ տպագրված է ՍՄԿԿ ԿԿ օրգան «Պրավդա»-ում, այն նույն ԿԿ-ի օրգան, որը մեզ կոչ է անում համերաշխ ապրել՝ չգիտակցելով այն փաստը, որ մենք համերաշխ միշտ էլ եղել ենք, բայց մյուս կողմը դա չարաշահել է: Մենք ադրբեջանցիներից ոչինչ չենք պահանջում, այլ մեր ապրելու, ազատ ապրելու ցանկությունն ենք հայտնում, որպես մարդ ապրելու իրավունքն ենք ուզում վերականգնել, մեր հողի վրա, մեր մայր ժողովրդի հետ ապրելու իրավունքն ենք ուզում, իսկ նրանք...

20.12.1988թ.: Երկրաշարժի վայրում գտնվող պետական հանձնաժողովի նախագահ Ն.Ռիժկովը մեկնեց Մոսկվա՝ համարելով աշխատանքի առաջին փուլի ավարտ և երկրորդ փուլի սկիզբ: Վեզիրովը շարունակում է դերասանություն անել իր սուտ հայտարարություններով, թե իբր հայերը վերադառնում են Բաքու, միևնույն ժամանակ արգելում է որևէ մեկին Ստեփանակերտ մեկնել: Լուր ստացանք, որ Ղարաբաղի պատվիրակությունը 5 հոգի կազմով (Բ.Դադամյան, Պետրոսյան, Սոբոլև և ուրիշներ) եղել են Ն.Ռիժկովի մոտ և մանրամասնորեն ներկայացրել մեր պրոբլեմը: ՍՍՀՄ ղեկավարը դրականորեն է արձագանքել: Այդ օրվանից քաղաքում հանգստություն սկսեց տիրել, և մինչև 1989թ. հունվարի 10-ն ընկած ժամանակաշրջանն արցախահայությունը երկրաշարժի հոգսերով էր զբաղված, արդեն 4 մլն ռուբլի է հավաքվել և ուղարկվել Մայր Հայաստան: Նոր տարվա նախապատրաստական աշխատանք չէր տարվում, հիշում եմ՝ փոքր ժամանակ, նույնիսկ Հայրենական պատերազմի տարիներին, չնայած օրվա հացին կարոտ էինք, բայց մեր ժողովուրդը Նոր տարին նշում էր, իսկ այսօր կարծես թե Նոր տարին չի մոտենում և չկա... Ի՞նչ արած...

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող

ԱՎՈ

ՀԱՎԵՐԺ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

Հայ ժողովուրդը Մոնթե-Ավոյին վաղուց է առասպելացրել: Նա ամենից առաջ ազգի մեծագույն պարգևն է, որը եկավ՝ իր հետ բերելով մարդկայինի ու հերոսականի սեփական վառ օրինակը: Նրա շուրթերից հնչած յուրաքանչյուր բառ պատգամ է, կարգախոս, որով մեծանում և դաստիարակվում են թոթովախոս մանուկն ու դպրոցականը, որով կապրեն և կառաջնորդվեն ազգի հետագա բոլոր սերունդները:

ԼՂՀ ՊԲ Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ՀՀ ազգային հերոս, ԼՂՀ «Ոսկե արծիվ» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանների ասպետ, հրապարակախոս, հնագետ, փոխգնդապետ Մոնթե Մելքոնյանի ծննդյան 61-րդ տարեդարձի կապակցությամբ նոյեմբերի 26-ին Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում կազմակերպվեց ռազմահայրենասիրական, գրական-գեղարվեստական ու պատմական հուշ-ցերեկույթ: Այն կրում էր «Փյունիկված հայորդին՝ հայրենիքի ողջակեզ...» խորհրդաստ խորագիրը:

Միջոցառմանը ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Միհեր Օհանյանը, աշխատակազմի բաժինների պատասխանատուներ, բարերար, Ճարտարի «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության տնօրեն Աշոտ Ջիվանյանի որդի Արթուր Ջիվանյանը և եղբայր Արտյոմ Ջիվանյանը, հյուրեր:

Ցերեկույթը վարողներ՝ Ն զորամասի զինծառայող Թովմաս Թովմասյանի և դպրոցի աշակերտուհի Աստղիկ Ասրիբաբայանի կողմից ներկայացվեցին գաղափարի զինվորի՝ Մոնթե Մելքոնյանի կյանքը, մարտական ուղին և, առհասարակ, Մոնթե Մելքոնյան երևույթը:

Ներկաների հուզմունքն ու հպարտությունը դպրոցի աշակերտների ջերմ ու արտահայտիչ արտասանությունների, հերոս Ավոյին ձոնված երախտագիտության խոսքերի և ռազմահայրենասիրական երգերի ելևէջներին էին միախառնվել: Հոգեցունց, ոգեշնչման խոսքերի ազդեցությամբ հանդիսատեսն առավել շատ սիրեց ու գնահատեց հայրենիքը, ընկալեց լեգենդար հերոսի թևավոր մտքերի ենթատեքստը:

Ծննդով Ճարտարից, ռուսաստանաբնակ բարերար Աշոտ Ջիվանյանն արդեն որերորդ անգամ հովանավորում է Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրվան նվիրված՝ Մարտունու շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև կազմակերպվող ֆուտբոլի առաջնությունը: Այս տարի առաջնությանն ընդգրկված էր 22 թիմ: Այն անց է կացվել երկու տարիքային խմբերում՝ մինչև 9-րդ դասարանների և 10-12-րդ դասարանների աշակերտների միջև: Արդյունքում առաջին տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Մարտունու հ.1 դպրոցի թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար՝ Ճարտարի հ.2 և Մարտունու հ.2 դպրոցների թիմերը, երկրորդ տարիքային խմբում 1-ին տեղը՝ Ճարտարի հ.1, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար՝ Մարտունու հ.1 և Ճարտարի հ.5 դպրոցների թիմերը: Առաջնակարգ տեղեր գրաված թիմերի մարզիկներն ու նրանց մարզիչները «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության կողմից պարգևատրվեցին մեդալներով, պատվոգրերով, դրամական գումարով, իսկ 1-ին տեղ գրաված՝ նաև գավաթներով, որոնք հանձնեցին շրջվարչակազմի ղեկավար Միհեր Օհանյանը, բարերարի որդի Արթուր Ջիվանյանը և շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի սպորտի գծով գլխավոր մասնագետ Նորայր Աղաջանյանը:

Հուշ-ցերեկույթը շատ հետաքրքիր ու տրամադրող էր. դահլիճի լռությունը խոսուն էր... Միջոցառումը փաստեց այն հանգամանքը, որ Ավոն սերունդների հետ միշտ կապի մեջ է, լեգենդն ապրում է մեր դպրոցականների մեջ իր ոգեղեն ներկայությամբ, կանչող և պարտադրող խոսքերով: Ավոն սովորական մահկանացու չէ, այլ մի ամբողջ համապարփակ աշխարհ, որն իր վերաբերմունքով, գործելակերպով նոր իմաստ ու բովանդակություն հաղորդեց հայրենասիրություն, արդարություն, ազնվություն, նվիրվածություն արժեքներին՝ դրանք վերածելով վարքի ու սկզբունքի:

Ասում են՝ գնահատական տալու հարցում արցախցիները շատ խիստ են ու ժլատ. եթե նրանք երդվում են մեկի անունով, ուրեմն նա սուրբ է: Ավոն այն բացառիկներից է, ում հասցեին արցախցիների մեծարման խոսքերն անսպառ են, նրա անունով երդվում են փոքրից մեծ: Մարտունիում ամեն ոք ունի Ավոյի մասին պատմող իր լեգենդը, յուրաքանչյուրը յուրովի է բարության, արդարության, հայրենասիրության դասեր քաղում նրանից:

Ավո՛, դու հավետ մեզ հետ ես՝ մեր սրտերում, մեր հուշերում:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի

ԳԱՂԱՓԱՐԻ ԶԻՆՎՈՐԸ

Օրերս «Գրիգոր Նարեկացի» համալսարանում պատմության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված ուրարտագետ, Հայ Դատի նվիրյալ, ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 61-րդ տարեդարձին:

Նարեկացիականները յուրովի նշեցին օրը: Ուսանողներ Հ. Ղազարյանը, Ռ. Քամալյանը, Է. Գևորգյանը, Դ. Իսախանյանը, Հ. Միրզոյանը, Մ. Կարապետյանը կունգֆու, կիոկուշին, ուշու մարզաձևերում միջազգային տարբեր մրցաշարերում ձեռք բերած հաղթանակները նվիրեցին լեգենդար հերոսին: Այդ օրը նրանք պարգևատրվեցին պատվոգրերով:

Համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանն անձամբ ճանաչել ու առիթ է ունեցել շփվել լեգենդար հերոսի հետ: «Ինձ հանդիպած լավ մարդկանց մեջ Մոնթեն լավագույնն էր: Նա չուներ մարդկային այն թուլությունները, որ հատուկ էին մեր մեծերին: Ավոն պետք է դառնա պաշտամունք՝ առանց պաշտամունք դառնալու»,- իր ելույթում նշեց Վ. Հակոբյանը:

Հիշարժան այդ օրը գեղարվեստական կատարումներով հանդես եկան ՊԲ տանկային բրիգադի զինվորներն ու ուսանողները: Ելույթ ունեցան դասախոսներ Սոնա Համբարձումյանը, Գեղամ Միքայելյանը, Ալիկ Սարգսյանը: Միջոցառումն առիթ էր հավաքվելու հերոսի նկարի շուրջը և խնկարկելու ոչ միայն նրա, այլև մեր բոլոր սուրբ նահատակների հիշատակը:

Միջոցառման վերջում ցուցադրվեց հերոսին նվիրված տեսաֆիլմ՝ «Գաղափարի զինվորը»:

Համիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ

Նոյեմբերը Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում հայրենասիրության և արիության ընդօրինակման դասերի ամիս էր: Դպրոցի տնօրինության կողմից կազմակերպվել էին միջոցառումներ՝ նվիրված Ազգային հերոս Մ.Մելքոնյանի հիշատակին, իսկ 12-րդ դասարանցիներն Արսեն Գալստյանի նախաձեռնությամբ հանդիսավոր նշեցին ազգի նորագույն պատմության նվիրյալ զավակ, հերոս Ռոբերտ Աբաջյանի ծննդյան 22-ամյակը: Նման հերոսների մեծարումն ու վերհիշումը, խոնարհումն ու խնկարկումն աճող սերդի մասնակցությամբ ճշմարիտ հայրենապաշտության գաղափարի սերմանումն է: Գարեգին Նժդեհը մի առիթով ասել է. «Փոքր ազգերը ավելի քան պետք է լինեն հայրենապաշտ»: Իսկ նոյեմբերի 24-ին դպրոցի փոխտնօրեն Կարինե Զաքարյանի նախաձեռնությամբ ամփոփվեց միջոցառումների շարքը:

- Այս օրերին Արցախի գրեթե բոլոր կրթօջախներում նշում են Արցախյան գոյապայքարի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ, ՀՀ ազգային հերոս Մոնթե Չարլզի Մելքոնյանի ծննդյան օրը: Ազգի նվիրյալ զավակը կդառնար 61 տարեկան: Դեռ մանկուց արյան կանչով նա զգում էր, որ Տիրոջ կողմից մարդ արարածին տրված չէ ավելի մեծ երջանկություն, քան գիտակցված մահը՝ հանուն հայրենիքի: Այդպես լինում է միայն մի դեպքում, երբ մարդն ու հայրենիքը մի ամբողջություն են՝ տարրալուծված միմյանց մեջ: Դեռևս պատանի տարիներին էր Մոնթեն հասկացել, որ հայրենիքը լոկ տարածք չէ, այն նաև կյանք է, հոգի, մարմին, պատիվ, պատասխանատվություն… Հայրենիքից ֆիզիկապես հեռու ծնված ու ապրած Մոնթեն անվերապահորեն միաձուլված էր հայրենիքին: Աշխարհի վրա ապրող յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ, ցեղ պիտի երազեր Մոնթեի տեսակի մի քանի որդի ունենալ, քանզի դա նրանց անպարտ մնալու և պատվով ապրելու բացառիկ երաշխիքներից է: Դժվար է երևակայել հպարտության ավելի մեծ զգացում, քան այն, երբ քո ազգակիցը Մոնթեի տեսակն է: Հայ ժողովրդի կյանքն աներկբայորեն իմաստավորված է նաև մոնթեների գոյությամբ,- բացման իր խոսքում ասաց Կ. Զաքարյանը:

Այնուհետև ելույթ ունեցան դպրոցի աշակերտները: Իրենց անզուգական երգ ու պարով, հայրենասիրական ասմունքով նրանք վերապրեցին ու արժևորեցին օրվա խորհուրդը: Մեծ էր հուզմունքն ու հպարտությունը: Հուզված էինք, քանի որ Մոնթեն ֆիզիկապես մեզ հետ չէ, հպարտ էինք, որովհետև մենք ենք Մոնթեն, նա մեր ազգային դիմագիծն է: Նա եկավ չարենցյան հեռուներից… Եկավ անպատվությունից փրկելու և անարատ պահելու իր նախնիների սրբություն սրբոց երկիրը: Եկավ փրկելու հայի պատիվը: Մեղավորի պես եկավ, քանզի չէր կարող փրկել Հայոց մեծ եղեռնի ժամանակ զոհված մեկուկես միլիոն ազգակիցներին: Զոհի զրահը հագին, միտքը հառած Աստվածներին, հոգին լցված նախնիների կանչով՝ եկավ իր տուրքը տալու բոլոր ժամանակների հայերին: Եկավ սրբացնելու Հայոց հողը: Եկավ, որ իր արյունը ներարկի և նորովի պարտություն բերի Հայոց վիրավոր հողին: Եկավ կռվելու և տղաներին վարակեց այդ արվեստով: Նրա ներկայությունը արևի ճառագայթների նման թափանցեց ու ջերմացրեց ողջ հայության սիրտը և ոգու մեծ ուժ տվեց մեր հերոսական ժողովրդին՝ ճակատագրի հեգնանքով չափազանց հաճախ բաժին հասած հերթական կռիվը հաղթելու համար: Նա հրաշալի գիտեր, որ ցանկացած

պատերազմում հաղթանակի գրավականը ոգին է: Տերն ամեն ծնունդ իմաստավորում է յուրովի առաքելությամբ, և Մոնթեն հաստատ տեղյակ էր դրան ու պարտավորված էր սրբորեն կատարել իր առաքելությունը…

Մոնթեն եկավ հերոսության, հպարտության, պարկեշտության, բարության օրինակ ծառայելու բոլորիս: Եկավ մեզ լցնելու իր կերպարով, մաքրելու և մտածել տալու անցյալի, ներկայի ու ապագայի մասին՝ որպես մի ամբողջություն: Եկավ սովորեցնելու, թե ինչպես կարելի է զսպել և մարդկային ես-ը փրկել սանձարձակումից: Նա իր օրինակով պարզորոշ մատուցում էր բոլոր մարդկանց հավասար լինելու խորհուրդը և անհանդուրժողաբար անարգանքի սյունին գամում, պախարակում թեկուզ մեկ մարդու՝ մյուսների նկատմամբ բարձր երևալու մեղսալից արարքը: Նա պատերազմի ժամանակ իր պահվածքով մեզ սովորեցնում էր հասկանալ խաղաղության գինը, ամեն ծառ ու թփի համար պայքարով՝ հայրենիքի գինը, մարդկանց հետ հարաբերվելու կերպով՝ մարդու արժեքը: Մոնթեի հրեղեն քայլերի շարանը մայր հողի վրա անգնահատելի հետքեր է արարել, որոնք գոտեպնդելու են սերունդներին Տիրոջ կողմից ընծայված արևային Հայոց երկիրն ամուր պահելու, ուրիշների կողքին պատվով ապրելու և երկիրը հպարտորեն առաջ տանելու առաքելությամբ: Հերոսության, բարության, համեստության, նվիրվածության, հավատարմության այն մեծ պաշարը, որ Մոնթեն շաղ տվեց Արցախ աշխարհում, հենց այն հավերժող սերմն է, որ պետք է ծիլեր տա յուրաքանչյուր հայի հոգում: Պատասխանատվությունը շատ մեծ է: Մոնթեն դանդաղ եկավ, բայց կայծակնային վարակով մաքրեց մեզ և գնաց երկինք՝ իր խոհեմ, զգոն հայացքով հսկելու և պահապան լինելու մեր անվտանգ ու հաղթական երթին:

Միջոցառման երկրորդ մասով դպրոցի ռազմագիտության ուսուցիչ Միհեր Աղաջանյանը կազմակերպել էր ռազմամարզական մրցույթ բարձր դասարանցիների ներգրավմամբ:

Վերջում տնօրեն Ժ. Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին, աշակերտներին և կոչ արեց հայրենիքը սիրել այնպես, ինչպես սիրել են մեր ազգի նվիրյալները:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ
Քերթի միջն. դպրոցի նախադպրոցական խմբի դաստիարակ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՍԱԿԱՎԱԿԱԶՄ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Աշակերտակենտրոն ուսուցման դրույթներից բխող դասապլան՝ նախատեսված 2-րդ և 4-րդ համակազմ դասարանների համար

	Երկրորդ դասարան	Չորրորդ դասարան
Դասի թեման	**հին՝** Գրիմ եղբայրներ **«Ծեր պապն ու թոռը»,** 1-ին մաս **նոր՝** Գրիմ եղբայրներ **«Ծեր պապն ու թոռը»,** 2-րդ մաս	**հին՝** Գ. Էմին **«Ա՜խ, այս Մասիսը»** **նոր՝** Ս. Կապուտիկյան **«Հայրենիք»**
Դասի նպատակը	**Աշակերտները** - բնագիրը կբաժանեն պարբերությունների, կորոշեն հիմնական միտքը և կհամապատասխանեցնեն տրված պլանին *(աշխատանք տեքստի շուրջ).* - կընթերցեն բնագիրը՝ պահպանելով կարդալու որակական բոլոր հատկանիշները (ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ և արագ) *(կարդալու հմտություններ).* - մեկնաբանել տրված արտահայտությունները և դրանց շուրջ ստեղծել կապակցված բնագիր՝ զարգացնելով երևակայական մտածողությունը *(բառային աշխատանք).* - կընդլայնեն իրենց ճանաչողական մտածողությունը, - խմբերում աշխատելիս կլսեն ընկերների կարծիքները քննարկվող հարցի վերաբերյալ, ակտիվություն կդրսևորեն դրանք ամբողջացնելու, ընդհանրացնելու հարցում *(գիտելիքների լիակատար յուրացման տեխնոլոգիայի բաղադրամաս).* - կվերլուծեն հեքիաթի առաջին մասը և դատողություններ կանեն ընթերցած պատմվածքում ծավալվող գործողությունների հիմնական ընթացքի մասին *(աշխատանք տեքստի շուրջ).* - կթվարկեն հերոսներին բնութագրող բառերը, դրանք կհաստատեն ստեղծագործության փաստերով *(գրական տարրական գիտելիքներ).* - կվերարտադրեն բնագրի բովանդակությունը՝ վերլուծելով պատմվածքում պատկերված իրավիճակը, կկատարեն եզրակացություններ *(աշխատանք տեքստի շուրջ՝ Վերարտադրողական, վերլուծական և քննադատական պատասխաններ պահանջող հարցադրումներով).* - պատմվածքի բովանդակությունը կհամեմատեն նույն թեմայի անցած պատմվածքների բովանդակության հետ *(գրական տարրական գիտելիքներ.* - կկարողանան ասացվածքի բովանդակությունը կապել պատմվածքի բովանդակության հետ. - կկարողանան գործնականում տարբերակել իրապատում հեքիաթը *(գրական տարրական գիտելիքներ).* - կհորինեն հեքիաթի շարունակությունը՝ երևակայության միջոցով նոր լուծում գտնելով բնագրում ներկայացված իրավիճակի համար *(իրադրությունային խաղ՝ ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրմամբ).* - կիմանան նախադասության սահմանումը *(քերականական գիտելիքներ).* - կզարգանա աշակերտների ՝ իրականության որոշակի փաստերի և երևույթների նկատմամբ ճիշտ վերաբերմունք (*գրական տարրական գիտելիքներ):*	**Աշակերտները** - կիրականացնեն նախապատրաստական աշխատանք՝ կենդանացնելով այն երևակայական պատկերացումները, որոնք կան երեխաների կենսափորձում և կարող են հիմք դառնալ բանաստեղծի զգացմունքների հասկացման համար - կկազմակերպվեն գրական ունկնդրումներ (բանաստեղծություններ) և քննարկումներ - կբացահայտեն հեղինակի կենսագրության հետաքրքիր դրվագներ ուսումնասիրության ճանապարհով - անգիր կասեն կամ կընթերցեն բանաստեղծությունները՝ պահպանելով որակական բոլոր հատկանիշները (ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ և արագ) - կնախապատրաստվեն բանաստեղծության բովանդակության ընկալման ձևերին - կմեկնաբանեն արտահայտությունները և դրանց շուրջ կստեղծեն կապակցված բնագիր՝ զարգացնելով երևակայական մտածողությունը *(բառային աշխատանք).* - կընդլայնեն իրենց ճանաչողական մտածողությունը -խմբերում աշխատելիս կլսեն ընկերների կարծիքները քննարկվող հարցի վերաբերյալ, ակտիվություն կդրսևորեն դրանք ամբողջացնելու, ընդհանրացնելու հարցում *(գիտելիքների լիակատար յուրացման տեխնոլոգիայի բաղադրամաս),* *- (աշխատանք տեքստի շուրջ)* - կթվարկեն նկարագրական բառերը, դրանք կհաստատեն ստեղծագործության փաստերով *(գրական տարրական գիտելիքներ).* - վերարտադրողական, վերլուծական և քննադատական պատասխաններ պահանջող հարցադրումներով,հին նյութի բովանդակությունը կհամեմատեն նոր նյութի բովանդակության հետ *(գրական տարրական գիտելիքներ).* - կկարողանան հայրենիքի մասին ասացվածքների բովանդակությունը կապել հին և նոր ուսուցանված բանաստեղծությունների բովանդակության հետ *(գրական տարրական գիտելիքներ).* - կիմանան՝ ինչ է թվական անունը, նրա տեսակները, սահմանումները *(քերականական գիտելիքներ):*
	Զարգացնող նպատակ *- ճանաչողական կարողություններ և հմտություններ՝* կավե աման, տախտակներից պատրաստված տաշտակ, *- տրամաբանական կարողություններ և հմտություններ,* *- հաղորդակցական կարողություններ և հմտություններ՝* հաղորդակցվել բարեկիրթ վարվեցողության կանոնների համաձայն, *- համագործակցային կարողություններ և հմտություններ՝* աշխատել զույգերով, խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը կամ հիմնական գաղափարը, պարզ 2-3 քայլանի հրահանգներ տալ և ակտիվություն դրսևորել՝ իմացածն ընկերներին բացատրելու հարցում, կազմակերպել փոխօգնություն և համատեղ աշխատանք ընդհանուր նպատակին հասնելու համար, ապահովել խմբի պատասխանի պարզությունը և հստակությունը (Առ. 6, 2). *- ստեղծագործական կարողություններ և հմտություններ՝* նախադասությունների և կապակցված բնագրի կազմում, ակտիվ բառապաշարի հարստացում	**Զարգացնող նպատակ՝** *- ճանաչողական կարողություններ և հմտություններ* *- տրամաբանական կարողություններ և հմտություններ* *- հաղորդակցական կարողություններ և հմտություններ՝* հաղորդակցվել բարեկիրթ վարվեցողության կանոնների համաձայն *- Հիմագործակցային կարողություններ և հմտություններ՝* աշխատել զույգերով, խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը կամ հիմնական գաղափարը, պարզ 2-3 քայլանի հրահանգներ տալ և ակտիվություն դրսևորել իմացածն ընկերներին բացատրելու հարցում, կազմակերպել փոխօգնություն և համատեղ աշխատանք ընդհանուր նպատակին հասնելու համար, ապահովել խմբի պատասխանի պարզությունը և հստակությունը, *- ստեղծագործական կարողություններ և հմտություններ*

	Դաստիարակող նպատակ *- արժեքային համակարգի զարգացման տեսանկյունից անձի կամային որակներից* աշակերտների մոտ կձևավորվեն աշխատասիրություն, հոգատարություն, երախտագիտություն, նվիրվածություն. - անձի սոցիալականացման տեսանկյունից աշակերտները խմբային աշխատանքի միջոցով կճանաչեն միմյանց լավ և վատ կողմերը և իրենց կենսափորձում կսկսեն օգտագործել ընկերների ուժեղ հատկանիշները: **Մեթոդական նպատակ** *- ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներից՝ գիտելիքների լիակատար յուրացման տեխնոլոգիայի կիրառում* *- չափորոշչահեն կրթություն՝ համապատասխան ծրագրի պահանջվող բոլոր դրույթների կիրառմամբ և հարցադրումների ճիշտ բնույթով.* ա) կարդալու հմտություններ, բ) աշխատանք տեքստի շուրջ, գ) խոսք և հաղորդակցում, դ) գրական տարրական գիտելիքներ, ե) առարկայական ինտեգրում, զ) լեզվական աշխատանք, է) ինքնուրույն ընթերցանություն: *Հարցադրումների ճիշտ հաջորդականությունը.* նախ՝ - վերարտադրողական պատասխան պահանջող, 2. վերլուծական պատասխան պահանջող, 3. քննադատական պատասխան պահանջող, 4. ստեղծագործական պատասխան պահանջող. *- անձի սոցիալականացման դրույթների կիրառում,* *- աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիա,* *- զարգացնող ուսուցման տեխնոլոգիա,* *- ինտեգրված ուսուցման տեխնոլոգիա (արվեստ, պատմություն, գրականություն):*	**Դաստիարակող նպատակ** *- արժեքային համակարգի զարգացման տեսանկյունից անձի կամային որակներից* աշակերտների մոտ կձևավորվեն հայրենասիրություն, երախտագիտություն, նվիրվածություն: -անձի սոցիալականացման տեսանկյունից աշակերտները խմբային աշխատանքի միջոցով կճանաչեն միմյանց լավ և վատ կողմերը և իրենց կենսափորձում կսկսեն օգտագործել ընկերների ուժեղ հատկանիշները: **Մեթոդական նպատակ** *- ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներից՝ գիտելիքների լիակատար յուրացման տեխնոլոգիայի կիրառում* *- չափորոշչահեն կրթություն՝ համապատասխան ծրագրի պահանջվող բոլոր դրույթների կիրառմամբ և հարցադրումների ճիշտ բնույթով.* ա) կարդալու հմտություններ, բ) աշխատանք բանաստեղծության շուրջ, գ) խոսք և հաղորդակցում, դ) գրական տարրական գիտելիքներ, ե) առարկայական ինտեգրում, զ) լեզվական աշխատանք, է) ինքնուրույն ընթերցանություն: *Հարցադրումների ճիշտ հաջորդականությունը.* նախ՝ -վերարտադրողական պատասխան պահանջող, 2. վերլուծական պատասխան պահանջող, 3. քննադատական պատասխան պահանջող, 4. ստեղծագործական պատասխան պահանջող. *- անձի սոցիալականացման դրույթների կիրառում,* *- աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիա,* *- զարգացնող ուսուցման տեխնոլոգիա,* *- ինտեգրված ուսուցման տեխնոլոգիա (արվեստ, պատմություն, գրականություն):*
Կահավորումը	Թեմատիկ պաստառներ «Նախադասություն» թեմայով, խմբերի անվանումների տրաֆարետներ, թեմատիկ անկյուն, թեմատիկ նկարներ, համակարգիչ, Տ-ածև աղյուսակ	Թեմատիկ պաստառներ «Թվական անուն» թեմայով, բարդիների նկարներ, խմբերի անվանումների տրաֆարետներ, թեմատիկ անկյուն, թեմատիկ նկարներ, համակարգիչ, Տ-ածև աղյուսակ
Դասի ընթացքը	**Ի/ա** Առաջին չորս նախադասության բառերը «քանդելով»՝ հանձնարարել «հավաքել» *(5 րոպե)*	**Աշխատանք ուսուցչի հետ (ԱՈՒՀ).** Ի՞նչ ենք անցել հայրենիքի մասին. *- Մենք մեր նախնիների արժանի հետնորդներն ենք,* *- մայրերի ափի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը,* *-Մեր չնվաճված աշխարհամասն էլ Հայաստանն է,* *- Մենք հիմա էլ կաղնու մի ծիլ ենք, որ հետո հայրենիքի համար դառնալու ենք հզոր կաղնի:* *- Երազանքին հասնելու համար մեզ կօգնեն հայրենի հողն ու ջուրը, արևն ու երկինքը:* *- Ծովին խառնվող գետի նման մենք էլ պետք է պիտանի լինենք մեր երկրին,* *- Մեծ և Փոքր Մասիսները ձեռք ձեռքի տված՝ կարոտով սպասում են մեր հայրենանվեր գործերին:* **ԱՈՒՀ** - հարցնել անգիր *«Ա՜խ, այս Մասիսը»* *Ա՜խ, այս Մասիսը…* *Որից փափկում են սրտերը բոլոր,* *Երբ ինքը… քար է:* *Որ ջերմացնում է սրտերը մոլոր,* *Երբ ինքը… սառն է:* *Որ աշխարհներից հեռավոր-հեռու* *Բոլոր հայերին այստեղ է բերում,* *Երբ ինքն… այստեղ չէ:* *Միաբանության քարոզ է կարդում* *Աշխարհում ցրված հայերին անտուն,* *Երբ որ… կիսված է:* *Որ մեծ սիրո պես*

ՄԵԹՈԴԱԿԱՆ

(ԱՈՒՀ) Հին նյութի հարցում *(7 րոպե)*

«Հարցերի տարափ»

- Ո՞րն է մեր ուսումնասիրության թեման («Մեր խաղաղ տունն ու ընտանիքը»)

- Ինչպիսի՞ խաղաղ տներ և ընտանիքներ տեսանք մենք: (Արփենիկի ընտանիքը, որն իր հոգատարությամբ չուզեց ոչ մի տուն «ավերել», ծեր ձկան ընտանիքը, որտեղ թոռներն իրենց երախտագիտությամբ էին շրջապատել տատիկին, Նունեի ընտանիքը, որտեղ հանդուրժողականությունն է իշխում, ծեր պապի և թոռան ընտանիքը):

- Ինչո՞ւ պապի ոտքերը թույլ էին, աչքերը չէին տեսնում, ականջները չէին լսում, ատամներ էլ չուներ, ուտելիս կերակուրը թափում էր վրան: (Պապի ոտքերը թույլ էին, աչքերը չէին տեսնում, ականջները չէին լսում, ատամներ էլ չուներ, ուտելիս կերակուրը թափում էր վրան, որովհետև ծերացել էր):

- Տղան ու հարսը որտե՞ղ էին նրան ճաշ տալիս: (Տղան ու հարսը նրան հացի սեղանի մոտ այլևս չէին նստեցնում և ճաշը տալիս էին տան մի անկյունում):

- Մի անգամ նրան ինչո՞վ ճաշ տվեցին: (Մի անգամ նրան ճաշ տվեցին կավե ամանով):

- Պապն ուզեց ի՞նչ անել, բայց ի՞նչ ստացվեց: (Պապն ուզեց ամանը քաշել դեպի իրեն, բայց գցեց և կոտրեց):

- Ի՞նչ արեց հարսը: (Հարսը զայրացավ և ասաց, որ սրանից հետո նրան ճաշը կտա փայտե տաշտակով):

- Իսկ ի՞նչ արեց ծերունին: (Ծերունին միայն հառաչեց և ոչինչ չասաց):

- Մեր դասի ասացվածքը: (Ծեր մարդուն պատվի՛ր, որ ծերանաս, քեզ էլ պատվեն):

- «Ես հոգատար եմ իմ տատիկի և պապիկի նկատմամբ» մտքի քննարկում.

պաստառը կախել գրատախտակի, T-ածև աղյուսակի միջոցով նշել՝ «այո» կամ «ոչ»: V նշանը գրել այն սյունակում, որին ինքը համամիտ է: Վերջում ուսուցիչը հաշվում է արդյունքները:

Ամբողջական ընթերցմամբ աշակերտներին կարդալ տալ բնագիրը

1. Կարդալ այն հատվածը, որտեղ նկարագրվում է պապի ծերությունը: (Պապը շատ էր ծերացել: Ոտքերը թույլ էին, աչքերը չէին տեսնում, ականջները չէին լսում, ատամներ էլ չուներ: Ուտելիս կերակուրը թափում էր վրան):

2. Կարդալ այն հատվածը, որտեղ նկարագրվում է տղայի ու հարսի վերաբերմունքը: (Տղան ու հարսը նրան հացի սեղանի մոտ այլևս չէին նստեցնում և ճաշը տալիս էին տան մի անկյունում: Մի անգամ նրան ճաշ տվեցին կավե ամանով):

3. Կարդալ այն մասը, երբ պապն ուզում էր ամանը քաշել դեպի իրեն: (Պապն ուզեց ամանը քաշել դեպի իրեն, բայց գցեց և կոտրեց):

4. Կարդալ հարսի զայրույթը ներկայացնող տողերը: (Հարսը զայրացավ և ասաց, որ սրանից հետո նրան ճաշը կտա փայտե տաշտակով):

5. Կարդալ ծերունու վերաբերմունքը: (Ծերունին միայն հառաչեց և ոչինչ չասաց):

Այս անգամ ընտրովի հարցմամբ աշակերտներին հարցնել պատմել բնագիրը

ի/ա *(3 րոպե)*

Տալ քարտեր հետևյալ հարցադրումներով

Քննադատական պատասխան պահանջող հարցադրումներ

- Ձեր կարծիքով ինչո՞ւ էր պապը ծերացել:

- Ձեր կարծիքով ինչո՞ւ տղան ու հարսը նրան ճաշ տվեցին կավե ամանով, իսկ մինչ այդ ի՞նչ ամանով էին ճաշ տալիս նրան: Ինչո՞ւ:

- Իսկ գուցե հարսը շատ հոգնա՞ծ էր, որ զայրացավ:

Ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրումներ (2 րոպե)

- Ի՞նչ էր ուզում ասել ծերունին իր հառաչանքով:

Հարցնել հարցերի պատասխանները:

ի/ա *(5 րոպե)* «Ուզում ես ավելին իմանալ» բաժնից օգտվելով՝ լրացնել թվերը.

Մասիս լեռան բարձրությունը _____

Ստորոտից մինչև գագաթ _____

Սիսի բարձրությունը _____

Սիսի և Մասիսի գագաթների հեռավորությունը _____

Կարմիր մատիտով ընդգծել լրացված թվերը:

ի/ա Դու տեսնում ես **երեք** սլացիկ բարդի: **Առաջին** բարդու վրա կանգնած է **մեկ** արագիլ: **Երկրորդ** բարդու վրա տեսնում ես **երկու** արագիլ: Երրորդ բարդու վրա արագիլները **երեքն** են:

Կարդալ, խմբավորել կարմիր և կապույտ գույնով գրված թվերը:

ԱՈՒՀ. Աշակերտների միջոցով ստուգել աշխատանքները, հարցնել՝ ինչ են ցույց տալիս այդ թվերը _____ քանակ, թիվ: Ուրեմն՝ **քանակական թվականներ են:**

Երկրորդ առաջադրանքում, ուրեմն ,քանակական թվականներն են՝ կարմիր գույնով ներկված թվերը:

Կապույտով ներկված թվերը կլինեն **դասական թվականներ**, որովհետև ցույց են տալիս առարկայի կարգ, դաս:

Աշակերտները եզրահանգում են, *որ դրանք թվականներ են, որովհետև ցույց են տալիս առարկաների թիվ կամ թվային կարգ:*

ի/ա *Առ. 4 . Որոշի՛ր որ բառերի հետ են գործածվել թվականները, և այդ բառակապակցությունները գրի՛ր տետրում:*

Դու սովորում ես չորրորդ դասարանում: Արագածն ունի չորս գագաթ:

Հայ շախմատիստները գրավեցին առաջին տեղը:

Սևանա լիճ թափվում է քսանութ գետ ու գետակ:

(ունկնդրում)

Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունը

ՀԱՅՐԵՆԻՔ

Լեռները հպարտ վեր են բարձրանում,
Որ փառքդ վերև՜ տանեն, հայրենի՛ք:
Արծիվները վես* երկինք են հասնում,
Որ փառքդ երկի՛նք տանեն, հայրենի՛ք:
Հովերն ու հողմերն աշխա՛րհ են շրջում,
Որ փառքդ չորս կողմ տանեն, հայրենի՛ք:
Աղբյուր ու գուսան երգ են կարկաչում,
Որ փառքիդ գովքը անեն, հայրենի՛ք:
Իսկ զավակներդ, զավակներդ անգին
Իրենց արյո՛ւնն են տալիս սրտագին,
Որ փառքդ անմա՛հ պահեն, հայրենի՛ք:

ի/ա *Հանձնարարել կարդալ մտքում, դուրս գրել անհասկանալի բառերը, դիմել բառարանի օգնությանը:*

Նոր նյութի ուսուցում *(30 րոպե)*

Իմաստավորման փուլ *(8 րոպե)*

Գրատախտակին հաջորդականությամբ գրվում են տրվելիք քերականական նյութին վերաբերող հենակետային նախադասություններ, որոնք կհանդիսանան ուսուցանվող բնագրի պլան-կետերը: Աշակերտներին տրվում է նախօրոք բաժանված կանգառների մոտավոր բովանդակությունն արտահայտող բառաֆոնդ և հանձնարարվում կարդալ: «Կանխատեսումների մեթոդի» հիման վրա կանխատեսել տվյալ կանգառի բովանդակությունը: Յուրաքանչյուր կանգառի բովանդակությունը կանխատեսելուց հետո, ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները բացում են բնագիրը՝ պարզելու՝ ինչքանով են ճիշտ կանխատեսել տվյալ կանգառի բովանդակությունը: «Ծեր պապն ու թոռը» պատմվածքի քերականական թեման նախադասության մասին գիտելիքների ձեռքբերումն է, և բնագրի պլան-կետերը կհանդիսանան կանգառների բովանդակության շուրջ տրվող նախադասություններ: Այսպես՝

1. Հայրը հարցրեց. «Այդ ինչ ես շինում»: *(Գրվում է գրատախտակին որպես պլանի կետ)*

ի)ա (Բառաֆոնդ՝ որի միջոցով աշակերտները կարող են կանխատեսել բնագրի առաջին կանգառի բովանդակությունը).

(Մի անգամ, հարս, տղա, նայում էին, իրենց որդին, փոքրիկ տախտակներ, ինչ-որ բան սարքում, հայր, հարցրեց):

Կանխատեսումից հետո բացել տալ դասագրքերը և կարդալ տալ առաջին չորս տողը:

Առաջին կանգառի բովանդակությունը. **Մի անգամ ծերունու հարսն ու տղան նստած նայում էին, թե ինչպես է իրենց որդին փոքրիկ տախտակներից ինչ-որ բան սարքում: Հայրը հարցրեց. «Այդ ի՞նչ ես շինում»:**

Գրատախտակին գրել երկրորդ նախադասությունը՝

2. - Տաշտակ եմ շինում, հայրի՛կ :

Տրվում է բառաֆոնդ՝ որի միջոցով աշակերտները կարող են կանխատեսել բնագրի երկրորդ կանգառի բովանդակությունը.

(Տաշտակ, հայրի՛կ, դու, մայրիկը, ծերանաք, տաշտակով, կերակրեմ)

Կանխատեսումից հետո բացել տալ դասագրքերը և կարդալ տալ երկրորդ երեք տողը:

Երկրորդ կանգառի բովանդակությունը - **Տաշտակ եմ շինում, հայրի՛կ, որ երբ դու և հայրիկը ծերանաք, տաշտակով ձեզ կերակրեմ,- պատասխանեց տղան:**

Գրատախտակին գրել երրորդ նախադասությունը՝

3. Մարդ ու կին իրար նայեցին ու լաց եղան:

Տրվում է բառաֆոնդ՝ որի միջոցով աշակերտները կարող են կանխատեսել բնագրի երրորդ կանգառի բովանդակությունը.

(Տաշտակ, հայրի՛կ, դու, մայրիկը, ծերանաք, տաշտակով, կերակրեմ)

Կանխատեսումից հետո բացել տալ դասագրքերը և կարդալ տալ երրորդ չորս տողը:

Երրորդ կանգառի բովանդակությունը. **Մարդ ու կին իրար նայեցին ու լաց եղան: Նրանք ամաչեցին, որ այդպես վիրավորել էին ծերունուն: Այդ օրվանից սկսեցին նրան իրենց հետ սեղան նստեցնել և խնամել*** (բացատրել բառը. հոգ տանել մեկի նկատմամբ, սնել, պահպանել), **ինչպես կարգն է:**

Ընթերցանություն ուսուցչի կողմից

(3 րոպե) Աշակերտներին հանձնարարվում է գրատախտակին գրված պլան-

ԱՈՒՀ Վերլուծել բանաստեղծությունը՝ շեշտելով **լեռներ, վերև տանեն, արծիվները, երկինք, հովեր, հողմեր, աղբյուր, գուսան** բառերը, վերհիշելով **բարդիներ, Արագած, հայ շախմատիստներ, Սևանա լիճ, 28 գետ ու գետակ** բառերն ու բառակապակցությունները:

Հանձնարարել նկարել՝ **«Հայրենիքն իմ պատկերացմամբ»**: Նկարը դասի վերջում կախել թեմատիկ պաստառից:

ԱՈՒՀ Նոր նյութի ընթերցում ուսուցչի կողմից:

Հարցնել՝ ըստ բանաստեղծության ի՞նչ են անում **լեռները, արծիվները, հովերն ու հողմերը, աղբյուրն ու գուսանը, զավակները:**

Զույգերով աշխատանք. նստարաններին դնել տարբեր ասացվածքներ հայրենիքի մասին, որոնք պետք է աշակերտները կարդան, սովորեն (**ի/ա):**

(ԱՈՒՀ) Առաջադրանքներ.

1. Բառակապակցություններն արտահայտիր մեկ բառով.

2 թև ունեցող,
7 գլուխ ունեցող,
8 ոտք ունեցող,
4 հարկ ունեցող:

2. ա) Թվային բաղադրիչով դարձվածներն արտահայտի՛ր մեկ բառով.

հավասարեցնել գրոյի, յոթ սարից այն կողմ, երկու քայլի վրա:

բ) Դարձվածներն օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

3. **Քար, առաջին, փափկել, սիրտ,**

ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի 23-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ ընդլայնված խորհրդակցություն՝ «Լեզվական քաղաքականություն. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով: Մասնակցում էին Մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության, արդարադատության նախարարությունների, դատախազության, Ստեփանակերտի քաղաքապետարանի և այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ: Քննարկվող թեման վերաբերում էր անհրաժեշտ վայրերում տեղադրված գովազդների և ցուցանակների համապատասխանությանը «Լեզվի մասին» ԱՀ օրենքին:

Մայրաքաղաքում առկա խախտումները ներկայացրեց ԿԳՍՆ լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյանը: Օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակում տեսչությունն իրականացնում է տարեկան 150-200 ստուգայց: Այնուամենայնիվ, Ստեփանակերտում խանութների վրա դեռևս շատ են օտարագիր ցուցանակները: Համաձայն «Լեզվի մասին», «Գովազդի մասին» ԱՀ օրենքների՝ գովազդը, ցուցանակը պետք է լինեն հայերեն: Ըստ Ա. Ղուլյանի՝ ամբողջ խնդիրն այն է, որ գովազդի մասին օրենք Արցախի Հանրապետությունում կա, սակայն ցուցանակների վերաբերյալ օրենք չկա: Ստացվում է, որ եթե գովազդը վերահսկվում է համայնքի, տվյալ դեպքում՝ քաղաքապետարանի կողմից, ապա ցուցանակների տեղադրումն անվերահսկելի է, և տուրք կամ տույժ չի նախատեսվում, ինչը խոսում է օրենքի անկատարության մասին: Ցուցանակին ներկայացվող պահանջը միայն այն է, թե խանութի որ մասում պետք է այն տեղադրված լինի և ինչ չափսի:

Բանախոսն ուշադրություն հրավիրվեց նաև այն հանգամանքի վրա, որ հստակեցված չեն «գովազդ» և «ցուցանակ» հասկացությունները, այսինքն՝ գովազդի և ցուցանակի միջև չկա սահմանազատում, դրանք միմյանցից չեն տարբերվում: Լինում են դեպքեր, երբ խանութի ճակատին գրվածը պարզապես չի հասկացվում՝ գովա՞զդ է, թե՞ ցուցանակ, ինչպես օրինակ՝ Pizza Home, Happy Baby, Baby Li և այլն: Թե՛ ցուցանակը, թե՛ գովազդը պետք է լինեն հայերեն: Հայերեն շարադրանքը կարող է զուգորդվել այլ լեզվով, բայց այն պետք է միշտ գերակշռող լինի: Լեզվի տեսչության պետի կարծիքով՝ խնդիրն այստեղ ոչ միայն օրենքի խախտումն է, այլ նաև բարոյական վնասը, որ նման ցուցանակ-գովազդներով հասցվում են հայ մարդուն:

«Հայերեն տառադարձմամբ օտար բառերը նաև ազդում են հոգեբանության վրա, սրա վտանգները ևս մեծ են: Լեզվական քաղաքականությունը միայն Լեզվի տեսչության խնդիրը չէ, դրա համար պատասխանատու են բոլորը: Մեր խնդիրն է վերացնել եղած խախտումները, կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել լրատվամիջոցների, նաև՝ համապատասխան կառույցների ներգրավմամբ»,- ասաց ԱՀ կթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Շահագրգիռ կազմակերպությունները գործում են առանձին-առանձին, ինչը սպասված արդյունքը չի տալիս: Եվ քննարկման նպատակն էլ հենց դա էր՝ փորձել գտնել համագործակցության եզրեր, մշակել կանխարգելիչ համալիր ծրագրեր:

Քննարկման մասնակիցները տեսակետներ հայտնեցին՝ շեշտելով, որ համապատասխան իրավական ակտերը թերի են: Լեզվի տեսչության պետի կարծիքով՝ գովազդային գործունեություն իրականացնող կազմակերպությունները պետք է պայմանագիր կնքեն գովազդատուի հետ, որի կետերից մեկն անպայման պետք է լինի գրական հայերենի պահպանումը: Առաջարկություններ եղան «Լեզվի մասին», «Գովազդի մասին» ԱՀ օրենքներում, ինչպես նաև ցուցանակը կարգավորող իրավական ակտի մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

ԿԳՍ նախարարը տեղեկացրեց, որ սա տվյալ թեմայով առաջին համատեղ քննարկումն է, որը կլինի շարունակական: Շահագրգիռ կառույցներն իրենց իրավասությունների շրջանակում կուսումնասիրեն օրենքներն ու իրավական ակտերը և առաջարկություններ կներկայացնեն, որ պատրաստվի օրինագիծ, և համապատասխան ընթացք տրվի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐԾԵՐԻ ՇՈՒՐՋ

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության ու ՀՀ մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի համագործակցության շրջանակում նոյեմբերի 30-ին Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների մասնագիտացված կրթական աջակցության գծով փոխտնօրենների հետ հանդիպում ունեցավ կենտրոնի մասնագետ Շահանե Բեգլարյանը: Նպատակն էր գնահատել 2017թ. ամռանը հիշյալ մանկավարժների հետ աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ անցկացված վերապատրաստման դասընթացների արդյունքները, վերլուծել խնդիրները, հասկանալ, թե ինչ դժվարություններ կան մեթոդական և կազմակերպչական առումով: Մանկավարժները կարևորեցին ծրագրի նշանակությունը, նրա նպատակային լինելը, տեղեկացրին, որ նյութի և մեթոդաբանության առումով խնդիրներ չկան, սակայն կազմակերպչական առումով հստակեցման անհրաժեշտություն կա՝ ով, ինչպես և ինչ հիմքերով պետք է դա իրականացնի, այսինքն՝ թե պետականորեն այդ գործառույթն ում վրա պետք է դրված լինի:

Շ. Բեգլարյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ում հարցը՝ մասնագիտական կողմնորոշումը, լինի առանձին առարկայի՞, թե՞ խմբակային պարապմունքի ձևով, առայժմ քննարկման փուլում է:

Նա խոստացավ շարունակել հանդիպումներն արցախցի մանկավարժների հետ, նրանց փոխանցեց կայքերի հասցեները, որտեղ տեղադրված է համապատասխան մեթոդական գրականությունը, ինչպես նաև հավաստագրեր հանձնեց վերապատրաստում անցած մանկավարժներին:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

նի կետերով համառոտ պատմել.

1. Հայրը հարցրեց. «Այդ ի՞նչ ես շինում»

2. - Տաշտակ եմ շինում, հայրի՛կ:

3. Մարդ ու կին իրար նայեցին ու լաց եղան:

(3 րոպե) Աշակերտներին հանձնարարվում է նկարել՝ ինչ հասկացել են:

(3 րոպե) «Քանդել» երրորդ նախադասությունը (նայեցին, եղան, մարդ, իրար, ու, կին ու, լաց),

- հանձնարարել համեմատել և գտնել տարբերությունները,

- եզրահանգել, որ երկրորդ տարբերակը միտք չի արտահայտում **(ԱՈՒՀ),**

- եթե առաջին տարբերակը միտք է արտահայտում, ուրեմն այն **նախադասություն է** (գրատախտակին կախել նախօրոք պատրաստված պաստառը) **նախադասություն բառերի խումբ, որը միտք կամ իմաստ է արտահայտում,**

ի/ա Առ. 4. **Պապը շատ էր ծերացել:**

էր պապը ծերացել շատ:

Համեմատիր գրածները: Ի՞նչ նմանություն և ի՞նչ տարբերություն կա նրանց միջև:

Առ. 5. **Առաջադրանքում խոսքն իմ մասին էր: Իսկ ո՞վ եմ ես: Իհարկե՝ Նախադասությունը: Ես միտք եմ արտահայտում, իմաստ ունեմ:**

Քննարկել պլանի մյուս երկու նախադասությունները՝

Հանձնարարվում է կազմել բառակապակցություններ ըստ բնագրի.

փոքրիկ ……..

փոքրիկ …….

տասնհինգ, հինգերորդ, ջերմացնել, կարդալ, քառասուն, անտուն, չորրորդ, մոլոր, հազար, բարձր, հեռավոր, սար, երկու, աշխարհ, կանչել բառերը բաժանի՛ր չորս խմբի: Ի՞նչ են ցույց տալիս յուրաքանչյուր խմբի բառերը: Ի՞նչ անուն կդնես խմբերից յուրաքանչյուրին:

Հայրենիքը հենց այն է, որ անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով, նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

Վարդգես Պետրոսյան

Առ. 3. Բնագրից գտի՛ր այն բառակապակցությունները, որոնց բաղադրիչներից մեկը **ծեր, թույլ, կավե, փայտե** բառերն են:

Առ. 2. *(խմբային աշխատանք)* Կազմիր բառակապակցություններ հետևյալ բառերով.

անկյուն, փոքրիկ, մութ, աման, կոտրված, տաշտակ:

Առ. 6. Նկարելուկներ *(խմբային աշխատանք)*



Գրի՛ր, թե ինչ բառեր են գաղտնագրված

Առ. 1. Բոլոր թռռնիկներն էլ հետո պապ կամ տատ են դառնում:

Այժմ մենք, մի-մի տառ փոխելով, **թռռից** ստանանք **տատ և պապ.**

թռռ - թառ - տառ - **տաO** - պատ - **պաO**:

Հիշեցնել, որ պատմությունը կազմված է նախադասություններից, նախադասությունները՝ բառակապակցություններից, բառակապակցությունները՝ բառերից, բառերը՝ տառերից: Այսինքն՝ նախադասություն կազմելու համար մեզ անհրաժեշտ են բառեր և բառակապակցություններ:

համակարգչային ընթերցանություն *(3 րոպե)*

Աննա ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՀ կրթության , գիտության եւ սպորտի նախարարություն,
Մեսրոպ Մաշտոց Համալսարան

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սրանք այնպիսի խնդիրներ են, որոնց պատասխանն անհնար է ստանալ առանց հաշվումների: Այսպիսի խնդիրների լուծումը յուրօրինակ է նաև նրանով, որ բացի հաշվումներից պահանջվում է քանակական և որակական վերլուծություն: Քանակական խնդիրներն ըստ իրենց լուծման դժվարության դասվում են պարզ և բարդ խնդիրների շարքը:

Հասարակ խնդիրները նրանք են, որոնց լուծումը չի պահանջում բարդ վերլուծություն, և բաղկացած են 1-2 գործողությունից: Այսպիսի խնդիրները կիրառում են հենց նոր ձեռք բերած օրինաչափությունների ամրապնդման համար: Նրանցից ամենահեշտը կարելի է լուծել բանավոր: Քանակական խնդիրների լուծման ժամանակ կարելի է կիրառել հետևյալ եղանակները՝ թվաբանական, հանրահաշվական, երկրաչափական և գրաֆիկական: Նոր ծրագրերին անցնելը հնարավորություն ընձեռեց սկսած ֆիզիկայի ուսումնասիրության առաջին տարվանից՝ VII դասարանից կիրառել հանրահաշվական մեթոդը: Հանրահաշվական մեթոդի առավելությունն այն է, որ այստեղ հնարավոր է կիրառել բանաձևեր և հավասարումներ: Երկրաչափական լուծման ժամանակ կիրառվում են երկրաչափական թեորեմներ, իսկ գրաֆիկական լուծման ժամանակ՝ գրաֆիկներ:

Տեքստային խնդիրների դասին են պատկանում, այսպես կոչված, աբստրակտ խնդիրները, որոնց մեջ խոսքը գնում է երևույթների և պրոցեսների մասին, որ հաճախ ենք դիտում մեր առօրյա կյանքում: Մենք հաճախ հանդիպում ենք խնդիրների, որոնք կրում են արտադրական-տեխնիկական բնույթ և վերջապես խնդիրներ, որոնք կրում են պատմողական բնույթ:

Որոշ դեպքերում էլ գործ ենք ունենում հետաքրքրաշարժ (занимательные) խնդիրների հետ:

Փորձը խնդիրների լուծման ժամանակ կիրառվում է տարբեր նպատակներով: Առաջին դեպքում փորձը, որը կատարվում է փորձարարական սեղանին կամ ինքնուրույն կերպով՝ աշակերտի կողմից, նպատակ է հետապնդում գտնել տվյալներ խնդիրը լուծելու համար: Երկրորդ դեպքում կարող ենք լուծել և առանց փորձի՝ օգտվելով ու բավարարվելով նրա պայմանում բերված տվյալներից: Այստեղ փորձը միայն օգտագործվում է տվյալ երևույթի պարզաբանման կամ խնդրի արդյունքի ստուգման համար:

Փորձարարական խնդիրների լուծման ժամանակ աշակերտների մոտ զարգանում է դիտողականությունը, մշակվում են գործիքների հետ վարվելու և նրանցից օգտվելու ունակություններ ու հմտություններ: Այսպիսի դեպքերում աշակերտներն ավելի խորն են հասկանում ֆիզիկական օրենքների ու երևույթների էությունը:

Գրաֆիկական խնդիրների լուծման ժամանակ կիրառվում են գրաֆիկներ: Գրաֆիկական խնդիրների լուծումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի լավ ըմբռնել ֆիզիկական մեծությունների միջև եղած ֆունկցիոնալ կապը և մշակում է գրաֆիկներով աշխատելու ունակություններ ու հմտություններ:

Օրինակ՝



Հաշվի առնելով, որ գրաֆիկների ընթերցումն ու նկարագրությունը մեր աշակերտների բաց կողմերից մեկն է, ցանկանում եմ մի քիչ մանրամասն կանգ առնել վերը տրված գրաֆիկի նկարագրության վրա:

Խնդիրների լուծման ժամանակ հանդիպում ենք դեպքերի, երբ ինֆորմացիայի հաղորդման միակ աղբյուրը գրաֆիկի նկարագրությունն է:

Մեր գրաֆիկը համապատասխանում է 20 րոպեի երթևեկություն-պատմության, որն ընթանում է հարթ ճանապարհով, որտեղ S-ը ավտովարորդի տան հեռավորությունն է, իսկ t-ն տնից դուրս գալու պահից հետո երթևեկության ժամանակը: Փորձենք մեկնաբանել այս գրաֆիկը:

Գրաֆիկի յուրաքանչյուր կետը մեզ տալիս է S մեծության արժեքը t պահին: Օրինակ՝ p կետում ունենք 3,5 կմ ըստ S սանդղակի և 4 րոպե՝ ըստ t սանդղակի: Շնորհիվ p կետի մենք գիտենք, որ ավտոմենքենան հասել է 3 կմ-ի՝ երթևեկությունն սկսելուց 4 րոպե հետո: Մենք տեսնում ենք, որ ավտոմեքենան առաջին րոպեին անցել է 2 կմ, իսկ առաջին 1 կմ-ը՝ 2 րոպեում: Քանի որ 1 կմ/րոպ-ին համապատասխանում է 60 կմ/ժ, ապա առաջին 2 րոպեի համար ավտոմեքենայի արագության միջին արժեքը կլինի 30կմ/ժ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ավտովարորդը չի ցանկացել արագ քշել (մարդատար ավտոմեքենան կարող է հասնել 60 կմ/ժ արագության շարժումը սկսելուց 8 վրկ. հետո): Երկրորդ րոպեի վերջում վարորդը սկսեց պահպանել 60 կմ/ժ արագությամբ շարժում, բայց 5-րդ վայրկյանին նա հանկարծակի կանգնեց մոտ 1/5 րոպե կամ էլ 12 վրկ: Այստեղ իհարկե գործի գցվեց արգելակման սիստեմը (որպեսզի կանգնեցվի 60 կմ/ժ արագությամբ շարժվող ավտոմեքենան, հարկավոր է 3 վրկ.): Որից հետո վարորդը կանգնեց մոտ 3 րոպե տնից 4 կմ հեռավորության վրա: 8-րդ րոպեից սկսած՝ նա բռնեց հետդարձի ճանապարհը, ու այս անգամ սկսեց շարժվել մի քիչ արագ, քան սկզբում (շարժվեց արագացումով): Չանցած 2 րոպե՝ սկսեց թողնել արագությունը և այդ կատարեց մինչև 16-րդ րոպեն, այսինքն՝ մինչև կանգ առնելը: Վերջում նա շարժվեց 1 րոպե ևս՝ մինչև լրիվ կանգ առնելը:

Այստեղ մենք գալիս ենք այն հետևության, որ մեքենայի շարժիչի հզորությունն ընկել է (հավանաբար վերջացել է վառելանյութը):

Ինչպես տեսնում եք, գրաֆիկը պատմեց ամեն ինչ մասին, բացի նրանից, թե ինչու նա կանգնեցրեց 4 կմ տնից հեռավորության վրա և ինչու վճռեց հետ դառնալ, բայց եթե ցանկանանք, դրա համար էլ կարելի է կատարել որևէ առաջարկություն:

Ֆիզիկական այն խնդիրները, որոնց պայմաններում տվյալները չեն բավականացնում խնդիրների լուծման համար, անվանում են ոչ լրիվ տվյալներով: Չհերիքող տվյալները գտնում ենք ուղեցույցներից, աղյուսակներից և ուրիշ այլ աղբյուրներից: Այդպիսի խնդիրները կյանքում հաճախ են պատահում, և դրանց լուծման նշանակությունը մեծ է, քանի որ աշակերտները սովորում են վերը նշված աղբյուրներից օգտվել: Որպեսզի կարողանանք աշակերտի մոտ սեր ստեղծել դեպի խնդրի լուծումը, հարկավոր է հմտորեն կատարել նրա ընտրությունը: Ընտրված խնդիրը պետք է լինի հետաքրքիր և բովանդակալից, ունենա կարճ և ճիշտ ձևակերպում: Խնդիրների լուծման ժամանակ չպետք է տարվել մաթեմատիկական գործողություններով՝ ստվերի տակ թողնելով նրանց ֆիզիկական բովանդակությունը: Պետք է զերծ մնալ ծերացած և արհեստականորեն ստեղծված թվերով պայմաններ ունեցող խնդիրներից:

Տվյալ թեմայի վերաբերյալ խնդիրների լուծման ժամանակ պետք է ընտրել պարզ ու հասարակը, որոնց բովանդակության մեջ կա նոր ուսումնասիրված ֆիզիկական օրինաչափություն, կամ ստեղծում է կապ հնի և նորի միջև, որից հետո միայն անցնել բարդ խնդիրների լուծմանը: Վտանգավոր է նաև դասերին զբաղվել միայն խնդիրների լուծմամբ, իսկ դա հնարավոր էլ չէ, որովհետև իրականում այդքան ժամանակ չկա: Գլխավորը ոչ թե լուծված խնդիրների քանակն է, այլ որակը, որի համար էլ ֆիզիկայից խնդիրների լուծման մեթոդիկան իմանալն անհրաժեշտություն է:

Ֆիզիկական խնդիրների լուծման անալիտիկ-սինթետիկ մեթոդ

Անալիտիկ-սինթետիկ մեթոդը միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններում ֆիզիկայի խնդիրների լուծման հիմնական մեթոդներից է: Այս մեթոդի հաջող կիրառումն աշակերտներին դուրս է բերում խնդրի լուծման ճիշտ ճանապարհ և օգնում է նրանց զարգացնելու տրամաբանական մտածողությունը:

Շատ մեթոդական գրականության մեջ էլ այժմ հաճախ անալիտիկը և սինթետիկը դիտվում են որպես խնդիրների լուծման 2 տարբեր, իրարից անկախ մեթոդներ: Բայց այսպիսի տարբերակումը չպետք է դիտել բառացիորեն: Անալիզը և սինթեզն իրարից այնքան են անբաժանելի, ինչքան՝ ինդուկցիան և դեդուկցիան մտածողության պրոցեսում: Անալիզը և սինթեզը խնդիրների լուծման ժամանակ կիրառվում են կապակցված, այսինքն՝ պրակտիկորեն կիրառվում է անալիտիկ-սինթետիկ մեթոդը:

Այս մեթոդի ժամանակ կատարելով անալիզ՝ աստիճանաբար կատարում ենք պարզեցում, սկսելով խնդրի անհայտից՝ հասնում ենք հայտնի մեծություններին, որոնք տրված են նրա պայմանում: Այնուհետև կատարում ենք հակառակը՝ օգտագործելով հայտնի տվյալները և օգտվելով մշակված արտահայտություններից՝ գտնում ենք անհայտը: Օրինակ՝



Խնդիր. Երկու ծանրոցներ կապված են թելով և գցված անշարժ ճախարակների վրա: Մարմինների մասսան՝ m_1=2,14կգ, m_2=1,93կգ: Ճախարակի մասսան և դիմադրության ուժերը կարելի է անտեսել: Որոշել թելի լարման ուժը ծանրոցների շարժման ժամանակ:

Անշարժ ճախարակը միայն փոխում է ուժի ուղղությունը: Եթե ճախարակը կշիռ չունի, և դիմադրությունը անտեսվում է, ապա փոխազդեցության ուժերն այդ երկու մարմինների միջև հավասար են: Գծագրի վրա պատկերենք այն բոլոր ուժերը, որոնք ազդում են այդ 2 մարմինների վրա: Ուժի դրական ուղղության ընտրությունը կամավոր է, բայց գերադասելին մեծ ուժի ուղղությունն է: Այժմ այդ մարմինների շարժման համար գրենք Նյուտոնի II օրենքը:

$m_1g-T=m_1a$ հավասարումը 2 անհայտով 2 հավասարումների սիստեմ է, որի համատեղ լուծումը կհանգեցնի T-ի և a-ի որոշմանը:

$$\begin{cases} m_1g-T=m_1a \\ T-m_2g=m_2a \end{cases} \qquad T=\frac{2m_1m_2g}{m_1+m_2}=19,9\ \text{Ն}.$$

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ
Սզնեքի միջն. դպրոցի
ֆիզիկայի ուսուցիչ,
ԱՀ վաստակավոր մանկավարժ

«ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ: ԱԵՖ-Ի ՍԻՆԹԵԶԸ ԹԹՎԱԾՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ» ԹԵՄԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարանի կենսաբանության դասագրքում կան թեմաներ, որոնք դժվար են յուրացվում աշակերտների կողմից: Ըստ իս՝ դրանցից է «Շնչառություն: ԱԵՖ-ի սինթեզը թթվածնի մասնակցությամբ» թեման: Թեմայի դժվարությունն այն է, որ միտոքոնդրիումներում պիրոխաղողաթթվի ճեղքավորումից առաջացած ացետիլ-կոֆերմենտ Ա-ի հետագա փոխարկումներն իրականանում են եռկարբոնաթթվային ցիկլում, որն իրենից ներկայացնում է օղակաձև ֆերմենտային հոսքագիծ: Բոլոր ռեակցիաներն ընթանում են օրգանական նյութերի մասնակցությամբ, որն ուսումնասիրվում է 11-րդ դասարանում: Առանց ռեակցիաների իմացության դժվար է պատկերացնել այդ ամենը:

Ես այդ թեման կցանկանայի վերանվանել «Գլյուկոզի մոլեկուլում գտնվող ջրածնի ատոմների պահեստավորումը Կրեպսի ցիկլի ընթացքում» և այն ներկայացնել ընթերցող մասնագետների դատին:

Կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն թթվածնի պայմաններում անցնում է միտոքոնդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքավորման՝ առաջացնելով ացետիլ-կոֆերմենտ Ա:

Կրեպսի ցիկլի հետագա փոխարկումներն իրականանում են եռկարբոնաթթվային ցիկլում, որը 1953 թվականին ներկայացրել է Կրեպսը:

Կրեպսի ցիկլը ցույց է տալիս գլյուկոզի մոլեկուլում գտնվող ածխածնի և թթվածնի հեռացումը ածխածնի (IV) ձևով և ջրածնի ատոմների կուտակումը, որից ստացված էներգիան պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով և օգտագործվում օրգանիզմի կենսագործունեության պրոցեսում:

Բազմաթիվ ֆերմենտների մասնակցությամբ մեկ մոլ պիրոխաղողաթթվի մեջ եղած ածխածնի և թթվածնի ատոմներն անջատվում են երեք մոլ CO_2-ի ձևով: Քանի որ գլիկոլիզի հետևանքով առաջանում է երկու մոլ պիրոխաղողաթթու, պրոցեսը կրկնվում է երկու անգամ: Մեկ մոլ գլյուկոզի մեջ գտնվող ածխածնի ատոմները CO_2-ի ձևով անջատվելու համար անհրաժեշտ է տասներկու ատոմ թթվածին, որից միայն վեց ատոմ է պարունակվում գլյուկոզի մեջ: Հաջորդ վեց ատոմ թթվածնի ստացման համար օգտագործվում է վեց մոլ ջրի մեջ եղած թթվածինը:

Կրեպսի երկու ցիկլերի ավարտից հետո պահեստավորվում է քսանչորս ատոմ ջրածին, որից տասներկու ատոմը ստացվել է գլյուկոզի ճեղքումից, իսկ տասներկուսը՝ վեց մոլ ջրից: Ջրածնի ատոմները միտոքոնդրիումների թաղանթով փոխադրվում են ՆԱԴՖ (նիկոտին ամիդ ադենին դինուկլեոտիդֆոսֆատ) կոչվող ֆերմենտի միջոցով, որն ամենատարածված ջրածին փոխադրողն է:

ՋՐԱԾԻՆ

Ջրածնի պրոտոնների և թթվածնի O-բացասական իոնների փոխազդեցության արդյունքում առաջանում է մեծ քանակությամբ էներգիա, որը պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով: Միաժամանակ առաջանում է երկու մոլ ջուր: Դա միակ ռեակցիան է, որի ժամանակ օրգանիզմում սինթեզվում է ջուր: Թթվածնի ատոմներն առաջացնում են մոլեկուլային թթվածին:

$P^+ + O^- \Longrightarrow OH$

$\Longrightarrow H_2O + O$

$P^+ + O^- \Longrightarrow OH$

$\Longrightarrow O_2$

$P^+ + O^- \Longrightarrow OH$

$\Longrightarrow H_2O + O$

$P^+ + O^- \Longrightarrow OH$

Թթվածնային ճեղքման իրականացման համար անհրաժեշտ է միտոքոնդրիումների չվնասված թաղանթ, որի վրա ընթացող ռեակցիաները բջջին կապահովեն էներգիայով:

Լիլյա ԴԱՆԻԵԼՅԱՆ
Մարտունու շրջանի Թաղավարդի Ա. Գրաշու անվան միջն. դպրոցի քիմիա եւ կենսաբանություն առարկաների ուսուցչուհի

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԺԱԽԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԺ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՍՏՂԵՐԻՆ

Արցախի ծանրամարտի ասոցիացիան գործում է 2017 թվականից: Հիմնադիր-նախագահ Արթուր Շիրինյանի գլխավորությամբ ասոցիացիան շարունակում է ակտիվ գործունեություն ծավալել՝ զարգացնելով ու մասսայականացնելով ծանրամարտն Արցախում: Ասոցիացիայի ներքո կոփվում է շուրջ 30 մարզիկ, որոնցից արդեն կան մրցանակային տեղեր գրավածներ: Արթուր Շիրինյանը սպորտի ոլորտում ձեռքբերումներ ունի ոչ միայն որպես ասոցիացիայի նախագահ, այլ նաեւ որպես մարզիկ: ՀՀ բռնցքամարտի չեմպիոն է: Մեզ հետ զրույցի ընթացքում նշեց, որ ասոցիացիան գլխավորելու եւ ծանրամարտ մարզաձեւն Արցախում տարածելու միտք վաղուց ուներ, քանի որ ծանրամարտը հարիր է իր բնավորությանը: Ջանքերն ու ներդրումներն ապարդյուն չանցան: Մայիսի 6-8-ը կայացավ Արցախի ծանրամարտի առաջին բաց առաջնությունը, որին մասնակցեցին շուրջ 100 ծանրորդ-մարզիկներ ՀՀ-ից: Աշխարհահռչակ հայ ծանրամարտիկների մասնակցությամբ նմանատիպ մրցաշարերը ոգեւորում ու խթանում են մարզիկների լավ պատրաստությանը: Շուրջ մեկ տարի գործող ասոցիացիան սերտ կապի մեջ է ՀՀ ծանրամարտի ֆեդերացիայի հետ, որի անդամների այցերն Արցախ շարունակական են դարձել:

Հերթական ոգեւորիչ իրադարձությունը ծանրամարտի վառ դեմքերի հյուրընկալումն էր Արցախում, որը ոգեւորիչ էր ոչ միայն մարզիկների, այլեւ մեր դիրքապահների, մարզասերների, ուսանողների համար: Ոչ պաշտոնական այցով օրերս Արցախում էին ՀՀ ծանրամարտի ֆեդերացիայի անդամները՝ ծանրամարտի տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ, Ծանրամարտի ֆեդերացիայի քարտուղար Փաշիկ Ալավերդյանի գլխավորությամբ: Արթուր Շիրինյանի ուղեկցությամբ պատվիրակությունն այցելությունն սկսեց առաջնագծից, հյուրընկալվեց մարզադահլիճներում, այնուհետեւ ԱրՊՀ-ում հանդիպում ունեցավ ուսանողների հետ: Համալսարանականներն ուսանողների եւ հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանի գլխավորությամբ դիմավորեցին եւ հարց ու պատասխանի տեսքով անմիջական զրույց ունեցան հյուրերի հետ: Պատիվ ունեցանք ավելի մոտիկից շփվելու ՀՀ ծանրամարտի աստղեր Սիմոն Մարտիրոսյանի

եւ Գոռ Մինասյանի հետ:

Սիմոն Մարտիրոսյանը ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց թիմի անդամ է, 2016թ. 31-րդ ամառային օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, 2017թ.՝ Եվրոպայի չեմպիոն, 2014թ. դարձել էր պատանեկան օլիմպիական խաղերի հաղթող: 2018թ. Թուրքմենստանում կայացած աշխարհի առաջնությունում Սիմոն Մարտիրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն: 109 կգ քաշային կարգում պոկում վարժությունում իր գլխավերեւում պահեց նախ՝ 190 կգ, ապա՝ 195 կգ: Հրումում նա բարձրացրեց 240 կգ՝ սահմանելով ռեկորդ: Երկամարտի 435 կգ արդյունքով 21-ամյա Սիմոն Մարտիրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն:

Գոռ Մինասյանը գերծանր քաշային կարգում հանդես եկող ՀՀ հավաքականի ծանրորդ է: Ընթացող տարվա ամառային օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է:

Ծանրամարտիկները խոստովանում են, որ մեծ սիրով են Արցախ գալիս: Մեր զոհված տղաների արյան գնով ձեռք բերված հողի վրա իրենց լիարժեք են զգում, հասարակության վերաբերմունքից՝ ավելի գնահատված: Եկել են կիսվել իրենց հաղթանակի ուրախությամբ, ոգեւորել ու ոգեւորվել քաջերի ոգով: Աշխարհի առաջնությունում հաղթանակից հետո խորհրդանշական են համարում Արցախ այցելելը: Նպատակահարմար են գտել այցելությունն սկսել առաջնագծից՝ Ռոբերտ Աբաջյանի դիրքից: Փորձում են իրենց այցով ավելի մեծ ճանաչում բերել Արցախին:

Փաշիկ Ալավերդյանը, ներկայացնելով ծանրամարտ մարզաձեւը, ասաց, որ դրա պատմությունը խոր ակունքներ ունի, իսկ անցած ուղին հերոսական անվանեց: Ծանրամարտիկի հաջողության հասնելու՝ սառը ծանր երկաթի հետ գործ ունենալու դժվարին ճանապարհին պետք են աշխատասիրություն, նվիրվածություն, հավատարմություն: Սրանք հայ ազգին բնորոշ հատկանիշներ են: Իրենց պարտքն են համարում արժանապատվորեն շարունակել հայ ծանրամարտի հերոսական ուղին ու կրկին հերոսացնել: Մարզիչը կոչ է անում երբեք չբավարարվել ձեռք բերածով, միշտ ձգտել նոր հաջողությունների ու հաղթանակների:

Վնասվածքավտանգ այս մարզաձեւում քիչ չեն խոչընդոտները, բայց միայն նա է հասնում հաջողության, ով անկոտրում ոգով ձգտում է դրան՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները: Ծանրամարտի պարապմունքները թերեւս տհաճ են, քանի որ գործ ունեն ծանրածողի հետ, որը ո՛չ խոսում է, ո՛չ համոզվում, ո՛չ էլ հնազանդվում: Սակայն պարապմունքներից ստացած արդյունքը հաճելի է: Ծանրածողը դառնում է բարեկամ, ընկեր, որին հարգում են եւ ծանրամարտի քաղաքավարության կանոնների համաձայն՝ նրա վրայով չեն անցնում:

Քննարկվող հարցերից էր նաեւ այն, թե ինչպես են պրոֆեսիոնալ ծանրամարտիկները համատեղում կարիերան ու անձնական կյանքը: Փորձառու մարզիչը հարցին պատասխանեց իր օրինակով: Սպորտը չի կարող խոչընդոտել անձնական կյանքին, այն միանգամայն դրական դեր է խաղում մարզիկի կյանքում: Ճիշտ է, երիտասարդական տարիներն է խլում, բայց սպորտի միջոցով այնպիսի փորձ եւ հմտություն է ձեռք բերվում, որը խթանում է հետագա ողջ կյանքի ցանկացած ոլորտում հաջողության հասնելուն: Պարզաբանվեց նաեւ այն թյուրիմացությունը, թե ծանրամարտը բացասաբար է ազդում դրանով զբաղվող աղջիկների կամ կանանց վրա: Վստահեցրին, որ ծանրածողի համար տարբերություն չկա, թե ով է իրեն բարձրացնում, կարևորը՝ մարզիկը լինի պատրաստ: Եվ դեռ հավելեցին, որ կին ծանրորդն ունի առավելություն. ոչ մի այլ սպորտաձեւ այնպես չի կոփում կոնքերը, որքան ծանրամարտը, ուստի ավելի հեշտ ծննդաբերելու համար երաշխավորվում են պարապմունքները:

Հաղթական ոգին, նպատակասլացությունն ու կամքը հուսադրում են, որ հայ ծանրամարտը շատ աստղեր կունենա, իսկ նրանց խորհրդանշական այցերն Արցախ ավանդույթ կդառնան:

ՄԱՐՏԱՐՎԵՍՏԸ՝ ԿՅԱՆՔԻ ԴՊՐՈՑ

Մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է լինել ուժեղ, համարձակ եւ ինքնավստահ: Դրանց հասնելու համար կան բազմաթիվ հոգեբանական մեթոդներ եւ սպորտային պարապմունքներ: Դրանք տարբեր ձեւերով են ներազդում մեզ վրա, բայց ինչպես սպորտը, այնպես էլ հոգեբանական թրենինգներն ինչ-որ չափով դրական ազդեցություն են ունենում մեր անձի որոշ հատկությունների վրա: Մարտարվեստները մարդու մեջ դաստիարակում են մրցակցության ոգի, կոփում կամքն ու բնավորությունը: Արցախում այս պահի դրությամբ գործում են մարտարվեստների շատ ոճեր, որոնցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով համապատասխանում է կոնկրետ մարդու: Կարատեն, ձյուդոն, վինգչունը համապատասխանում են ինչպես աղջիկներին, այնպես էլ տղաներին, իսկ այն մենամարտային մարզաձեւերը, ինչպիսին են թայլանդական բռնցքամարտը (մուայ թայը), բռնցքամարտը, ըմբշամարտը, քիքբոքսը լավագույն ընտրություն կլինեն մարդկության ուժեղ կեսի համար: Չնայած ճաշակներն անհատական են, եւ նույնիսկ փխրուն ու նուրբ աղջիկը կարող է հաջողությամբ յուրացնել, օրինակ, մուայ թայը: Կարեւորն է՝ ունենալ ցանկություն եւ ձգտել նպատակին:

Արցախցի մարզիկների մեծ մասը ձգտում ունի մրցութային ոճերով պարապելու: Պատվանդանին կանգնելու եւ հաղթանակի բերկրանքը վայելելու միտումը մեր մարզիկների մոտ գուցե եւ պայմանավորված են նրանով, որ այդպիսով հնարավոր է դառնում աշխարհին ճանաչելի դարձնել Արցախը, ինչը խրախուսվում է մեր պետության կողմից: Միջազգային մրցասպարեզներում մրցանակային տեղեր զբաղեցրած մեր մարզիկներն ստանում են խոշոր դրամական պարգեւներ: Բայց եւ քիչ չեն այն մարզիկները, որոնց համար սպորտի, առավել եւս մարտարվեստների սկզբունքներին հետեւելը կյանքի մրցահարթակում կիրառել կարողանալու նպատակով վեր է ցանկացած մրցաշարի պատվանդանին կանգնելու բերկրանքից եւ ամենախոշոր դրամական պարգեւից:

Ինչո՞ւ է կարեւոր մարտարվեստներով պարապելը, ի՞նչ հատկություններ կարելի է ձեռք բերել դրանց միջոցով, ի՞նչն է կարեւոր հաջողության հասնելու համար: Հարցերն ամփոփեցինք «Լուսարար»-ի մարզական էջի հերթական հաճելի զրուցակցի՝ ***Շահեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ*** *հետ, որը մարտարվեստների մասին տեղյակ է ոչ միայն լսածով: Վինգչուն մարտարվեստում շուրջ ութ տարվա մարզվելու փորձ ունեցող, սեփական փորձով ու խանդավառությամբ կիսվելու պատրաստակամ մարզիկի հետ ընդգրկուն հարցազրույց ունեցանք:*

- Շահե՛ն, կպատմե՞ք, թե ինչ դրդապատճառներ ունեիք վինգչունի պարապմունքների հաճախելու համար:

- Առաջին եւ ամենակարեւոր դրդապատճառը ցանկությունն էր: Հանգամանքների բերումով եկավ մի պահ, երբ հնարավորություն ունեցա աշխատել ինձ վրա: Ուզում էի ֆիզիկական լավ տվյալներ ձեռք բերել, դառնալ ավելի ինքնավստահ: Սկզբնական շրջանում վինգչունը, նորույթ լինելով Արցախում, այնքան էլ հայտնի չէր: Երբ սկսեցի հետաքրքրվել, թե որտեղ կարող եմ նպատակիս ուղղությամբ աշխատել, ծանոթացա մարզիչ Սայաթ Բաղդասարյանի հետ, որն այժմ Արցախի վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայի նախագահն ու գլխավոր մարզիչն է: Նա ավելի մոտիկից ինձ ծանոթացրեց վինգչուն մարտարվեստի տեխնիկայի եւ սկզբունքների հետ: Վինգչունն ինձ համապատասխանեց, իսկ հետագա տարիների պարապմունքներն արդեն իսկ ինձ մոտեցրին նպատակիս:

- Իսկ նպատակին մոտենալն ու հասնելը նշանակում է արդեն կարելի՞ է պարապմունքները դադարեցնել:

- Դադարեցնել պարապմունքները՝ անցնելով այդքան ճանապարհ, ինձ համար թերեւս նշանակում է դավաճանել ինքս ինձ: Ժամանակի ընթացքում նոր փորձի եւ հմտությունների ձեռքբերման հետ նոր նպատակներ են դրվում, նոր թիրախներ են առաջանում: Որպես վինգչունի մարզիկ՝ ցանկանում եմ հասնել 4-րդ կարգի վարպետության որակավորման: Բայց երբ առաջին անգամ ոտք դրեցի մարզադահլիճ, ուրիշ նպատակ ունեի: Պարապմունքներն օգնում են ավելի լավ ճանաչել ինքդ քեզ, հստակ նպատակներ դնել եւ հասնել դրանց: Պատահում է, որ որոշ ժամանակ տարբեր պատճառներով չի ստացվում հաճախել պարապմունքի: Դա բացասաբար է ազդում ֆիզիկական վիճակի վրա: Վերսկսելով՝ ավելի շատ աշխատանք է պահանջվում կրկին վերականգնվելու համար: Ուրեմն՝ ցանկացած մարզիկ պետք է հստակ գիտակցի, թե ինչ է պետք իրեն, եւ օգտագործի եղած հնարավորությունները՝ իրագործելու իր նպատակը:

- Արցախում մարտարվեստները զարգացած են, եւ ուրախությամբ ենք նշում մեր չեմպիոնների անունները, որոնք էլ յուրովի ներկայացնում են մարտարվեստներով նպատակասլաց զբաղվելու կարեւորությունը հաղթանակի հասնելու համար: Իսկ ինչո՞վ է կարեւորվում այն նրանց համար, ովքեր նպատակ չեն դրել մրցել ու հաղթել մրցաշարերում:

- Ինչպես արդեն նշվել է, գլխավոր դեր ունի նպատակը: Եթե մարզիկը նպատակ է դրել հաղթել մրցաշարում, ապա նա ավելի շատ ժամանակ է հատկացնում պարապմունքներին, պարապում ծանրաբեռնված գրաֆիկով, բոլոր ռեսուրսները ներդնում պարապմունքի մեջ, համառորեն պայքարում խոչընդոտների դեմ ու միայն այդ դեպքում կարող է հաղթանակի հասնել: Չեմպիոնի կոչման հասնելու ճանապարհը հեշտ չէ: Բայց հեշտ չէ նաեւ այն ուղին, որն ընտրում են ոչ միայն հաղթանակների հասնելու, այլև մարտարվեստների միջոցով բազմակողմանի զարգանալու նպատակով: Մարտարվեստների պարապմունքները միայն մրցաշարերում հաղթելու համար չեն: Ցանկացած մարտարվեստի պարապմունք ներառում է ֆիզիկական պատրաստություն եւ ուժային ցուցանիշների բարձրացում: Պարբերաբար պարապելով՝ մարզիկը սկսում է ֆիզիկապես իրեն ավելի լավ զգալ: Երկարատեւ փորձուսուցումը ռինգում կամ տատամիի վրա մարդուն նախապատրաստում է կյանքի էքստրեմալ իրավիճակներում ինքնապաշտպանվել: Մարտարվեստներով պարապողները դառնում են ինքնավստահ: Ընդ որում, դա արտահայտվում է ոչ միայն ֆիզիկական ոլորտում, այլեւ կենցաղում ու աշխատանքում: Երբ իսկական ինքնավստահություն է հայտնվում, մարդը կարող է ցնցող բարձունքների հասնել կյանքում: Հաճախելով մարտարվեստի որեւէ խմբակ՝ հնարավորություն կա ծանոթանալու հետաքրքիր մարդկանց հետ, որոնք նույնպես հաճախում են պարապմունքների: Կարեւոր չէ, թե ինչ տարիքի են: Համատեղ հոբբին միավորում է նրանց:

- Ձեր անձնական փորձն ու գիտելիքները վինգչուն մարտարվեստում ավելի զարգացնելու, մասնագիտացնելու եւ մարզչական գործունեություն ծավալելու նպատակ չունե՞ք:

- Առայժմ ազատ ժամանակի բացակայության պատճառով լուրջ քայլեր այդ ուղղությամբ ձեռնարկել չի ստացվում, բայց մտորումներ կան: Ներկա պահին անձնական օրինակով փորձում եմ ավելի շատ երեխաներ, ինչու չէ, նաեւ հասուն տարիքի մարդիկ ընդգրկել մարտարվեստների աշխարհ: Դա կյանքի հզոր դպրոց է, որտեղ իր ուժերին չվստահող տղան կամ աղջիկը կարող է կոփվել, ձերբազատվել բարդույթներից: Ուրեմն՝ կատարեք ճիշտ ընտրություն, դրեք ձեր առջեւ հստակ նպատակներ, պարապեք մարտարվեստներով, եղեք առողջ, ինքնավստահ եւ հաջողակ մարդ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ - 110

ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ ԾՆՎԱԾ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ ՀՌՉԱԿՎԱԾ ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԸ



«Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, անգլերենն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու, հայկական է: Ուրեմն՝ ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

Վիլյամ Սարոյան

Վիլյամ Սարոյանը նորագույն շրջանի համաշխարհային գրականության մեծագույն դեմքերից մեկն է, որը նոր շունչ ու որակ հաղորդեց ամերիկյան գրականությանը: Նրա կերպարները շնչում են էականությամբ, լավատեսությամբ: Նրա գրվածքների առանցքում հասարակ մարդն է՝ կյանքի բարդ շրջադարձներով անցնող: Նա գրում է պարզ ու շիտակ, ինչպես ապրում է մարդկության մեծ մասը: Սարոյանը ժողովրդի մարդն է, գրող, որ գիտեր հաղթահարել դժվարությունները և Մարդ մնալ: Եվ սա հեշտ չէ… Դա հեշտ է միմիայն մեծերի համար, որոնք ապրում են անշինծու բնականությամբ և գրում առանց պաճուճանքի՝ դառնալով կյանքի վավերագիրներ՝ չվարանելով արտահայտել նաև աշխարհը խեղող սխալների մասին… Այդպիսին է Սարոյանը:

1908թ. օգոստոսյան մի շոգ գիշեր (օգոստոսի 31-ին) ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի հայաշատ Ֆրեզնո երկաթուղային քաղաքավանում Բիթլիսից գաղթած չքավոր հայ գաղթականներ Արմենակ և Թագուհի Սարոյանների ընտանիքում ծնվում է 4-րդ և վերջին զավակը՝ ապագա մեծահամբավ գրող Վիլյամ Սարոյանը: 3 տարեկանում Սարոյանը զրկվում է քարոզիչ, բանաստեղծ հորից, և միայնակ մայրը չի հասցնում զավակների ապրուստը. ԱՄՆ-ում դժվարին ժամանակներ էին, գաղթականների մեծ մասը՝ ծայրահեղ աղքատներ: Աղքատությունը ծվարել էր նաև Սարոյանների ընտանիքում: Շուտով Վիլին և ընտանիքի մյուս զավակները հայտնվում են որբանոցում, որտեղ մնում են մոտ 5 տարի: Դա մի ապաստարան էր, ուր ուտում էին ձեռքներն ընկած ամեն բան: Սարոյանը ջերմ ակնածանքով է հիշում իռլանդուհի խոհարարին, որի համեղ, կշտացնող ուտելիքներով սնվում էին որբանոցի սաները: Որոշ ժամանակ անց Սարոյանն իր եղբոր ու քույրերի հետ դարձյալ տանն էր: Հերթը հասնում է Հայաստանի ուտեստներին ու Բիթլիսի հանրահայտ ճաշատեսակներին: Դա Արևելքի համադամ խոհանոցն էր: Ուշագրավ էր տան մթնոլորտը, և տան բոլոր անդամները հավասար պարտականություններ ունեին: Եվ հացն անուշ բուրում էր տանը, առանձին օրերի՝ տապակած էր գառան թիակը:

Տունը, որտեղ ապրում էին, հիշեցնում էր խարխուլ խրճիթ: Հետագայում նրանք ապրում են փոքրիկ բարվոք տան մեջ:

Սարոյանը շատ խորն է զգացել հոր վաղաժամ բացակայությունը: «Իմ քթածակերում վշտի և մենակության հոտ կար»,- մի առիթով գրել է նա:

Գրողի ապրած մանկությունն ու պատանեկությունը, լինելով ոչ նպաստավոր, նրան ճանաչել են տալիս կյանքի բազմազան շերտերը: Դպրոցից հետո Սարոյանը, ի տարբերություն իր տարեկիցների, 7 տարեկանից փողոցում թերթեր էր վաճառում և եթե 1 դոլար էր վաստակում, ընտանիքը դա համարում էր լավ շահույթ, որովհետև այդ գումարով կարող էին բավարար մթերք գնել նպարավաճառի խանութից: Ինչպես ինքն է վկայում, փողոցում հիանալի կրթություն ստացավ… Գրողն ինքն իր մտքում երդվել էր, որ երբ նշանավոր մարդ դառնա, հարստանա, թերթ վաճառող որևէ տղայի հաճույք պատճառելու համար ինքն ամեն օր կգնի որևէ թերթ և կվճարի 1 դոլար: Իր առաջին գիրքը լույս ընծայելուց հետո Սան Ֆրանցիսկոյում նա այդ բանը որոշ ժամանակ անում էր…

Այնուհետև աշխատեց որպես փոստատար, սևագործ բանվոր, սեզոնային մշակ, Սան Ֆրանցիսկոյում՝ հեռագրատան ծառայող, սպորտային ապրանքների վաճառող, պահեստի բանվոր: Ինչպես ինքն է վկայում, փողոցում հիանալի կրթություն ստացավ… Սարոյանը կանոնավոր կրթություն չի ստացել, բայց շատ բան է քաղել գրքերից ու կյանքից:

Այն ժամանակ, երբ ինքը դեռ պատանի էր և դեռ չգիտեր, որ գրելն իր համար կլիներ ուրիշներին օգտակար լինելու միջոց, կարդալով իմացավ շատ բան և 14 տարեկանում մի գրամեքենա գտնելով՝ սկսեց գրել: Իսկ աշխարհում մարդիկ ապրում էին անհավասար: «Բայց միակ իսկական մարդիկ աղքատներն են: Նրանք գալիս են, քաղցում, աշխատում, ստեղծում, ծնում և մահանում՝ պահպանելով բնության հետ մեծ հաղորդակցությունը: Հարուստները պատկանում են ինչ-որ գերադաս մի ցեղի… Իսկ դա ալյասերված մի ցեղ է, որ թեև կապ ունի աշխարհի հետ, բայց ոչ մի առնչություն՝ բնության հետ»,- գրում է Սարոյանը իր հուշապատումներում:

Ինչպիսի՞ն էր կյանքն Ամերիկայում հայերի համար. ազգի կյանքը դժվար էր, վիրավոր, մեկ օղակը մյուսից անջատված, և յուրաքանչյուր հայ աշխատում էր իր ապրուստն ապահովել և միևնույն ժամանակ շարունակել հայ մնալ: «Իսկ Հայաստանից հասած լուրերից բոլորը հասկացան, որ մենք նորից կորցրել ենք…»: Ավանդապաշտ հայերը համախմբվել էին եկեղեցու շուրջ՝ չկորցնելով հայրենասիրական ոգին. այլապես ինչպե՞ս հայ մնային: Սարոյանը սիրով է հիշում բոլոր լավ հայերին: Եվ կային ազգային նվիրյալներ, ինչպես պրոֆ. Գալֆոյանը՝ իր փառահեղ եկեղեցական երաժշտությամբ և հայրենասիրական երգերով:

Իր մասին ինքնաբնութագրական տողեր է գրում Սարոյանը. «Երիտասարդ մի մարդ էի, արագաշարժ, իմ նոր զգեստներով ուրախացող, աղմկոտ և ծիծաղկոտ, իսկ հիմա դարձել եմ թափթփվածի մեկը, ուշադրություն չեմ դարձնում հին հագուստներիս, անփույթ եմ կեցվածքի նկատմամբ, քայլում եմ դանդաղ և չեմ կարողանում ճամփորդել: Իսկ ես ինչե՞ր էի ակնկալում… Ասենք, արտաքուստ դատելով, ես ամեն ինչ ստացա՝ համբավ, դրամ: Բայց դա շատ անձնական ձեռքբերում է, դա իմ իսկական նպատակը չէր…»:

Իմաստնորեն նայելով կյանքի աչքերին՝ մեծ հայը խորապես ըմբռնում էր կյանքի հարափոփոխ ընթացքի ամեն մի վայրիվերում. «Որևէ գրող, երբ տարիքն առնում է և զգում, որ այլևս չի կարողանում անել այն, ինչ անում էր առաջներում, հարկ չկա, որ մտատանջվի. ամենահմաստուն բանը կլիներ այդ ամենին նայել հանդարտությամբ և համակերպումով՝ առանց իրեն պարտադրելու աշխարհում ինչ-որ հերոս լինելու վիճակը: Կարիք չկա դժբախտ զգալ այն մտքից, որ ինքը փոխվել է: Ի վերջո, ժամանակի ընթացքում ամեն ինչ փոխվելու է»:

Սարոյանը, հետագայում շրջագայելով և ապրելով Եվրոպայում (Փարիզ), շատ հաճախ էր գալիս Ֆրեզնո՝ իր ծննդավայրը և կանգնում իր տնկած ծառերի մոտ ու պտուղ քաղում դրանցից: «Կալիֆոռնիայի այդ մասում հերիք է, որ մի կտոր հող ունենաս ու մշակես, և դու կստանաս այնպիսի գեղեցիկ բաներ, որոնց դիտելը և վայելելը շատ հաճելի է»:- Այդպես հաճախակի էր անում անուն հանած հայը՝ անցնելով իր սեփական կյանքի ու հիշողությունների պատմության միջով:

Սիրում էր որդուն ու դստերը, որոնք շարունակելու էին Սարոյան ազգատոհմի սերնդաբանությունը: Ինչպես գրողն է ասում. «Դա հարստացնում էր մարդկային փորձառությունդ»:

Սարոյանը հայի գենոտիպի մարմնացումն էր, կրողն ու շարունակողը ու թեև ծնվել է օտար հողում, բայց հպարտացել է իր նախնիների բիթլիսյան ծննդավայրով. «Ես հաճախ եմ գովերգել Բիթլիսը, որովհետև դա իմ ժողովրդի լեռնանիստ քաղաքն է, որոշ իմաստով՝ ինքնին մի ազգ ու երկիր, ուր կողք կողքի ապրող ժողովուրդները… միմյանց ավելի սերտորեն են կապված եղել, քան ուրիշ քաղաքներում ապրող իրենց ցեղակիցներին:

Առաջին տեղում դնում եմ հայերին, քանի որ Բիթլիսը հին Հայաստանի մի մասն է: Եվ ահա, երբ բազմահազար բիթլիսահայերը հասկացան, որ այստեղ իրենց սպասող ապագան լավագույն դեպքում լինելու է հերոսական, իսկ վայրագ մահը՝ գրեթե անխուսափելի, նրանք կանգնեցին լուրջ երկընտրանքի առջև. մնա՞լ Բիթլիսում և մեռնել որպես հայ, թե՞ մեկնել Ամերիկա ու այնտեղ մեռնել՝ հասնելով ծերության: (Սա պետականազուրկ, անպաշտպան ժողովրդի հուսահատ ճիչ էր)»: Երբ Ֆրեզնոյում հանդիպում էր մեկին, որը հիացնում էր իրեն, անմիջապես հարցնում էր՝ որ քաղաքից է, ծնողները որտեղից են, և «բիթլիսցի ենք» պատասխանը միշտ ուրախացնում էր, ու գոհունակությամբ էր մտածում. «Սա էլ մերոնցից է»: Թուրքական հայակործան ծրագիրը կախված էր օդում, և ամեն մի արևմտահայ զգում էր մեծ ու օրհասական վտանգը: Դա հայերի խոշտանգումն էր, որ եղավ պանթուրքիստական քաղաքականության շնորհիվ 1915թ.:

Օվկիանոսից այն կողմ մի լավ հայ մի լավ հայի հանդիպելիս զգում էր մեծ սփոփանք, մեջք, թիկունք, պաշտպանություն, հայրենական կանչ ու կարոտ: Մի անգամ Սան Ֆրանցիսկոյում գրողը հանդիպում է հոգով բանաստեղծի՝ պրն Գաբրիել անունով: Գրողը հարցնում է, թե ինչպես պատահեց, որ լինելով գերազանց կահույքագործ, սկսեց բանաստեղծություններ գրել: Պատասխանը լինում է. «Միտքս անշարժ չի ուզում մնալ ու սկսում է հետս խոսել, և լսածս գրի եմ առնում»:

Մի անգամ ծանոթներից մեկը պատմում է իր հոր մասին. «Վիլի, ուզում եմ իմանաս, որ Բիթլիսում հայրդ եղել է իմ ուսուցիչը: Արմենակ Սարոյանը լավագույնն էր այս աշխարհում ճանաչածս մարդկանցից»: Դա գրողի կյանքում ապրած ամենահպարտ պահերից մեկն էր…

Եվ հետո աշխարհի խառնամբոխ խաչմերուկներում ինչքա՜ն հայեր են իրար հանդիպել: Եվ ինչքա՜ն հանդիպում եղել է եզակի ու անմոռաց: Այդպիսի հանդիպումներից մեկն էլ արտացոլված է Սարոյանի «Հայը և հայը» անկրկնելի պատմվածքում, որը հայրենաբաղձության, հայության մեծ տենչանքի մարմնացումն է: Ռոստովում իրար հանդիպած 2 հայերի կարոտի և ազգային ցավի արտացոլումն է այն: Գինետան կողքով անցնելիս պատմվածքի հերոսը տեսնում է մի սպասավորի և կռահելով, որ հայ է, մտնում է այնտեղ և հայերենով հարցնում, թե ինչպես է: Ծավալվող զրույցը սաստկացնում է ազգային ցավն ու զայրույթը հայի բախտի հանդեպ՝ վերածելով ցասման ընդդեմ թուրք եղեռնագործների, դառնալով ցավագին պոռթկումի մռունչ. «…Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար հպարտ մարդկանց այս ցեղը, որի պատմությունը պատմված, բոլոր կռիվները մղված ու տանուլ են տրված, որի շինությունները խորտակված, գրքերը չընթերցված, ու երգերը լռած են, և որի աղոթքները անպատասխան են մնացած:

Փորձեք կործանել այս ցեղը: Ասացեք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը դարձյալ ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսե՛ք՝ կկարողանա՞ք: Քշեցեք տներից անապատ, մի՛ մոռացեք ձեռքներից խլել ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի՛ մատնեցեք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսե՛ք՝ դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը քսան տարի հետո հանդիպեն աշխարհի որևէ մասում, ծիծաղեն ու աղոթեն իրենց մայրենի լեզվով:

Ձանացեք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, շունչանորդինե՛ր, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձե՛ք ջնջել, տեսե՛ք, թե նրանք պիտի չստեղծե՞ն մի նոր Հայաստան»:

Սարոյանը շատ էր գրում, հաճախ նաև՝ ամեն գիշեր: Բայց 22 տարեկան երիտասարդ գրողն սկզբնական շրջանում շատ էր նեղվում, որ իրեն չեն տպագրում: Դժվար տարիներ էին, և աղքատ ընտանիքներն ավելի էին աղքատանում: Ի վերջո, համառությունը վարձատրեց գրողին, ու տպագրվեց Սարոյանի նախ՝ առաջին պատմվածքը և ապա առաջին գիրքը՝ «Խիզախ պատանին թռչող ճոճաթոռի վրա»՝ ձեռք բերելով գրական լայն ճանաչում: Սարոյանի առջև բացվում են գրական աշխարհի դռները, և նա տպագրվում է հայտնի պարբերականներում՝ «Ամերիքըն մերկուրին», «Աթլանթիք մանթլին», «Հարփըրզ մագըզին», «Ռեյլ ռեվյուն»: Գրաքննադատները հիացմունքով են խոսում Սան Ֆրանցիսկոյում ի հայտ եկած ամենանշանակալի գրական տաղանդի մասին:

Առաջին գրքից ստացած հոնորարով Սարոյանը եկավ Հայաստան՝ տեսնելու իր նախնիների երկիրը, ծանոթանալու հայ գրողների հետ: Ամենաուշագրավ հանդիպումը կայացավ Մեծն Չարենցի հետ Մոսկվայում շրջագայելիս, որի գրած «Ես իմ անուշ Հայաստանի»-ն անգիր գիտեր. դա նրա ունկերում «Հայր մեր» աղոթքի պես էր հնչում… Հետագայում նա հայրենիք այցելեց երիցս՝ 1960թ., 1976թ., 1978թ.: Հայաստանը գրողի համար կենսատու ավիշ էր: Նա հասավ Բիթլիս, Վան՝ պատգամելով. «Ուր որ երթաս, պոռա՛ Հայաստան»:

Նյու Յորքում հրատարակված իր պատմվածքների երկրորդ գիրքը, որ անվանեց «Շնչառություն», նվիրեց «անգլերեն լեզվին, ամերիկյան հողին և հայկական ոգուն»:

Սարոյանի կյանքն արտացոլված է իր հերոսների կերպարներում: Նա փոքր ժանրի՝ պատմվածքի և նովելի, հիրավի, համաշխարհային վարպետ է: Հետագա տարիներին գրողը հրատարակում է իր լավագույն ստեղծագործությունները՝ վեպեր, վիպակներ, պիեսներ՝ «Իմ սիրտը լեռներում է», «Ձեր կյանքի ժամանակը», «Հե՜յ, ով կա այդտեղ», «Ուզենք-չուզենք, հայ ենք», «Խաղողի այգին», «Մարդկային կատակերգություն», «Հայրի՛կ, դու խենթ ես», «Վեսլի Ջեկսոնի արկածները», «Իմ անձը աշխարհի վրա», «Իմ անունը Արամ է»… Սարոյանը տպագրել է 50 հատորից ավելի գրքեր, բայց մի քանիսը մնացել են անտիպ… «Մարդը՝ ահա այն միակ բանը, որն ինձ հետաքրքրում է»,- ընդգծում էր Սարոյանը:

Թե՛ պիեսների, թե՛ պատմվածքների հերոսներն աչքի են ընկնում բարությամբ, ազնվությամբ, վճռականությամբ, դժվարություններ հաղթահարելու ուժով: Այդպիսի լավատեսությամբ են օժտված «Իմ սիրտը լեռներում է» սիրված պիեսի հանրածանոթ հերոսները՝ Ջոնին, Բեն Ալեքսանդրը, Ջասպեր Մեք-Գրեգորը… Պիեսը պատմում է աղքատ, բայց վեհանձն մարդկանց պատմությունը: Չունենալով ոչինչ՝ Ջոնիի ընտանիքը հյուրընկալում է ծերանոցից փախած Մեք-Գրեգորին, որը հիացրել է շրջապատին իր դերասանական արվեստով, երաժշտությամբ: Պիեսի հերոսի միջոցով Սարոյանը ցույց տալով վեհ ու մաքուր հոգիներին ճվլող աշխարհի ծռությունը՝ ասում է. «Ես որևէ մեկի անունը չեմ տալիս, բայց ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»: Իր երկերով գրողն իրագործում էր իր ծրագիրը՝ աշխարհն ավելի լավը դարձնելու հնարավորին պահանջը:

1943թ. «Մարդկային կատակերգությունը» էկրանացվեց, և ֆիլմի սցենարի համար Սարոյանը դարձավ օսկարակիր: Վիպակը պատերազմի ահավոր երևույթի ժխտման գեղարվեստական արտացոլումն է: Մինչ այդ՝ 1939թ. «Քո կյանքի ժամանակը» պիեսի համար նրան արժանացրել են գրականության ամենահեղինակավոր Պուլիցերյան մրցանակի, որից ինքը հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ պետությունը չպետք է միջամտի գրականության գործերին:

Պատմում են, որ Սարոյանն ու Հեմինգուեյը հաճախ են «հակամարտել», և ասում, որ Փարիզի սրճարաններից մեկում մինչ օրս մի ցուցանակ կա, որի վրա գրված է. «Այստեղ վիճել են Հեմինգուեյն ու Սարոյանը»:

Սարոյանի գրվածքների ճնշող մասն ունի կենսագրական հենք, որը կառչած է հայոց արմատներից: Այդ մասին նա վկայում է, որ ինքն է իր բոլոր հերոսների նյութը: Մի անգամ, երբ մի լրագրող հարցնում է՝ ձեր գրական արտադրության լավագույն տարրը ձեր հայկականությո՞ւնն է, նա անվարան պատասխանում է՝ այո: Անհայտ է, որ բոլոր հայերը, ապրելով Ամերիկայում, հեռու են ամերիկացի լինելուց:

1978թ. Հայաստան կատարած վերջին այցելության ժամանակ մեծ շուքով նշվում է Սարոյանի ծննդյան 70-ամյակը: Նա վերադարձավ Ամերիկա՝ իր հետ ջերմ հուշեր տանելով: 1981թ. Ֆրեզնոյում իր մահկանացուն կնքեց աշխարհի մեծագույն հայերից մեկը՝ Վիլյամ Սարոյանը: Կտակի համաձայն՝ նրա մասունքներից մի բուռ հանձնվեց հայոց հողին: Երևանի Պանթեոնում տեղադրված է նրա դամբանաքարը: Հայությունը հպարտանում է իր համբավավոր զավակով, նրա գրական ժառանգությամբ և Մեծ Հայի տեսակով:

2008-ը հայտարարվել էր Սարոյանական տարի: 10 տարի անց՝ նրա 110-ամյակի տարում, հեռուստատեսությամբ, ռադիոյով հնչում են նրա երկերը, նրան նվիրված հաղորդումներ, և թատրոններում ամենուր բեմադրվում են նրա պիեսները: Մամուլն արձագանքում է սարոյանական հայաշունչ պատմվածքներին ու պիեսներին:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան միջն. հոսքային դպրոցի հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՃԱՆԱՊԱՐՀ

ԼԱՎՆ ՈՒ ԲԱՐԻՆ՝ ԸՆԴ ՔԵԶ

(դիմանկար)

Արցախի հանրային հեռուստատեսությամբ բավականության, հպարտության, խանդաղատանքի անխառն զգացումներով դիտեցի Ճարտար քաղաքի երեք դպրոցների (հ. 1, 3, 4), քիմիա ու կենսաբանության առարկաների նվիրյալ ուսուցիչ Ջավադ Հակոբյանի հետ ամիսներ առաջ կազմակերպված հետաքրքիր ու բազմաբովանդակ հարցազրույցը:

Իսկ մի քանի օր հետո տողերիս հեղինակի խնդրանքով գրասեղանիս մեկ տասնյակից ավելի շնորհակալագիր-պատվոգրեր էին, այդ թվում՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության, Մարտունու շրջվարչակազմի ժողկրթբաժնի, Ճարտարի քաղաքապետարանի, գումարած՝ Արցախի Նախագահի շնորհած «Երախտագիտություն» մեդալը՝ մանկավարժական անբասիր աշխատանքի, տարբեր տարիների ընթացքում կազմակերպված դպրոցական օլիմպիադաներում սաների հաջողությունների համար, միաժամանակ՝ տասնյակ հարյուրավոր աշակերտների սերն ու հարգանքը, ծնողների, հասարակության կողմից՝ պատկառանք, համակրանք առ երիտասարդ ուսուցիչը: Տեղին է հիշել ժողովրդական իմաստուն խոսքը՝ ինչ որ ցանես, այն էլ կհնձես….

Հիրավի, դեռ կյանքի միջօրեի նախաշեմին իր աշխատանքային գործունեության կիսաճանապարհին երիտասարդ ուսուցչի հունձքը արգասավոր է: Դա էլ հիմք հանդիսացավ, որ տողերիս հեղինակը ստեղծագործության հերոս ընտրի իր նախկին աշակերտին, կրտսեր գործընկերոջը, երիտասարդ մանկավարժ-բարեկամին՝ Ջավադ Հակոբյանին: Ի դեպ, դեռ դպրոցական տարիներից ուսումնատենչ այդ տղան՝ Ջավադը, իրեն դրսևորել է, ինչպես ասում են, «Առողջ հոգի՝ առողջ մարմնում» նշանաբանով: Միաժամանակ առանձնահատուկ սեր ունենալով դեպի բնագիտական առարկաները՝ բնատուր ընդունակություններով այդ պարմանին, սերելով արհեստասեր, աշխատասեր հորից՝ Համլետից և մաթեմատիկայի բազմավաստակ ուսուցչուհի մայր Օֆելյա Հարությունյանից, փայլուն կերպով սովորեց և ավարտեց հայրենի Ճարտարի միջնակարգ դպրոցը: Արժանապատվորեն ծառայել է Արցախի պաշտպանության բանակում: Զորացրվել, ապա սովորել և ավարտել է Արցախի պետական համալսարանի քիմիա-կենսաբանություն բաժինը: Աշխատանքի է անցել Ճարտարի երեք դպրոցներում: Աշխատանքային առաջին իսկ քայլերից իրեն դրսևորել է որպես կարգապահ, անխոնջ, նվիրյալ ուսուցիչ: Բացվող օրերի հետ նա դարձավ ոչ միայն լավ ուսուցիչ, այլ նաև ակտիվ կենսադիրք ունեցող մարդ-քաղաքացի: Հետո կազմեց առողջ, համերաշխ ընտանիք սիրո ամուր միությամբ անգլերենի նորավարտ ուսուցչուհի Արմինե Բաղրյանի հետ: Ունեն դպրոցահասակ, ուսման գերազանցիկ երկու դուստր՝ Արփինեն ու Անին: Նրանք դարձել են Ճարտար քաղաքի օրինակելի ընտանիքներից մեկը՝ երջանկություն պարգևելով արդեն երջանկահիշատակ ծնողներին: Կարևորն այն է, որ առողջ կենսահյութ է նրանց պապենական դարավոր տուն-օջախը:

Արժանավայել, պատվով շարունակում են իրենց ուսուցիչ պապի, ուսուցչուհի մոր մանկավարժական գերդաստանի ավանդույթները, մանկավարժի վեհ ու պատվաբեր առաքելությունը՝ խտացնելով, վեհացնելով նախնիների հարգն ու պատիվը, անունը, հիշատակը, հեղինակությունը:

Այսօր ոչ միայն Ճարտարի, այլև մի շարք հարևան բնակավայրերի բնակիչներ ավագ դասարաններում սովորող իրենց զավակներին սիրով ու ակնկալիքներով, հավատով ուղարկում են Ջավադ Հակոբյանի մոտ՝ լրացուցիչ պարապմունքների: Եվ բոլորն անխտիր հետագայում բարեհաջող քնություններ են հանձնում՝ դառնալով բարձրագույն հաստատությունների ուսանողներ:

Ի դեպ, տողերիս հեղինակը, որ երկար տարիներ աշխատել է նաև որպես դպրոցի փոխտնօրեն, առիթներ է ունեցել տասնյակ դասաժամեր լսել սկզբում սկսնակ, ապա՝ երիտասարդ ուսուցիչ Հակոբյանի մոտ: Միշտ էլ հիացել եմ, ուրախացել նրա կողմից վարվող հետաքրքիր, բովանդակալից, բազմաշերտ, դիտողական, տպավորիչ դաս-ստեղծագործություններով:

Ճիշտ է, լինելով մայրենիի ուսուցիչ, չէի կարող խորք ու լայնքով սուզվել նրա կողմից դասավանդվող քիմիայի, կենսաբանության ծալքերը, սակայն մանկավարժին հատուկ բնատուր հոտառությամբ զգացել եմ, որ գործ ունենք հեռանկարային լավագույն մասնագետի հետ:

Այս գործում ինձ օժանդակել են նաև դասին ներկա մասնագետ-ուսուցիչները՝ իրենց դասալսումներով, փոխադարձ զրույցներով, բանավեճերով, փորձի փոխանակումով:

Իրոք, օրերի հետ աճեց-հասունացավ, մանկավարժական քուրայում կոփվեց, թրծվեց Արցախի այսօրվա լավագույն ուսուցիչներից մեկը: Իրականացան մեր բոլոր կանխատեսումները: Նա կարողանում է համահունչ քայլել ժամանակի հետ, ճիշտ կողմնորոշվել, գտնել սաների սիրտը տանող ուղին՝ զինելով նրանց խոր ու կայուն գիտելիքներով՝ մշտավառ պահելով նրանց հոգևոր աշխարհի լույսը, առողջ ու բեղուն հունդերը:

Մանկավարժի պատվաբեր, սրտամոտ աշխատանքը նրա համար դարձել է կյանքի յուրահատուկ պոեզիա:

Մնում է բացվող օրերի հետ, իմ շատ սիրելի երիտասարդ բարեկամ, շարունակել այդպես: Դեռ առջևում են քո կապտաբույր հեռաստանները: Սպասենք առանց տարակուսանքի, հավատանք, որ դու կհասնես մտքի լուսապայծառ ու չքնաղ բարձունքների: Լավն ու բարին ընդ քեզ: Դասերդ դառնան ավելի բազմաբովանդակ՝ լավի իմաստային երանգներով: Չնայած խոսքս հնչի քնարական, թող այն լինի իմ բարեմաղթանքի վերջին ակորդը:

Ես՝ քո ուսուցիչը,
Որ դարձա արդեն
Տարիքով ավագ,
Քեզ ցանկանում եմ
Հոգևոր դաշտում՝
Լավ բերքահավաք….

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ
ք. Ճարտար

Շնորհավորանք

ԿՈՉՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Հոկտեմբերի 16-ին լրացավ Հադրութի շրջանի Բանաձոր գյուղի հիմնական դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչուհի Կարինա Ալեքսանյանի ծննդյան 60 տարին: Իր կյանքի քառասուն տարիները նա նվիրել է մանկավարժի բարդ ու պատասխանատու գործին եւ այսօր էլ շարունակում է այդ առաքելությունը՝ կրթելով մատաղ սերնդին:

Ծնվել է 1958թ. Հադրութի շրջանի Բանաձոր գյուղում: Մանկավարժի մասնագիտությունը ժառանգել է ծնողներից, այնուհետեւ փոխանցել դստերը՝ էլինային, որը գերազանց առաջադիմությամբ ավարտել է ԱրՊՀ-ն եւ այժմ աշխատում է դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի:

Կարինա Ալեքսանյանը, ավարտելով Բաքվի հ. 5 դպրոցը, 1975թ. ընդունվել է Կիրովի անվան համալսարանի ֆիզիկայի բաժինը, որն ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի է անցել: 1980-1982թթ. աշխատել է Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի: 1983-1995թթ. աշխատել է ՀՀ Հրազդան քաղաքի հ. 10 միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցչուհի: Արցախյան պատերազմից հետո, երբ Արցախի սահմանամերձ գյուղերում ուսուցիչների խիստ պահանջ կար, նա ընտանիքով տեղափոխվում է իր հայրենիք և մինչև այսօր համատեղությամբ աշխատում է Հադրութի շրջանի Բանաձորի և Առաքելի դպրոցներում: Տիկին Ալեքսանյանը տասնհինգ տարի շարունակ եղել է Հադրութի շրջանի Առաքել գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն: Նրա տնօրինության տարիներին դպրոցն արձանագրել է կազմակերպչական և կրթական լուրջ հաջողություններ: Կարինա Ալեքսանյանի սաները մշտապես մասնակցում են ֆիզիկա առարկայից կազմակերպվող շրջանային առարկայական օլիմպիադաներին եւ արձանագրում օրինակելի ցուցանիշներ:

Լավ մանկավարժ լինելուց բացի նա լավ մարդ է՝ միշտ պատրաստակամ իր կազմակերպչական հմտություններով եւ մասնագիտական գիտելիքներով կիսվելու գործընկերների հետ: Եվ մշտապես վայելում է իր կոլեկտիվի, աշակերտների, ծնողների սերն ու հարգանքը:

Բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն լինելով՝ Կարինա Ալեքսանյանը տիրապետում է գերմաներեն եւ ռուսերեն լեզուներին, ունի երաժշտական կրթություն: Նա հոգատար մայր է, վեց թոռների սիրելի տատիկ:

Հադրութի շրջանի Բանաձոր գյուղի հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը՝ Ն. Առաքելյանի գլխավորությամբ, շնորհավորում է Կ. Ալեքսանյանի 60-ամյակը եւ մաղթում առողջություն, երկար տարիների կյանք, Աստծո օրհնություն:

Բանաձորի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԵՌԱԿԻ ՏՈՆ

Գետավանի միջնակարգ դպրոցում իրականացավ երկար սպասված տոնական միջոցառումը՝ «**Ա** տառի ծնունդը», «Ոսկե աշուն», «Աստղիկների երդումը»: Դասարանի կահավորումը հիասքանչ էր. Մ. Մաշտոցի նկարի մոտ Շառլ Ազնավուրի նկարն էր՝ ներքևում ծաղիկներ և վառվող մոմեր: Ամենահետաքրքիրը աղավնիներն էին՝ կտուցներին **Ա** և **Այբ** տառերը: Ձևավորումը համահունչ էր մեր դրոշի գույներին: Այդ ամենը դասվար Ի.Ազարյանի կողմից նվեր էր սաներին:

Միջոցառումը սկսեցին ԱՀ օրհներգով: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Շառլ Ազնավուրի հիշատակը: Ուսուցչուհին բացատրեց մեծ շանսոնյեի մասին ասված՝ «Խոսքով՝ ֆրանսիացի, հոգով՝ հայ» արտահայտության իմաստը:

Նա այնուհետև ներկայացրեց Մեծն Մաշտոցի կատարած գործը: Մտագրոհի մեթոդով սովորողներից քաղեց Մ. Մաշտոցին և **Ա** տառին վերաբերող գիտելիքներ:

Աշակերտները մեծ ոգևորությամբ ասմունքեցին Մ. Մաշտոցին նվիրված տողեր, երգեցին **Ա** տառին և աշնանը վերաբերող երգեր:

Սովորողները միաձայն արտասանեցին Աստղիկների երդումը և ստացան կարմիր ժապավեններ: Հայկական երաժշտության հնչյունների ներքո պարեցին:

Վերջապես եկավ նրանց համար ամենասպասված պահը՝ փուչիկի պայթեցում **Ա**

տառով, փայլերով պայթուցիկներ և տորթի հրավառություն:

Ամենավերջում սովորողներն ուսուցչուհու կողմից ստացան շնորհավորական բացիկներ:

Սեփ. լրատվություն

ԿՐԹՕՋԱԽ

ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ

Դեկտեմբերի 10-ին նշեցինք ԱՀ Սահմանադրության 12-րդ տարեդարձը: Մեր ժողովրդի այս կարևոր օրվան նվիրված՝ Քաշաթաղի շրջվարչակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի ու կրթության և սպորտի բաժինների համատեղ կազմակերպմամբ Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի հանդիսությունների դահլիճում կայացավ «Բրեյն-ռինգ» ինտելեկտուալ խաղ-մրցույթ դպրոցականների մասնակցությամբ: Խաղը, որին մասնակից եղան Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1, Վահան Ջատիկյանի անվան հ. 2, Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան, Ներքին Սուսի Սերոբ Հանեյանի անվան և Քարեգահի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները, անցավ 2 փուլով՝ յուրաքանչյուրում 15 հարց: Հանձնախմբի կազմում էին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը և շրջանային «Մերան» թերթի գլխավոր խմբագիր Զոհրաբ Ըռքոյանը (տողերիս հեղինակը): Հարցաշարը կազմել էր Բերձորի հ. 1 միջնակարգի պատմության ուսուցիչ Հովհաննես Հարությունյանը, որն այս տարվա սեպտեմբերից է դպրոցում աշխատում «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրով: Հարցերը հիմնականում տրամաբանական էին՝ տարբեր բնագավառներից: Մինչ մրցույթն սկսվելը շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչը ողջունեց մասնակիցներին, մաղթեց հաջողություններ:

Առաջին փուլում ամենաշատ՝ 7 միավոր հավաքեց Աղավնոյի դպրոցի «Գարեգին Նժդեհ» թիմը: Բերձորի Վ. Ջատիկյանի անվան հ. 2 դպրոցի «Մենուա»-ն 6 միավորով երկրորդն էր: Երրորդը 5-ական միավորներով Ն. Սուսի դպրոցի «Ազորիտ» և Բերձորի հ. 1 միջնակարգի «Վիկտորիա» թիմերն էին: Երկրորդ փուլը նույնպես անցավ հետաքրքիր ու լարված: Այս անգամ ամենաշատ՝ 8 միավոր հավաքեց «Մենուա»-ն, 6-ական միավոր՝ «Ազորիտ»-ը, «Վիկտորիա»-ն և Բերձորի հ. 1 դպրոցի 12-րդ դասարանցիների «Dangerous»-ը: Իսկ 5-ական միավոր հավաքեցին Քարեգահի «Բեկոր», Բերձորի հ. 2 դպրոցի «5+1» և Աղավնոյի «Գ. Նժդեհ» թիմերը: Ընդհանուր արդյունքում 14 միավորով հաղթող ճանաչվեց «Մենուա» թիմը: Երկրորդը 12 միավորով «Գ. Նժդեհ»-ն էր: «Վիկտորիա» և «Ազորիտ» թիմերն ունեին հավասար՝ 11 միավոր: Երրորդ տեղի համար կայացավ լրացուցիչ խաղ: Հարցերից առաջինը ճիշտ պատասխանեց «Վիկտորիա»-ն և արժանացավ երրորդ մրցանակի: Մրցանակային տեղեր գրաված թիմերն արժանացան կրթության և սպորտի բաժնի պատվոգրին, ինչպես նաև գրքեր նվեր ստացան մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչի կողմից: Պատվոգրեր ստացան նաև մյուս թիմերը:

Մոտ օրերս նույն դպրոցում կկայանա մեծահասակների «Բրեյն-ռինգ» մրցույթը, որին իրավունք ստացավ մասնակցել նաև «Մենուա» թիմը: Ընդմիջման պահին և խաղից հետո մասնակից աշակերտներից եղան ասմունքով հանդես եկողներ: Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հ. Ավանեսյանը կարևորեց նման միջոցառումները, շնորհակալություն հայտնեց աշակերտներին մասնակցության համար:

Մրցույթին ներկա էին մասնակից դպրոցների աշակերտներ, ուսուցիչներ, Բերձորի հ. 1 միջնակարգի տնօրեն Անահիտ Քոսակյանը:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց վաստակաշատ ուսուցչուհի Ֆաթմա Եսայանին նվիրված հրաժեշտի և մեծարման ցերեկույթ: Մանկավարժ, որն անմնացորդ նվիրումով աշխատել է բազում տարիներ՝ սովորողներին տալով հոգու ջերմությունը և աչքերի լույսը:

Ողջույնի և մեծարման խոսքով հանդես եկավ 8-րդ դասարանի դասղեկ Նարինե Միրզոյանը.

«Որտեղ ջուրն է կարկաչում, այնտեղ քարն էլ է կանաչում: Տիկին Եսայանն այն կարկաչող աղբյուրներից է, որտեղից ջուր են խմել շատերը...

Սիրելի՛ մանկավարժ, կյանքում եղել եք ազնիվ ու համեստ, առաքինի և վեհանձն, շիտակ ու բարյացակամ: Ճշմարիտ է ասված՝ ինչպես ծնողը, այնպես էլ երեխաներ դաստիարակող ուսուցիչն արժանի է մեծարման, քանզի ծնողը պարգևում է կյանք, ուսուցիչը՝ արժանավոր ապագա»:

Պահը հուզիչ էր և սրտառուչ: 8-րդ դասարանցիները դրվատանքի խոսք ասացին՝ արժևորելով վաստակաշատ ուսուցչուհու անձնվեր նվիրումը:

Առինքնող էր աշակերտուհի Լիա Բալլույանի սրտի խոսքը.

«Իմ սիրելի՛ ուսուցիչ, մեզ այնքան գիտելիք եք տվել, որ կյանքում միշտ կհիշենք Ձեր խորիմաստ խորհուրդներն ու խրատները: Դրանք զարթուցիչի պես կզրնգան ականջիս, որպեսզի իմ մեջ չքնեն մարդկայինն ու ճշմարիտը»:

Իսկ Արև Կարապետյանն այն արտահայտեց չափածո.

Թվերի աշխարհ, թվեր ու տառեր,
Հաճախ ենք իրար խառնել, շփոթել,
Բայց Ձեր օգնությամբ
Լուծել, շաղկապել:
Այսօր Ձեզ ուզում եմ մաղթել
Ծով երջանկություն, անսպառ ժպիտ,
Խաղաղ ու կապույտ
Երկինք արցախյան:
Ու թող Ձեր լույսը
Ուղեկից լինի դեպի ապագա:

Ցերեկույթի վերջում շնորհակալական խոսք ասաց Ֆաթմա Եսայանը՝ տալով իմաստուն խրատներ ու բարի խորհուրդներ. «Եղեք բարի ազնիվ, կամեցող և իրար սատարող: Ես սիրում եմ ձեզ, դուք միշտ կմնաք իմ հիշողության մեջ»:

Այսօր առիթ է ևս մեկ անգամ մեր վաստակաշատ ուսուցչուհուն ասելու՝ շնորհակալություն Ձեր տված դասերի և իմաստուն խորհուրդների համար: Դուք կմնաք մեզ հետ, քանզի նրանք, ում շատ ենք սիրում, մնում են հավերժ՝ անկախ ժամանակի և տարածության հեռավորությունից:

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Հաթերքի միջն. դպրոցի ուսուցչուհի

ԴՊՐՈՑԸ՝ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Առաջամուղ գյուղը հիմնադրվել է 2004 թվականին «Թուֆենկյան» հիմնադրամի միջոցներով: Գտնվում է Հադրութի շրջանում՝ Արաքս գետի ձախակողմյան հարթություններից մեկում: Ունի 24 տնտեսություն՝ 132 բնակչով: Վերջերս աշխատանքային այցով Առաջամուղում էի և գրող-հրապարակախոս Բակուր Կարապետյանի հետ այցելեցի Զապել Եսայանի անվան միջնակարգ դպրոց, որտեղ աշխատում է 18 ուսուցիչ, սովորում 93 աշակերտ՝ 11 համակարգ-դասարաններում: Տնօրեն Կարինա Մկրտչյանը տեղեկացրեց, որ դպրոցը կառուցվել է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից 2008 թվականին՝ «Հայ կրթական ֆոնդ»-ի աջակցությամբ: Առաջին տարին ունեցել են մոտ 40 աշակերտ: Նա գոհունակությամբ հայտնեց, որ այս տարվա ամռանը «Թուֆենկյան»-ը բարելավել է շենքային պայմանները՝ նախկին շենքին ավելացնելով նոր դասասենյակներ, որտեղ այժմ սովորում է տարրական դասարանների 54 աշակերտ: Ուրախությամբ նշեց, որ ցածր դասարաններում ավելանում է աշակերտների թիվը: Այս ուստարում դպրոց ընդունվել է 14 աշակերտ, նույնքան աշակերտ կա 3-րդ դասարանում, իսկ 2-րդում և 4-րդում՝ 13-ական: Ունեն 3 շրջանավարտ 12-րդ դասարանում, իսկ 9-րդում՝ 5: Անցած ուստարում շրջանավարտ չեն ունեցել: 9-րդ դասարանից մի տղա ընդունվել է Շուշիի «Եզնիկ Մոզյան» ուսումնարանը: Աշակերտների հիմնական մասը զինվորականների երեխաներ են և գալիս են մոտակա զորամասից: Տեղափոխությունը կատարվում է զորամասի ավտոբուսով: Մոտակա Արաքսավան գյուղից, որը մտնում է Առաջամուղի գյուղական համայնքի մեջ, դպրոց հաճախում է 3 աշակերտ, իսկ 25-ը տեղի բնակիչներ են: Դպրոցն ունի գրադարան: Դասագրքերի վիճակը լավ է, կա համակարգչային սենյակ՝ 10 համակարգչով, որից 5-ը կրթօջախին է հատկացվել Երևանի տնտեսագիտական համալսարանի ուսանողների կողմից: Ջեռուցումը կենտրոնացված է: Չնայած ունեցած համակարգիչներին՝ դպրոցը չունի համացանց: Կա բնագիտական առարկաների ուսուցիչների պակաս. հիմնական մասնագետները ֆիզարձակուրդում են: Տնօրենը տեղեկացրեց նաև, որ դպրոցի զինղեկ, պահեստազորի կապիտան ամուսնու՝ Ղևոնդ Մկրտչյանի հետ մինչև Արցախյան շարժումն ապրել են Բաքվում, ապա տեղափոխվել ՀՀ Սյունիքի մարզկենտրոն Կապան և 10 տարուց ավելի է, ինչ Առաջամուղում են: Ավարտել է Բաքվի պետական համալսարանի մեխմաթ ֆակուլտետը. դպրոցում դասավանդում է մաթեմատիկա: Գյուղում արտադպրոցական օջախներ առայժմ չեն գործում, բայց նախատեսված է 2019-2020 թվականներին դպրոցին կից մարզամշակութային համալիր կառուցել:

Այցելեցինք դասարաններ, զրուցեցինք աշակերտների հետ: Առաջին դասարանի դասվար Մարինե Մխիթարյանը կերպարվեստի դաս էր պարապում: Աշակերտներից Ալեքն ու Անուշը որոշել են բժիշկ դառնալ, իսկ Մարին, որը տուն էր նկարում և ոչ վատ, ասաց, որ սիրում է նկարել և կդառնա նկարիչ: Տնօրենը գովեստով խոսեց 9-րդ դասարանից Նիկիտա Հովհաննիսյանի, ութերորդցի Էրիկ Ղավալյանի մասին, որոնք սովորում են գերազանց: 12-րդցի Լիլիթ Ալավերդյանը լավ նկարում է, մասնակցել է մրցույթների, ցուցահանդեսների: Տնօրենը հույս հայտնեց, որ գյուղում նաև ուսուցչի տուն կկառուցվի, և կկարողանան նոր ուսուցիչներ հրավիրել դպրոցում աշխատելու:

«Թուֆենկյան» հիմնադրամի Արցախյան մասնաճյուղի ղեկավար Էդվին Գրիգորյանը տեղեկացրեց, որ գյուղի առաջին տները կառուցվել են բարեգործականի հիմնադիր-ղեկավար՝ ամերիկահայ գործարար, բարեգործ և ճանաչված դիզայներ Զեյմս Թուֆենկյանի միջոցներով, ներդրումներ են կատարել հիմնադրամի հոգաբարձուները և սփյուռքահայ այլ բարերարներ: Հիմնադրամը գյուղի մոտակայքում նռան այգի է հիմնել, որի առաջին բերքն այս տարի քաղել են. ստացվել է մոտ 14տ բերք: Հավելեց նաև, որ այսուհետ իրենք չեն գործելու Առաջամուղում, քանի որ մի շարք ծրագրեր պետք է իրականացնեն Քաշաթաղի շրջանում: Առաջամուղի խնդիրներով կզբաղվի մեկ այլ կազմակերպություն, որի հետ արդեն կա պայմանավորվածություն:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՐԱԿՇԻՌ ԱՇԽԱՏԱՆՔ



Վերջերս լույս տեսավ Ապրես Բեկնազարյանցի «Գաղտնիք Ղարաբաղի» ստվարածավալ աշխատությունը (Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2018թ., 335 էջ): Վերահրատարակման հեղինակ՝ Նելսոն Ավանեսյան:

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի վերահրատարակման նախաձեռնողն է ԱՀ նախկին պետական նախարար Արայիկ Հարությունյանը, որի համար անչափ շնորհակալ ենք նրան նման հայրենանվեր և պատվավոր մտահղացման համար: Հատուկ շնորհակալություն՝ գրքի վերահրատարակման ֆինանսական հովանավորներին՝ «Ֆերզիտ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Խաչատրյանին և Ռուսաստանում ապրող ճարտարցի բարերար Համլետ Համբարձումյանին: Գրքի լայնածավալ աշխատանքներում անմասն չեն մնացել և իրենց լուման են ներդրել բանասերներ Կարինե Բախշիյանը, Անի Խաչատրյանը, Լուսինե Էլյազյանը, Սաթենիկ Ավանեսյանը, Մնացական Ազիզյանը:

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի ուսումնասիրության առարկան հայ ժողովրդի արցախյան պատմության ամենակարևոր և առանցքային իրադարձություններն են, որոնք արդիականացվել են մեր ժողովրդի հերոսներով հարուստ այս գրքի էջերում՝ պատմաշրջանների աշխարհիմբռնման ու աշխարհընկալման առանձնահատկություններով:

Աշխատությունն ունի մի շարք բաժիններ՝ կազմված այբբենական հերթականությամբ: Փաստագրական կարևոր արժեք ներկայացնող սույն աշխատության վերահրատարակմամբ բացահայտվել են այն մշուշոտ և թերի կողմերը, որոնք մեր պատմության գանձարանում իրենց ուրույն տեղն ունեն:

Աշխատության հրատարակությունը արժևորվում է այն առումով, որ հեղինակի՝ Ապրես Բեկնազարյանցի գրառումներն օգտակար են ինչպես պատմագիտության, գրականագիտության, ազգագրության բնագավառներում, այնպես էլ հայեցի դաստիարակության նոր համակարգի մշակման և կրթադաստիարակչական գործնական աշխատանքներում: Ի դեպ, աշխատությունը նախատեսված է ընթերցողների լայն շրջանների համար: Նկարագրվող ժամանակաշրջանում՝ 18-րդ դարում, հայ մանկավարժության պատմության մեջ մենք առանձնահատուկ ուշադրության ենք արժանացնում Մակար Բարխուդարյանին, մի մարդու, որն անմիջական առնչություն ունի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ձեռագիր մասունքի պահպանման հետ: Քանի որ Ապրես Բեկնազարյանցը Մակար Բարխուդարյանի համագյուղացին էր (Խաչեն գավառի Խնածախ գյուղից) և զբաղվում էր Ղարաբաղի պատմություններով, այդ իսկ պատճառով Բեկնազարյանցը Շուշիում 1881թ. «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ձեռագիր մասունքը տալիս է Մեծն պատմաբանին և նշում. «Սրա մեջ թե՛ վտանգավոր շատ գաղտնիքներ կան և թե՛ անգին գանձեր Ղարաբաղի պատմության վերաբերյալ: Բայց այսուհետ կյանքիս համար այլևս չեմ վախենում, որովհետև մահս մոտ է արդեն, և վերջին գլուխը գրել եմ արդեն: Այժմ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն վստահորեն ձեզ եմ նվիրում»: Հեռանալիս նա Բարխուդարյանցին պատվիրում է՝ նախ Դուք դրա լեզուն աշխարհաբարի վերածեցեք, հետո տպագրեցեք:

Գիրքն առաջին անգամ տպագրվում է 1886 թվականին Սանկտ Պետերբուրգում:

Անչափ կարևորում եմ վերահրատարակման հեղինակ Նելսոն Ավանեսյանի միանգամայն նորովի ուսումնասիրության գիտական արժանիքները, որի հրատապությունն ու արդիականությունը բնորոշվում է հայ ժողովրդի պատմության կարևոր դրվագների ուսումնասիրումն ու գնահատումն ամբողջացնելու և մեր այսօրվա կյանքում նրա դերն ու նշանակությունը, հատկապես աճող սերնդի կրթության ու հայեցի դաստիարակության գործում կարևորելու նպատակադրմամբ: Ուսումնասիրելով աշխատությունը՝ գալիս ենք այն հետևության, որ արտացոլելով մեր պատմության թաքնված իրադարձություններն իր երկարամյա շարադրանքի մեջ՝ Ապրես Բեկնազարյանցը մուտք է գործել պատմագիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ բնակազմությունը, հնագիտությունը: Միևնույն ժամանակ, նկարագրելով ժողովրդական կյանքի ու կենցաղի ամենատարբեր ոլորտները և համեմատելով ընդհանուր պատմամշակութաբանական տվյալները՝ նա հանգել է միանգամայն հիմնավոր գիտական եզրակացությունների, որոնք բացահայտում են հայ ժողովրդական, պատմական ներքին գաղտնագրված յուրահատկություններն ու օրինաչափությունները:

Աշխատության հրատարակությունը հատկապես արդիական հնչողություն է ստանում այն առումով, որ ի մի են բերվել և քննության են առնվում վաղնջական ժամանակներից մեզ հասած ու բացահայտված պատմական այն դրվագները, որոնք մինչ այսօր մեր ձեռքի տակ չունեինք, մանավանդ, նմանատիպ ուսումնասիրության տեսքով:

Վերահրատարակման հեղինակը գիտական բարեխղճությամբ ուսումնասիրել և ճշգրիտ վերարտադրել, խորը թարգմանության է առել բոլոր փաստերը՝ պահպանելով դրանց յուրահատուկ գաղափարական ու պատմական բարձր արժեքը, միաժամանակ աշխատությանը տալով արդիական պարզ հնչողություն ու հստակ իմաստ: Հեղինակի նորահայտ փաստագրական ուսումնասիրությունների նպատակն է ցույց տալ, որ հայ ժողովրդի պատմությունն ունի ոչ միայն համազգային, այլև համամարդկային արժանիքներ, որոնցում առանձնահատուկ տեղ են գրավում արցախյան հատվածի պայքարի՝ անկախության, գոյատևման գաղափարի արդիական նշանակությունը:

Ես իմ մասնագիտական տեղեկատվական նյութապաշարով և գիտական վերլուծությամբ առանձնացնում եմ աշխատության այն հատվածը, որ Ապրես Բեկնազարյանցի հայրը՝ Աբրահամը, որդու հետ խոսելիս ասում էր. «Իմ սիրելի որդի Ապրես, Ղարաբաղ վերադառնալով՝ այսուհետ ես չեմ կարողանա այս ծերությամբ հայրենիքիս օգտակար լինել: Այս պատճառով էլ Պարսկաստանում ստանձնում եմ պաշտոն, որ օգտակար լինեմ պարսկահայերին՝ գոնե այս վերջին ծառայությունս մատուցելով: Ես կարող եմ պալատականների և շահի կանանց միջոցով բարձր պաշտոնների հասցնել պարսկահայերից շատերին, ինչպես արել եմ և ապահովել տեղի հայերի կացությունը: Սա է իմ խորհրդավոր գաղտնիքը, որ հայտնեցի քեզ», ու նմանատիպ շատ բացահայտումներ:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմությունից հայտնի է, որ հայ ժողովուրդը, նրա արցախյան հատվածը Աստծու գաղափարի մեջ փորձել են հասկանալ կյանքի արարչագործության, հոգևոր-բարոյական արժեքների խորունկ իմաստը, դարեր շարունակ Ավետարանն օգտագործել են որպես բնության, կյանքի, մահկանացուի խորհուրդը մեկնաբանող, հոգևոր կատարելագործման ու բարոյական դաստիարակության անփոխարինելի աղբյուր: Հեղինակը, անդրադառնալով այդ հարցի քննարկմանը՝ մատնանշում է, որ հայ ժողովրդի դարավոր գոյապայքարում հսկայական դեր են կատարել Հայ Առաքելական եկեղեցին և հոգևորականությունը:

Բեկնազարյանցի սույն աշխատությունը, լինելով հետաքրքիր մտահղացումների արդյունք, հայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացվում է որպես իրական, խրթին ու դժվարին բնագավառի վերաբերյալ ծանրակշիռ և շատ շահեկան մի աշխատանք, որպես նոր ձեռքբերում հայագիտության ոլորտում:

Ինչպես նշում է Նելսոն Ավանեսյանը. «Ես խիստ կարևորում եմ Բեկնազարյանցի աշխատության գիտական արժեքը՝ իբրև հայկական պատմագրության մի կարևորագույն հետազոտություն: Այս առնչությամբ հարկ եմ համարում մատնանշել, որ հեղինակն ազգի և տվյալ ժամանակահատվածը մատնանշող նյութի ընդգրկման և այս քննության ընթացքում հանդես է բերել պատշաճ գիտականություն, նյութի ճիշտ ըմբռնման, եզրահանգման և գնահատումների համոզիչ կարողունակություն, որոնք պայմանավորում են աշխատության գիտական արժեքը և պատիվ են բերում հայ պատմագիտությանը»:

Այսպիսով, սույն աշխատությունը աչքի է ընկնում ակադեմիական հրատարակություններին հատուկ գիտականությամբ ու ճշգրտությամբ և, անտարակույս, արժանի է հիացմունքի:

Արմինե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԱրՊՀ դասախոս, մ. գ. թ., դոցենտ

Խոսք հիշատակի

ԳՐԻԳՈՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժ, գիտնական Գրիգորի Համբարձումի Հարությունյանը:

Գրիգորի Հարությունյանը ծնվել է 1942 թվականի ապրիլի 20-ին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: 1961 թվականին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1969 թվականին ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1967-1974 թթ. դասավանդել է Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր, Խունկութալա (Խնկավան) և Վաղուհաս գյուղերի միջնակարգ դպրոցներում: 1974-1992 թթ. դասախոսել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտում: 1992-2011 թթ. Արցախի պետական համալսարանում զբաղեցրել է ամբիոնի վարիչի, ապա՝ հումանիտար ֆակուլտետի դեկանի պաշտոնները:

1978 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան, 1984 թվականին ստացել է դոցենտի կոչում, 2002 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների դոկտորի աստիճան, ապա՝ պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է երկու տասնյակից ավելի մենագրությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների, բազմաթիվ հոդվածների:

Անխոնջ աշխատասիրության և գործին անձնուրաց նվիրումի համար բազմավաստակ մանկավարժ գիտնականը բարձր է գնահատվել գիտական հանրույթում, ուսանողության և գործընկերների շրջանում:

Հարգված մանկավարժ գիտնականի, հայրենանվեր մտավորականի հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը վշտակցություն ու զորակցություն է հայտնում Հարությունյանների ընտանիքին՝ մաղթելով համբերություն հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

Հորդորակ

ՈՐ ԵՎ ՈՐՊԵՍԶԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզվի կոմիտեն տարածել է հերթական հորդորակը, որը վերաբերում է **որ** *և* **որպեսզի** *շաղկապների կիրառությանը:*

Որ շաղկապը կարող է արտահայտել մեկնական, նպատակի, պայմանի, պատճառի, ժամանակի և այլ իմաստներ:

Ի տարբերություն **որ**-ի՝ **որպեսզի**-ն ունի միայն նպատակի իմաստ, այսինքն՝ գլխավոր նախադասությանը կապում է նպատակի պարագա երկրորդական նախադասություն: **Որպեսզի**-ի նպատակի իմաստն ընկալելի է նույնիսկ խոսքից դուրս:

Ինչպես տեսնում ենք, այս շաղկապների գործառույթները համընկնում են մեկ դեպքում. երբ գլխավոր նախադասությանը միացնում են նպատակի պարագա երկրորդական նախադասություն: Այստեղից կարող ենք հետևություն անել. **որ** շաղկապը **որպեսզի**-ին կարող է փոխարինել գրեթե բոլոր դեպքերում, իսկ որպեսզի-ն որ-ին՝ միայն այն դեպքում, երբ երկրորդական նախադասությունը նպատակի պարագա է:

Վերջին ժամանակներս ոմանք խուսափում են **որ** շաղկապը կիրառելուց՝ մտածելով, թե **որպեսզի**-ն պաշտոնական ոճին առավել պատշաճ է: Սա թյուր կարծիք է:

Զանգվածային տեղեկատվության միջոցներում, պաշտոնական խոսքում հաճախադեպ են **որպեսզի**-ի գործածության սխալները:

Բերենք օրինակներ.

«Հարկային ու մաքսային մարմինները տարիներ շարունակ նպաստել են, **որպեսզի** որոշ իշխանավորների բանկային հաշիվները գնալով մեծանան»:

«Կողմերից ամեն մեկը ցանկանում է թույլ չտալ, **որպեսզի** իր իրավունքները խախտվեն»:

«Նախընտրելի է, **որպեսզի** թեկնածուն լինի այն համայնքից, որի ղեկի համար պայքարում է»:

«Նա պնդում է, **որպեսզի** նոր սահմանադրության նախագծի մեջ ամրագրվի այդ դրույթը»:

«Ժամանակն է, **որպեսզի** մենք ինքներս մի րոպե կանգ առնենք»:

Որպեսզի շաղկապի գործածության ճշտությունը կարելի է պարզել հարցով: Նպատակի պարագան պատասխանում է *ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով* հարցերին: Բերված օրինակներում գլխավոր նախադասություններից հետո չենք ասի՝ ինչո՞ւ (ի՞նչ նպատակով, ինչի՞ համար): Այլ՝

«…նպաստել են *(ինչի՞ն), որ* նրանց բանկային հաշիվները գնալով մեծանան»:

«…ամեն մեկը ցանկանում է թույլ չտալ *(ի՞նչ), որ* իր իրավունքները խախտվեն»:

«Նախընտրելի է *(ի՞նչը), որ* թեկնածուն լինի այն համայնքից, որի ղեկի համար պայքարում է»:

«Նա պնդում է *(ի՞նչ), որ* նոր սահմանադրության նախագծի մեջ ամրագրվի…»:

«Ժամանակն է *(ինչի՞), որ* մենք ինքներս մի րոպե կանգ առնենք»:

Համոզվում ենք, որ այս օրինակներից ոչ մեկում երկրորդական նախադասությունը նպատակի պարագա չէ, և, բնականաբար, պետք է գործածել **որ** շաղկապը:

Ահա այս նախադասություններում **որպեսզի**-ն ճիշտ է գործածված.

«ՀՀ քաղաքացիություն են ընդունել *(ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով),* ***որպեսզի*** գոնե կենսաթոշակ ստանալու հնարավորություն ունենան»:

«Օգնենք նրանց ***(ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով), որպեսզի*** կարողանան մոռանալ ողբերգությունը»:

Ինչպես ասվեց, **որպեսզի**-ի փոխարեն կարող է գործածվել նաև **որ**-ը. «Օգնենք նրանց, **որ** կարողանան մոռանալ ողբերգությունը»:

Նկատի ունենալով այս ամենը՝ **որ** և **որպեսզի** շաղկապների առանձնահատկությունները՝

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Երկրորդական նախադասությունը նպատակի պարագա լինելու դեպքում հավասարապես գործածել **որպեսզի** կամ **որ** շաղկապները, երկրորդական նախադասությունը նպատակի պարագա չլինելու դեպքում գործածել միայն **որ**-ը:

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ՝ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ...

Երգ սիրեցե՛ք, առանց երգի վիշտն աշխարհը կավերի...

Երկրորդ տարին է, ինչ հանրակրթական դպրոցներում որպես դասավանդվող առարկա մտցվել է «Ազգային երգ ու պար»-ը, որը կարծես թե համալրում է մինչև այդ դասավանդվող «Երաժշտություն» առարկային:

Հային, հայ ազգին ընդհանրապես, ծննդյան օրից մինչ այսօր հոգեհարազատ են ազգային երգն ու պարը, երաժշտությունը: Դարեր շարունակ հայ մամիկը քաղցր ու քնքուշ ձայնով օրորոցային է երգել իր մանկան համար: Հայ մշակը, հայ գյուղացին հողը հերկելիս, հունդը հողին պահ տալիս «Մաճկալի երգն» են երգել ու «Հորովելը», աղունն աղալիս «Արկանքի երգն» են երգել, խնոցի հարելիս՝ «Խնոցու երգը»: Հայ հարսները իրենց ամուսիններին ռազմի դաշտ ճանապարհելիս խառնել են երգն ու լացը, իսկ քաջարի զինվորները խրոխտ երգերով ու պարերով մարտական շունչ ու ոգի են հաղորդել իրենց գործողություններին ու հաղթանակներ տարել...

Երգը դեղ է, դարման, սպեղանի ու բալասան վշտակեզ սրտերին: Երգը, պարը ոգեշնչում են մարդկանց, բարձրացնում տրամադրություն, մղում սխրանքների...

Ազգային երգն ու պարը մեր դիմագիծն է, մեր վարքը, պայքարի ոգին, այն մեր ինքնության հիմնաքարն է. այս գաղափարն էր իշխում օրերս Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցում «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաները դասավանդող ուսուցչուհի Նաիրա Ղահրամանյանի կազմակերպած միջոցառման ողջ ընթացքում: Մասնակիցները հիմնականում դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտներն էին, որոնք կարճ ժամանակում տիրապետելով ազգային երգ ու պարի նրբություններին, հաճելի պահեր ու բարձր տրամադրություն հաղորդեցին հանդիսատեսին:

Աչք շոյող բեմի կահավորանքը, ազգային տարազներով երեխաների հպարտ հայացքներն ու խրոխտ կեցվածքը հաճելի պահեր էին խոստանում: Ահա հաղորդավարը հաճելի ակնթարթներ է մաղթում հանդիսատեսին՝ ազդարարելով, որ վերջինս ունկնդիրը կլինի ազգային երգի քաղցրածոր հնչյունների և կվայելի գեղեցիկ ու անկրկնելի հայկական պարեր: Ապա տեղեկանում ենք, որ դեռևս հին ժամանակներում, երբ ձևավորվում էր հայկական մշակույթը, ժողովուրդն ուներ իր հոգու երգն ու պարը, և աշխատանքի պահին, կամ էլ երբ անցնող օրվա հրաժեշտի պահն էր, հավաքվում ու երգում էին սրտաբուխ երգեր ու պարեր...

Ահա դահլիճը պարուրվում է «Մեր տան հիտն» պարերգի քաղցրահունչ մեղեդիներով, և խումբը պարի է բռնվում: Լավ է ասված՝ պարը հոգու արտացոլումն է: Այնքա՜ն բնական էր երեխաների պարը, այնքա՜ն նազանքով, փոքրինչ անվստահ, որ իրոք արտացոլում էր նրանց անմեղ հոգիների ապրումներն ու տվայտանքը:

Հայկական ժողովրդական երգ ու պարում մեծ տեղ են գրավում աշխատանքային երգերը: Դրանցում արտահայտված է շինականի և արհեստավորի, գյուղացու և մաճկալի սոցիալական վիճակը: Դրանց մեջ հայն իր հոգսերն է կիսում գութանի, արորի և եզան հետ ու այդ կերպ հողին կյանք տալիս: Իր չափածո խոսքում հաղորդավարի շուրթերով շինականը զրույցի է բռնվում մայր հողի հետ՝ շեշտելով, որ իր ուժն ու կորովը, խայտանքն ու ջիղն է տվել նրան: Իսկ հողն առատորեն վարձահատույց է եղել վերջինիս՝ տալով հաց ու գինի, ակնկալելով չխնայել իր համար ոչի՜նչ, ոչի՜նչ:

«Քաղհան» երգն է հնչում, ու բեմը լցվում է ծաղկախառն, գունագեղ զգեստներով ու գլխաշորերով աղջիկների ձայների զրնգոցով: Ու թվում է՝ ինքդ էլ ես մասնակիցն այդ հրաշք աշխատանքին, լսում ես մոլախոտերից ազատված, քաղհանված, առատ բերք ու բարիք խոստացող դաշտերի «օրհնանքը»:

Բանահյուսության մեջ առանձնանում են ծիսական երգերն ու պարերը՝ նվիրված Համբարձման տոնին, Վարդավառին, Տյառնընդառաջին...

Այսօր էլ այդ երգերից ու պարերից շատերը պահպանել են իրենց համն ու հոտը:

Խումբը երգում է «Էջմիածին» ու այնքա՜ն ոգևորված է երգում, որ տեսնում ես Լուսավորչի դռներին կանգնած մատաղացու ղոչ գառներին ու նանիի աղոթքն իր բալին առ Աստվածածին: Ապա պարում են «Շավալի, խոշ բիլազիկ» (խնամիների պարը), «Փափուռի», «Գյովնդ-վեր-վերի», «Բուլուլ»: Այնքա՜ն սրտաբուխ, այնքա՜ն հոգեպարար, ոգեշնչող, զգացմունքային...

Ոգեշնչող է նաև այն, որ ժողովուրդը կարողացել է պահպանել սիրված երգերն ու նոր շունչ հաղորդել դրանց: Եվ բացառություն չէին պատերազմների հաղթանակներին նվիրված երգերը: Ռազմի երգերը և՛ ոգեշնչում էին, և՛ դաստիարակում հայրենասիրություն: Իսկ պարի միջոցով ժողովուրդն արտահայտել է իր հոգու շունչը, վարքը, համոզմունքը, ինչու չէ, նաև գաղափարախոսությունը:

Թո՛ղ մեր երգն ու պարը դառնան շենացնող կյանքի խոսուն վկան:

Փա՜ռք ընկածներին, փա՜ռք կենդանաց, ովքեր զորավիգ են հայրենիքի շենացմանը:

Խումբը երգում է «Մենք պետք է կռվենք», ու դպրոցահասակ երեխաների մատները բռունցքվում են, ասել է թե՝ մենք վախեցողը չենք անարգ թշնամուց և ոչ էլ նրա դաժան գնդակից, մեր պապերի ու հայրերի պես ազատ կկռվենք, ու ա՛յդ է վայել անվեհեր քաջին:

Ապա փչում է զուռնան, ու խրոխտ «Քոչարի» են բռնում շուրջ բոլորը: Այո՛,

Մենք ապրելու ենք՝ ինչ էլ պատահի...
Մեր հողի վրա մե՛րն ենք լինելու,
Մեր անտեր գլխի տե՛րն ենք լինելու,
Մենք ապրելու ենք՝ ինչ էլ պատահի:
Մեռնում է արդեն դարն այս կատաղի,
Որ մեր պատանքն էր ոխով հինելու:
Մենք ապրելու ենք՝ ինչ էլ պատահի,
Մեր հողի վրա մե՛րն ենք լինելու:

Միջոցառումն ավարտվեց: Սակայն ոչ մեկը չէր ուզում հեռանալ դահլիճից: Դարերի խորքից ծնունդ առած ու դեպի դարերը գնացող աշխատանքային, ծիսական, ժողովրդական, հայրենասիրական երգերի քաղցրահնչյուն մեղեդիները կարծես պարուրել էին դահլիճն ամբողջությամբ ու կախարդել բոլորին: Իսկ ԱՀ ԿԳՍ նախարարության տեսչության երաժշտության գլխավոր մասնագետ Վազգեն Առաքելյանի կատարմամբ «Հորովել»-ը դուդուկի ուղեկցությամբ ավելի ամբողջական ու հավաքական դարձրեց միջոցառման ողջ հմայքը:

Այո՛, ցանկացած միջոցառման շունչ ու ոգի տվողը երաժշտությունն է, նվագը, մեղեդին, երգն ու պարը:

Թո՛ղ մեր կրթած ու դաստիարակած երեխաների ուժն ու եռանդն անսպառ լինեն, նրանք կարողանան սովորել ավելի թեթև ու սահուն պարել երկնքում սավառնող ամպիկների պես: Ու երանի գա այն օրը, երբ ողջ հայությամբ շուրջպար բռնենք մեր Մասիսի սուրբ կատարին:

Էլմիրա ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
«Ստեփանակերտի հ.12 հ/դ»
ՊՈԱԿ փնօրեն

ԵՐԲ ԲԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Աշնանային մելամաղձոտ օրն ավարտին էր մոտենում: Երկնքից թափվող մեղմիվ անձրևն ու շրջապատը պարուրած մեգը, թվում է, փորձում են խեղդել մարդուն: Ոլորաններով անցնող ավտոբուսը պատառում է մշուշապատ ճանապարհն ու անձրևի շիթերը և սուրում առաջ: Ավտոբուսում նստածների հոգը չէ, թե ինչ է կատարվում դրսում. ո՛չ ցուրտը, ո՛չ մեգը և ո՛չ էլ անձրևը չէին կարող թևաթափ անել նրանց, ովքեր կոչվում էին պատանիներ, ովքեր առաջին անգամ ներկայացման ականատեսը պիտի դառնային: Թևածում էին հայկական ժողովրդական երգն ու հայրենասիրական պոեզիան: Ավտոբուսը վեր էր ածվել փոքրիկ ակումբի:

Աշանից Գիշի ձգվող ուղին այնքան էլ կարճ չէ: Սակայն երեխաների ուրախ տրամադրությունն այնպես կարճեց այդ ուղին, որ չհասկացանք, թե ինչպես հասանք Գիշի: Դահլիճը շատ սառն էր (դեռ հանդիսատեսի բավարար քանակություն չկար), բայց երեխաների համար ի՜նչ ցուրտ, ի՜նչ անհարմարություն... Անվերջ սրախոսությունն ու կատակներն ավելի ու ավելի էին ջերմացնում շրջապատը:

Սրտի տրոփյունով սպասում են վարագույրի բացվելուն: Թվում է՝ վարագույրի հետևում մի կախարդական աշխարհ կբացվի, և նրանք էլ կդառնան այդ հրաշք աշխարհում կատարվող դեպքերի ականատեսն ու մասնակիցը: Բեմը դեռ փակված է, վարագույրը տեղից դեռ չէր շարժվում, իսկ երեխաների հարցերի տարափին չես էլ հասցնում պատասխանել.

«Ի՞նչ են ցուցադրելու, ովքե՞ր են խաղալու, Թումանյանին կտեսնե՞նք, Մարոյին կթաղե՞ն, Անուշը, Սաքոն կխելագարվե՞ն, իսկ Մոսի՞ն, Գիքորը՞...»: Հարցեր, հարցեր..., և զարմանալու առիթ էլ չկա. անհիրավ պատերազմն իր հետ սրբել-տարել է ամեն լավ սովորություն, իսկ համացանցն ու հեռախոսները երեխաներին տարանջատել են գրքից ու արվեստից...

Ահա ի վերջո շարժվեց վարագույրը:

- Ես սիրում եմ մայրիկին, ես չեմ ուզում լինել կին...

- Էստի՜ համեցե՛ք, էստի՜ համեցե՛ք...

- Սաքո՛, Սաքո՛ մեզ մոտ արի, արի՛ մեզ մոտ հարսանիք...

- Ինձ մի՛ սպանի, Մոսի՛ ջան...

- Որ ասում եմ շաշ ես, ինձ չես հավատում...

- Հորս կնունքով, մորս ծնունդով...

Եվ այսպես շարունակ, մեկը մյուսին հաջորդելով, մեր աչքի առջև Մեծն Թումանյանի հերոսներն են խոսում, վիճում, տրամաբանում, փիլիսոփայում: Բեմը դարձել էր ծիծաղի, լացի, երկխոսությունների ու մենախոսությունների հրապարակ: Դարձյալ երևում է բոլոր ժամանակների մեծ այր, փիլիսոփա, մեծատառով մարդ Թումանյանը, մարդ, որ երբեք չկորցրեց իր ես-ը, երբեք չնսեմացավ ու չդարձավ ժամանակների խառնարանների զոհ...

Կողքից նայում էի սաներիս և հպարտանում, որ այդ պահին բոլորն էլ դերասանների հետ «գիրկընդխառն» ապրում են այս կամ այն հերոսի խոհերով ու մտածողությամբ...

Իսկ դերասանները... Նրանց մասին միմիայն գովեստի խոսք կարելի է ասել, քանզի այս խառնաշփոթ աշխարհում կարողանում են անթերի ի կատար ածել արվեստագետի իրենց առաքելությունը՝ սկսած մեր ժամանակների Քաջիկ Հարությունյանից, Սամվել Եվրիյանից մինչև փոքրիկ Դավթյան: Զգում ես, որ բոլորն էլ մտահոգված են, որ արվեստը չկորչի, ապրի ու ապրեցնի հային, որ դարեր շարունակ արարել է հրաշք գործեր ու թողել սերունդներին:

Տունդարձի ճանապարհին երեխաները միմիայն խոսում էին թատրոնի, դերասանների ու արվեստի մասին:

Մեկ անգամ ևս մեր խոնարհումը բոլոր մասնակիցներին և երիտասարդ, տաղանդավոր բեմադրիչ Ռուզան Խաչատրյանին՝ նման բավականություն պարգևելու համար...

Թող այս ներկայացումը վերջինը չլինի, գյուղում միշտ էլ ծարավ են լավ գործի ու խոսքի:

Լիանեպա ԻՇԽԱՆՅԱՆ
գ. Աշան

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎՈՐԸ

Նոյեմբերի 27-ին Ստեփանակերտի հ.1 մանկապարտեզի 3-րդ խմբում հաճելի միջոցառում էր: Փոքրիկները նշում էին Արցախյան պատերազմի փառապանծ զորավարներից մեկի՝ հայրենիքի ազատության զինվոր Մոնթե Մելքոնյանի, բոլորիս սիրելի Ավոյի ծննդյան տարեդարձը: Մեր թոթովախոս փոքրիկների շուրթերով ներկայացվեցին Ավոյի կենսագրությունը, հասարակական և գիտական գործունեությունը, ինչպես նաև Արցախյան պատերազմում նրա անցած փառահեղ մարտական ուղին: Հայրենասիրություն էր հորդում ողջ միջոցառման ընթացքում: Անկեղծ ու անկաշկանդ մթնոլորտում փոքրիկներն իրենց երգ ու պարով, արտասանությամբ ներկաներին հավաստեցին, որ Ավոյի ու մեր բոլոր զոհված քաջորդիների արյամբ նվաճած հայրենիքի արժանի զավակները կլինեն, կսիրեն ու կփայփայեն իրենց պապերի ու հայրերի ազատագրած հայրենիքը՝ մեր չքնաղ Արցախը:

Հրաշալի այդ միջոցառումը կազմակերպվել էր Ժաննա Մարգարյանի՝ մեր հանրապետության վաստակաշատ դաստիարակներից մեկի ջանքերով ու ստեղծագործական աշխատանքի շնորհիվ: Նա անմնացորդ նվիրված է իր գործին, բոլոր փոքրիկներին վերաբերվում է՝ ինչպես իր սեփական զավակներին: Նրա անսահման բարությունը, ծով համբերությունը, երեխաների հոգեբանության վրա ներազդելու բացառիկ կարողությունը գալիս են փաստելու, որ Ժաննա Մարգարյանը երիցս հաջողել է իր բարդ ու պատասխանատու աշխատանքում՝ մեր փոքրիկների դաստիարակության գործում: Երևի թե դա է պատճառը, որ մեր փոքրիկները հաճույքով են հաճախում մանկապարտեզ, որտեղ նրանց միշտ սպասում և բարի ժպիտով դիմավորում է իրենց սիրելի ընկեր Ժաննան:

Կցանկանայինք, որ մեր հանրապետությունում շատ լինեն Ժաննա Մարգարյանի նման դաստիարակներ, որոնց համար մանկապարտեզի դաստիարակ լինելը ոչ թե պարզապես աշխատանք է, այլ բարձր կոչում և անմնացորդ նվիրում:

Նաև մեր շնորհակալությունը կցանկանայինք հայտնել հ. 1 մանկապարտեզի տնօրեն Ժաննա Զաքարյանին, որի ջանքերի շնորհիվ մանկապարտեզն ունի կուռ ու ամուր կոլեկտիվ, որտեղ խրախուսվում է յուրաքանչյուր լավ նախաձեռնություն, ստեղծվել են հրաշալի պայմաններ մեր երեխաների խնամքի ու դաստիարակության համար:

Ստեփ. հ. 1 մանկապարտեզի
3-րդ խմբի ծնողների կողմից

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՆԿԱՐԿՈՒՄ

Լևոն ԽԵՉՈՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆՆ իր կենդանության օրոք եղել է «Լուսարար»-ի պահանջված հեղինակներից մեկը: Նրան թերթի խմբագրության հետ կապել էր խեչոյանագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանը, որը նաև եղել է գրողի մտերիմ ընկերը:

Խեչոյանն Արցախյան պատերազմի տարիներին Սասուն Միքայելյանի կամավորական խմբում մասնակցել է բազմաթիվ մարտական գործողությունների՝ Օմարից մինչև Ֆիզուլի, որոնք հետագայում գրական նյութ են դարձել գրողի ստեղծագործությունների համար: Հատկանշական է նրա «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը, որի համար հեղինակը 1999 թվականին արժանացել է ՀՀ պետական «Ոսկե եղեգն» մրցանակին:

Լևոն Խեչոյանը խուսափում էր հարցազրույցներից՝ գտնելով, որ գրողի ասելիքը պիտի բովանդակվի առավելապես նրա գեղարվեստական երկերում: Այդուհանդերձ, տարբեր առիթներով տված «ժլատ» հարցազրույցները նույնքան գեղագիտորեն հագեցած ու հետաքրքիր են, որքան նրա հեղինակած վեպերն ու պատմվածքները: Դրանք խտացնում են Լևոն Խեչոյանի կենսափիլիսոփայությունը՝ ձևավորելով արձակագրի գեղագիտական ուրույն համակարգը:

Անվանի գրողի ծննդյան 63-րդ տարեդարձի առիթով «Երկիր մեդիա» հեռուստաընկերության հեռարձակած հաղորդումն այդ սակավաթիվ հարցազրույցների շարքից է, որը սղագրելով ու տպագրելով «Լուսարար» թերթում՝ նպատակ ենք ունեցել վերստին արժևորել Լևոն Խեչոյանի գրական մեծ վաստակը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Գրելն ավելի անկեղծ է, քան նկարվելը, ոնց էլ լինի, դու օբյեկտիվի առաջ շփոթվում ես, դերասանական կերպ ես վերցնում, իսկ դրանք բոլորը խանգարում են, բայց գրելիս դու ես և սպիտակ թուղթը, քո Աստվածը և քո խիղճը:

Դեպի սպիտակ թուղթ գնում ես զինվորի պես. մեռնել-հառնելու պահ է: 3-րդ - 4-րդ դասարանից երբ սկսում ես գրել, այն ժամանակ քո խելքը դեռ չի էլ հասնում, որ գրող ես, ինչ է գրականությունը, պարզապես մի բնազդ է, որ ինքդ էլ չես ճանաչում: Կա մի ուժ, մի երևույթ, որ քեզ մղում է, իսկ հետո գալիս է քո մեծ հայրերի ժամանակը: Դա Չարենցն է, Տերյանն է, Թումանյանն է, Մահարին է: Իսկ հետո ավելի ուշ գալիս են Խորենացին, Բյուզանդը, Ագաթանգեղոսը, որոնցից սովորում ես, սովորում ես: 7-րդ թե 8-րդ դասարանում էի, այն ժամանակ չգիտեի Չարենցն ինչ է: Գրականության մի ուսուցիչ ունեինք՝ Վարդանը, շատ լավ ուսուցիչ էր, կանչել էր իրենց արտը՝ կարտոֆիլ հավաքելու: Մի քանի տղաներով էինք, և առաջին անգամ այնտեղ լսեցի Չարենցի անունը: Մտերմիկ հարաբերությունների մեջ պատմեց, դասարանում չէր ասում Չարենցն ով է: Այդ ժամանակ իմացա, որ աքսորյալ է եղել, որ գնդակահարվել է: Ես շշմել էի, թե ինչ բան է գրողը: Չնայած մի քանի բաներ ունեի գրած, բայց գրողի կերպարն այդ ժամանակ հասկացա: Մի քանի օր շարունակ երազում տեսնում էի՝ մազերը խառնված, շուրթերը ճաքած, ոնց է գնդակահարության պատի տակ կանգնած ու նայում է գնդակահարողների աչքերին: Ու մեկ էլ կասկած էր առաջանում՝ ես ուզո՞ւմ եմ այդպիսի գրող լինել, թե չէ: Հետո ժամանակներ փոխվեցին, ես ծանոթացա Տերյանի հետ, Հրանտ Մաթևոսյանի հետ, Թումանյանի, Մահարու հետ: Հասկացա՝ գրականությունն ինչ է: Բայց դեռևս չգիտեի կասկածներն ինչ են. այդ ժամանակ այնքան ուժեղ էի, երիտասարդ էի և հոգով էի ուժեղ: Հենց այստեղ՝ Ծաղկաձորում նստած աշխատում էի «Արշակ արքա»-ի վրա: Փորձում էի գրել: Դիմացս լեռներ կային, այդ լեռներին ես որ ասում էի՝ եկեք ինձ մոտ, բոլորը վազելով գալիս էին: Ես այդ ժամանակ այնքան ուժեղ էի, դեռևս կասկած չկար, բայց հետո գալիս է մի ժանանակ, որը խելացի տառապանքի ժամանակն է: Երբ դու կանգնած ես էս և էն սահմանի վրա, դու արդեն կանգնած ես շինարարության և գնալու սահմանի վրա, հենց դա ես համարում եմ խելացի տառապանքի ժամանակը: Ադ ժամանակ շատ բան ես հասկանում: Դա տուն շինելու ժամանակն է, ես հոգևորը նկատի ունեմ՝ կլինի դա գիրք, նկար, երաժշտություն: Գրողը գիրք է գրում, նկարիչը մի կտավ է նկարում, երաժիշտը մի սիմֆոնիա է գրում՝ այդ բաժանման պահն է, տուն շինելու ժամանակն է, երբ որ դու թողնես ու գնաս: Այ էդ ժամանակ ես արդեն հասկանում՝ ինչ է գրող լինելը, արդյո՞ք դու գրող ես, այդ ժամանակ արդեն ամեն առավոտ սպիտակ թղթի դեմ նստում ես մեռնել-հառնելու պես:

ԻՆՉ Է ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հրանտ Մաթևոսյանի հետ մի տարի, մի ձմեռ, մի ցուրտ, մութ տարի Ծաղկաձորի գրողների տանն էինք մնում: Ռոման Բալայանը ուզում էր Հրանտի «Գոմեշը» նկարահանել, և Հրանտն աշխատում էր սցենարի վրա, բայց ընթացքում սցենարը փոխվեց՝ Վահան Տերյան: Եվ շատ դժվար էր, հիշում եմ: Գրողի կերպարին դա մի լույս, մի բան ավելացնում է: Շատ դժվար էր նա աշխատում այդ գործի վրա: Մեկ էլ գիշերվա ժամը 3-ին - 4-ին գալիս, իմ սենյակի դուռը թակում էր, ասում էր՝ կոֆե չխմե՞նք: Հա՛, խմենք: Քանի որ շենքում ուրիշ մարդ չկար մեր երկուսից բացի, սուրճի բաժակները ձեռներս ման էինք գալիս միջանցքով: Որ նայեք, ոնց որ գնացքի միջանցք լինի: Այդ միջանցքով քայլում էինք մինչև լույս: Այդպես գիշերներն անցնում էին: Մենք Հրանտի հետ գիտեինք, թե որ հարկում անցագորգերը քանի մետր են, պարապությունից, չգրելու տառապանքից գորգերն էինք չափում ոտնաչափով: Գուցե սա՞ է գրականությունը, և այդ տառապա՞նքն է:

Եվ կարծում եմ որևէ գրող մի խելացի պատասխան չի տվել, թե ինչ է գրականությունը, ինչ է գրողը, ոնց է գրում:

Երբեմն փախչում ես ընտանիքից, քեզանից, քո ամենաթանկ բաներից: Պարզապես դուրս ես գալիս ու փախչում: Հետո իրականում պարզվում է, որ փախել ես այդ չգրվելու տառապանքից: Միջավայրն ես փոխում, նոր բան ես որոնում, միտքն ես որոնում, մտքի հետ ես դու լինում: Գուցե հենց սա՞ է գրականությունը: Ես ի՛նչ գիտեմ: Ամեն ինչից է: Գուցե… Երբեմն մտածում ես՝ փողոցով անցնում ես, տեսնում ես մարդը մի շան է ծեծում: Միանգամից դու ոչ թե մարդու կողմից ես, այլ՝ շան: Գուցե սա՞ է գրականությունը, ով գիտե: Շանն ես պաշտպանում, և այսպես իրար հաջորդող շատ մտքեր կան: Կամ երկրի ճիշտ քաղաքացի լինելո՞ւց է գրականությունը գուցե: Ինձ միշտ թվացել է, թե մտավորականը կամ արվեստագետը տվյալ երկրի դրոշակն է: Երբ թշնամին գրավում է այդ քաղաքը, այդ երկիրը, ամենավերջում դրոշակն է ցած բերում: Ինձ թվացել է, թե արվեստագետն ա՛յ էդ դրոշակն է, ամենավերջում է ընկնելու: Ինքը այնքան սկզբունքային պիտի լինի, ինքն ամենավերջինն է ընկնելու, ցած իջնելու: Հիմա նայում ես, ամենաառաջինն է ինքն ընկնում, որովհետև շահ կա, հազար ու մի բան կա: Նրա պարտականությունն է վերջում ընկնելը:

ՔԱՐԵՐԻ ԱՅԳԻՆ

Շատ եմ գալիս այստեղ, էս քարերի այգին: Մի աներևույթ բանականություն կա այստեղ, այս քարերի այգում: Երկրներ կան, որ իրենց խորքում հարստություն ունեն, նավթ ունեն, օգտակար հանածոներ ունեն, հանքեր ունեն թանկարժեք: Երկրներ էլ կան՝ ագարակներ ունեն, մանդարինի, թեյի, երկրներ կան՝ ծովեր ունեն, նավերը գալիս-գնում, քաղաքակրթություններ են բերում-տանում: Երկրներ կան, ասենք՝ Տիբեթը, Հայաստանը, ոչինչ չունեն: Բայց երբեմն նայում ես՝ մի աներևույթ բանականություն կա այդ հողի մեջ, զարկերակ կա, որ հողի մեջ խփում է: Դա ես ինձանից չեմ հորինում. Նոյի նավը դրա համար կանգնեց Արարատի վրա: Հայոց լեռներում հեթանոս քուրմերը մեծ վիշապաքարեր էին կանգնեցրել. երբեմն ինձ թվում է, թե հենց այդ զարկերակի տեղերն են, որ երկրագնդի, հողի զարկերակը խփում է: Այսինքն՝ հողի աչքն է, որ նայում է աշխարհին:

Մենք փոքր երկիր ենք, մենք մեր պատմական հայրենիքը կորցրինք, բայց նաև հողը խոսում է մեզ հետ: Դրա վկայությունն է Արարատ լեռը: Ու անգամ գորշ գայլերն այնտեղ ինչքան էլ խորհրդանշական լինեն, ձագ չեն կարողանում հանել, բայց մեր ամբողջ հայ ժողովրդի ոգին այնտեղ է: Այսինքն՝ հողը խոսում է այն ժողովրդի հետ, որն իր վրա ազդում է:

Եվ այսպես նայում ես, այս քարերի այգին է, զարկերակը խփում է, երբեմն էլ թվում է, թե սա է տարածքը: Երկրներ կան, որ մեծ տարածքներ ունեն, բայց մենք պետք է հորիզոնական չնայենք, տարածքը նաև ուղղահայաց է, դեպի Տիեզերք: Երբ որ նայես դեպի Տիեզերք, այն ժամանակ քո հայրենիքը շատ մեծ է: Մեր Մեծերը՝ Չարենցը, Թումանյանը, մեծ հայրենիք ստեղծեցին և երբեք չմտածեցին, թե ինչու է մեր երկիրն այդքան փոքր, որովհետև նրանք հորիզոնական չնայեցին հայրենիքին, նաև դեպի Տիեզերք նայեցին: Սա է հայրենիքի խորհրդանիշը:

ՄԵՐ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Երբ որ Մարութա սարում Դավիթը եկեղեցի էր կառուցում Ջենով Օհանի հետ, առավոտյան ելան, տեսան եկեղեցին չկա, հոսել է. քարը հոսել է, հողը հոսել է, ավազը հոսել է: Գիշերը քնեցին՝ մտածելով ինչից է: Դավիթը մի երազ տեսավ խորհրդավոր, որտեղ նրան ասվում է՝ քո մեջքից սուրը քաշիր և դիր եկեղեցու պատի մեջ, որպեսզի կանգուն մնա:

Սա մեծ խորհուրդ է հայ ժողովրդին. մենք մեզանից անկախ շրջապատված ենք հակառակորդ երկրներով, և սա խորհուրդ է տալիս, որ ինչքան էլ մենք մեր հոգևոր շինությունը կառուցենք, ինչքան էլ ինտելեկտով առաջ լինենք, բոլոր դեպքերում պետք է մեր սուրը մեր հոգևոր պատի մեջ լինի, մենք պատրաստ պիտի լինենք պաշտպանության. սա է ամբողջ խնդիրը:

Դրա համար մեր էպոսը ոչ թե պիտի էպոս ասենք, այլ պիտի ասենք ազգային վեպ: Դա հայ ժողովրդի ազգային վեպն է, իսկ ավելի հեռուն գնալու համար պիտի ասենք՝ հայ ժողովրդի Աստվածաշունչն է: Մեր ժողովուրդը պետք է այդ կանոններով ապրի: Իսկ այնտեղ այնքա՜ն կանոններ կան, որոնք ասում են, որ ապրենք, բայց մենք չենք անում: Մենք տրվել ենք փողին, տրվել ենք թալանին, տրվել ենք խաբեությանը: Մենք տրվել ենք անհայրենիքությանը: Հիշենք Սանասարից մինչև Մեր հայրենիքի համար ինչեր էին անում, ինչ կերպարներ էին: Սրի պատմությունը որ ասացի, հո պատահական չի, սուրը մեջքից հանեց, դրեց պատի մեջ, և Մարութա սարի բարձր եկեղեցին նոր կանգուն մնաց: Այսինքն՝ դեռ այն ժամանակ արդեն գիտեին մեր մեծ հայրերը, պատվելի հայրերը, թե ինչ երկրներով ենք շրջապատված, մեզ ինչ է պետք: Դրա համար խորհուրդ տվեց մեզ՝ ինչքան էլ դուք քաղաքակիրթ լինեք, ինչքան էլ մշակութային ազգ լինեք, դուք պիտի իմանաք ձեր հոգևոր հարստությունը՝ ձեր հոգևոր հայրենիքը պահպանել պիտի իմանաք:

Երբ որ Սանասարն ու Բաղդասարը փախչում են արաբական խալիֆայությունից, որովհետև խալիֆն ուզում էր նրանց իրենց կուռքերին զոհաբերել, նրանց մայրը՝ Ծովինարը, խորհուրդ է տալիս գնալ Հայաստան՝ իրենց պապի երկիրը: Եվ փախչում են օրեր, գիշերներ, ճանապարհ են կտրում: Երբ գալիս են հայոց սահմանն են մտնում, տեսնում են, որ Արևելյան լեռներից մի հատ բարակ գետ է գալիս, դեմը Եփրատն է: Եփրատը կտրում է ու անցնում, գնում է մյուս ափին խառնվում, հետ է գալիս խառնվում ջրերին, գնում: Դա մեզ ուղարկված խորհուրդ է, որ մեր տեսակն ուրիշ է, տեսակի խնդիր է: Ինչքան էլ փոքր ենք, համաշխարհային մշակույթին, քաղաքակրթությանը մենք բան ենք տալիս: Դրա խորհուրդն է այնտեղ: Բայց, ցավոք, դա դարերի ընթացքում, մեր օրերում քանի գնաց, խամրեց: Մենք մեծ հաղթանակներ ունեցանք և չկարողացանք պահել, հոգևոր իմաստով մատուցենք մեր եկող սերունդներին: Ես նկատի ունեմ պատերազմը, որ չկարողացանք ճիշտ մատուցել, և ավելի շատ երիտասարդների մեջ ուրիշ հոգեբանություն զարգացավ: Դա խամերների, շքեղ մեքենաների հոգեբանությունն է, որ ազգի ողնաշարն է կոտրում: Մեր մեծահարուստների մեջ կուլտուրա չկա: Կուլտուրան փոխվեց մշակույթի՝ մի քիչ դժվար ես հասկանում: Կուլտուրա չկա փող ունենալու: Մեծահարուստները փող ունենալու կուլտուրա չունեն: Մանթաշովը, Արամյանցը նաև կուլտուրա ունեին, փողը ծառայեցնում էին ազգին, սերունդներ էին ուղարկում կրթվելու Եվրոպայում, արտասահմանում: Իսկ հիմա այդ կուլտուրան չկա: Իմ ասածն այն չէ, որ հարուստը վատ է, աղքատը՝ լավ: Հարցը դա չէ: Ինչքան որ չարիքը կամ սատանան փողի մեջ է ապրում, նույն ձևով էլ աղքատության մեջ է ապրում: Աղքատը պետք է ունենա աղքատությանը դիմանալու կուլտուրա, հարուստը՝ հարստության: Իսկ դա լինում է միայն այն ժամանակ, երբ որ կարողանում են ունեցվածքը ծառայեցնել ազգին, ժողովրդին:

ԿՌՈՒՆԿՆԵՐԸ ՉԵՆ ԻՋՆՈՒՄ

Էրզրումի մասին մենք շատ ենք լսել դեռ փոքր տարիքից, երբ որ պապերը կային, երբ ձմեռվա գիշերներ կային, երբ որ հավաքվում էին զրուցելու, հետո մի քիչ որ տարիքներս մեծացավ, իրենց հետ գնում էինք (այդ պատկերը աչքերիս առաջ է), իրենց հետ գնում էինք դաշտ, կարտոֆիլն էին քանդում, այնտեղ հեռու մի տեղ կրակ էին վառում, կարտոֆիլ էին խորովում, և կարճ այդ ընդմիջումներին նստում էինք ճաշելու: Կապույտ ծուխ էր բարձրանում, իսկ ամբողջ դաշտում գույնզգույն շորերով աղջիկները կարտոֆիլ էին հավաքում: Նաև այն ժամանակ էինք լսում էրզրումի մասին: Հիշում եմ, խոր աշուն էր: Երբ որ կռունկներն էին գալիս, անցնում ճչալով, պապերը մեզ ասում էին՝ գլխարկդ որ թարս դնես, կռունկները կիջնեն: Բայց հետո մի քիչ էլ որ մեծացանք, թարս էլ էինք դնում գլխարկները, կռունկները չէին իջնում: Հետո երբ ավելի մեծ տարիքի էինք, հասկացանք, որ էրզրումից հետո մի այնպիսի երկիր ենք եկել, որտեղ անձրևները պաղ են, հողը պաղ է, կռունկները չեն իջնում: Մի քիչ առաջ խոսեցինք, չնայած հակառակ տեսակետն էլ ունեմ, հենց այդ մերկ, հենց այդ պաղ, հենց այդ անձրևոտ լերկ լեռների վրա հողի զարկերակը խփում է: Եվ այդ տարիքից էրզրումն ինձ համար այդ խնձորի այգին էր: Խնձորի այգի էր, որի ցանկապատն արդեն փլվել էր, բայց պտուղը կա: Այդ զգացողությունն ունեի: Լուսահոգի արքեպիսկոպոս Աշճյանը մի քանի անգամ ինձ հրավիրեց, որ գնանք մեր պատմական հայրենիք: Այն ժամանակ էլ ասացի, հիմա էլ հավատացած եմ, որ մեր բանակից հետո ես կգնամ այնտեղ: Պղծված ինչ-որ բան եմ զգում: Չնայած նաև գիտեմ, որ հոգին նվաճված չի: Կարող է հողը նվաճվել է, բայց հողը լեզու ունի և խոսում է: Հողի լեզուն նվաճված չէ, հոգին նվաճված չէ, բայց չկարողացա գնալ: Գուցե իմ թոռները, ծոռները կգնան, չգիտեմ: Ես պատրաստ չէի:

☞16

ԼԵՎՈՆ ԽԵՋՈՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

15 Երբեմն հիմա կոչեր են լինում, հոդվածներ են լինում, խոսում են թուրք-հայկական հարաբերությունների մասին, պարզապես միշտ էլ ես մտածել եմ, այն ժամանակ էլ, երբ Եվրոպայի գրողների հետ ճանապարհորդում էի: Տարբեր երկրներով անցնում ես և տեսնում ես երկրները, գրողների մտածողությունը, այդ երկրի քաղաքացու մտածողությունը: Ինձ միշտ թվացել է, որ Եվրոպան դեռևս մեղք ունի գործած հայ ժողովրդի նկատմամբ՝ սկսած Ռուսաստանից և իր մեղքը դեռ չի խոստովանել: Հիմա էլ որ խոսում ենք այդ մասին, գլոբալիզացիայի մասին, ինձ միշտ թվացել է, որ փոքր ազգերը տուժելու են դրանից: Որովհետև մենք համապատասխան մշակութային հզորություններ չունենք: Ես նկատի ունեմ հեռուստատեսությունը, թարգմանչական դպրոցը: Որ կարողանանք ամբողջը թարգմանել, կդիմակայենք: Եվ այդ թուրքական ֆոնի վրա ինձ միշտ թվացել է, որ Կայենի և Աբելի պատմությունը մեզ մոտիկ է: Երբ որ մենք մեր զոհը մատուցեցինք Աստծուն, մեր դարավոր մշակույթը ընդունելի էր և հաճելի էր համաշխարհային քաղաքակրթությանն ասեմ, թե Աստծուն ասեմ, այդ ժամանակ մեզ ոչնչացրին և թաղեցին դաշտում: Չէ՞ որ երբ որ հարցրեց, թե ուր է քո եղբայրը, ասաց՝ ես չգիտեմ, այնինչ ինքն էր սպանել: Նույն բանը կատարվեց մեզ հետ: Երբ որ Եվրոպայի աչքի առաջ մեզ՝ մեկուկես միլիոն մարդ, ոչնչացրին, և երբ Եվրոպային հարցրին՝ ո՞ւր է քո եղբայրը, ասաց՝ ես չգիտեմ: Երբ որ ասում եմ, որ Եվրոպան մեղք ունի, հենց այս պատճառով եմ ասում, որովհետև մեր զոհը ընդունելի էր, և սա է վախեցնում: Հիմա էլ երբեմն կոչեր են հնչում, որ Թուրքիան էլ այն Թուրքիան չէ, Թուրքիան մինչև չխոստովանի, մինչև ներողություն չխնդրի, ինքը դեռ էլի էն Թուրքիան է: Ո՛նց այն Թուրքիան չէ, երբ մենք շրջափակման մեջ ենք հենց իր կողմից: Ո՛նց այն Թուրքիան չէ, երբ որ Հրանտ Դինքին ճշմարիտ խոսք ասելու համար սպանեցին: Եվ ո՛նց այն Թուրքիան չէ, երբ որ այսօր Իրաքի սահմաններն է մտել քրդերի հետ հարցը լուծելու: Իրենց թագավորը (նախագահը նկատի ունեմ) լինի, թե իրենց հասարակ մարդը, երբ որ նայում ես հեռուստաէկրանին, տեսնում ես, որ նույն ասկյարն է, զինվորն է: Նրանց նախագահը դարձյալ զինվոր է: Նրանք դեռ պատրաստ չեն խաղաղության և խոստովանության: Երբ որ նրանք աշխարհի առաջ կխոստովանեն իրենց մեղքը, նոր կտեսնենք:

ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔՆ Է ԼԱՎ ԳՈՐԾԸ

Մի պատմվածքը գրելու ընթացքում այնքա՜ն էներգիա, այնքա՜ն ուժ ես տալիս: Այնպիսի օրեր են լինում, որ կարող ես 6-7 ժամ նստել սպիտակ թղթի առաջ, մի տող էլ չկարողանաս գրել: Միայն այն, որ մարդը 7 ժամ ոչ մի բան չանի, նստի, դա շատ դժվար գործ է, բայց որ սպիտակ թղթի դեմ նստես, խարտոցի նման մաշում է քեզ 7-8 ժամ: Իսկ մի պատմվածք գրելը տևում է մեկ ամիս, երկու ամիս: Երբ ավարտում ես, էլ ուրախանալու ուժ չունես, սպառվել ես սպիտակ թղթի առաջ, լրիվ տվել ես թղթին: էլ այդ ուժը չկա, մի տխուր թախիծ է: Ես միշտ մտածել եմ վաղ տարիքից, թե արվեստագետն առաքյալի նման է երկիր գալիս: Ինչպես առաքյալը ուղարկվեց երկիր, որպեսզի մահկանացու մարդու համար աղոթք անի նրա փրկության համար, այդպես էլ արվեստագետը, նկարիչը, երաժիշտը, գրողը երկիր են գալիս, մի գիրք են գրում, մի սիմֆոնիա, մի նկար են ստեղծում աղոթքի պես: Մարդը տիեզերքում մենակ է, որպեսզի կարողանա մարդուն մենակությունից փրկի, այդ ամբողջը դրա համար է: Ճշմարիտ արվեստի մասին է խոսքը, իհարկե: Մարդու փրկության աղոթքն է լավ գործը: Կարող է տարիներ տևի այդ գործի ստեղծման պրոցեսը:

ՀԵՌՈՒ ՄԻ ՏԵՂ Է ՀՈՒՆՑՎՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շատ ինտիմ է գրականությունը: Ինչպես մարդը միշտ իր սիրած աղջկա հետ ցանկանում է առանձին մնալ, առանձին տեղ, այդպես էլ գրականությունն է: Կենդանիների աշխարհում երբ որ ուղտի զուգավորվելու ժամանակն է գալիս, թողնում-հեռանում է անապատի խորքերը, որովհետև մարդկանց ներկայությամբ չի կարող այդ ակտը կատարել: Նա ամաչում է և թողնում-հեռանում է անապատի խորքերը: Կամ պիտի տերը նրան ծածկոցով, սավանով ծածկի, որ նոր դա տեղի ունենա, նոր սերունդ տա: Կամ նույն օրինակն ունենք մեղուների համար: Մութ, հեռու մի տեղ մեղրը հունցում են: Այնպես էլ գրականությունն է: Հեռու մի տեղ, առանձին հունցվում է գրականությունը, տարբեր զգացողություններից, տարբեր մտքերից: Մարդն իր սիրած աղջկա հետ միշտ ուզում է մենակ լինել: Շատ ինտիմ է: Այդպես է և գրականությունը, պետք է այնտեղ հունցվի լավագույն միտքը, լավագույն գրականությունը: Ես այսպես եմ զգում: Որ ճիշտն ասեմ, միշտ ինձ գրելուց հետո չի հետաքրքրել գրածս, բացարձակ: Մեկ-մեկ զարմանում են, որ երբեմն ես իմ գրքերը չունեմ, երբեմն իմ մասին գրածն ուզում են, չունեմ: Հոդվածներ են լինում, չունեմ, որովհետև այնքան հեռու են ինձնից, ինձ գրելու պրոցեսն է հետաքրքրում: Հեռու մի տեղ է, այդպես հեռանում ես: Ոնց որ քո երեխան: Ասենք իմ տղաները իմն են, հարազատներն են. հեռու մի տեղ են, իրենց մասին երբ լավը լսում եմ, լավ է, այդպես անորոշ պորտալարով կապված ես դու, բայց դա արդեն հեռու է, ուրիշ բանի շուրջ ես մտածում, խորհրդածում:

ՑԱՆԿԱՑԱԾ ԳՐՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ

Ցանկացած գրող, ով էլ լինի, ազդեցություններ կրում է: Ժամանակին անգամ քո համակրած գրողները՝ Չարենցը, Թումանյանը, Մահարին, հետո ավելի ուշ, ինձ թվում էր, որ խորապես ազդեցություն ունեն ինձ վրա Խորենացին, Ագաթանգեղոսը, Բյուզանդը, մեր պատմիչները, այնուհետև՝ Հրանտ Մաթևոսյանը: Հետագայում պետք է քեզ մոտ դա ոճ դառնա, թևավորվի, ժամանակակից կերպար ընդունի: Այդ ժամանակ նաև համաշխարհային գրականության հետ ես շփվում: Ֆոլկներ կա այնտեղ, Ֆլոբեր կա, Բոդլեր կա, Ռեմբո կա, որին ես շատ եմ սիրում: Այսպես թե այնպես, բոլորն էլ քեզ վրա ազդեցություն ունենում են: Պարզապես արդեն քո պրիզմայով են անցնում նրանք: Փորձն էլ ցույց է տալիս, որ լավ գրականությունը ստացվում է այն ժամանակ, երբ որ դու այս ամբողջը վերցնում ես և միաժամանակ այս ամբողջից ազատվում ես: Երբ քո իսկական ձայնը հնչում է, այդ ժամանակ սկսվում է արդեն քո լավագույն գրականության ժամանակաշրջանը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԶԳ ԼԻՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Նկարչության, երաժշտության դեպքում եվրոպական տարածքներ դուրս գալը շատ հեշտ է, որովհետև այնտեղ միջնորդ լեզու չի պահանջվում: Գրականության դեպքում արդեն միջնորդ լեզու է պետք, որպեսզի թարգմանվի, ներկայացվի, իսկ ցավոք, մեր պետությունը այդքան ջանքեր չի ներդնում՝ մշակույթը ներկայացնելու միջազգային ասպարեզներում, և սա է դժվար բանը: Իսկ մյուս կողմից որ նայում ես, ասում ես՝ մենք հին ազգ ենք, մշակութային ազգ ենք: Հիմա այդ պայմաններում եվրոպացիներին չենք կարող զարմացնել մեր արտադրանքով, մեր գործարաններով, մեր պղինձով: Մենք այսօր Եվրոպայի հետ կարող ենք մրցակցություն բռնել միայն մեր մշակույթով: Իսկ ի՞նչ է պետք դրա համար. հարկավոր է մեր մշակույթը հանել Եվրոպա լավագույն ձևով: Ես դեռևս 2000 թվականին եվրոպացի գրողների հետ ճանապարհորդությունս չէի կատարել, որոշ վախեր ունեի, թե մշակութային տարբերություն կա, նրանց գրողները ավելի լավ են գրում, բայց հետագայում, երբ այդ ճանապարհորդությունը կատարվեց, ես հասկացա, որ մենք շատ լավ պոեզիա ունենք; Չեմ ուզում բարձր բաներ ասել, թե մենք նրանցից առավել ենք, բայց նրանց հավասար ենք և կարող ենք նրանց հետ քննություն բռնել: Իսկ ինչ է պետք. հարկավոր է մեր մշակույթը ներկայացնել եվրոպացիներին լավ թարգմանությամբ, մեծ ծախսերով: Այո, լավ թարգմանություն ունենալու համար լավ թարգմանիչներ են պետք, նյութական ծախսեր: Դրանք հարկավոր է անել և ներկայանալ միջազգային մշակույթին, որ՝ ահա՛ մեր մշակույթը: Սա է ճանապարհը մշակութային ազգ լինելու, սրանք են քայլերը: Բայց մենք շատ ուրիշ բաների վրա ենք փող, միջոցներ ծախսում:

ՀԱԴՐՈՒԹԻ ԹԻՄԸ՝ ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻ ՀԱՂԹՈՂ

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից դեկտեմբերի 10-12-ը անցկացվեցին հանրակրթական, միջին մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների պատանիների միջև ուժային եռամարտի հանրապետական մրցումներ, որոնց մասնակցեցին ԱՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:

Մրցումների ծրագրով նախատեսված էին ձգումներ պտտածողի վրա, 16 կգ-անոց ծանրաքարի բարձրացում, բազկամարտ:

Երկօրյա մրցումների արդյունքում մրցանակային տեղերը բաշխվել են հետևյալ կերպ. 1-ին տեղը զբաղեցրել է Հադրութի շրջանի թիմը, 2-րդ տեղը՝ Ստեփանակերտի հավաքականը: Հարկ է նշել, որ երկու թիմերն էլ հավաքել էին հավասար միավորներ: Մրցումների կանոնակարգի համաձայն՝ հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է ծանրաքարի բարձրացում մրցաձևում ավելի բարձր արդյունք ցուցաբերած թիմին: Ըստ այդմ՝ Հադրութի թիմը, որը ներկայացնում էին Տումու միջնակարգ դպրոցի աշակերտները, դարձավ մրցումների հաղթող: 3-րդ մրցանակային տեղը բաժին հասավ Մարտունու շրջանի հավաքականին:

Մրցումներում աչքի ընկավ Հադրութի հավաքականի անդամ Գևորգ Ավագյանը: Անհատական հաշվարկով նա 1-ին տեղն է գրավել երեք մրցաձևերում հավաքած միավորներով և ծանրաքարի բարձրացում մրցաձևում: Բոլոր մրցաձևերի միավորներով 2-րդ տեղը գրավել է Շահումյանի շրջանի թիմից Նոր Բրաջուրի դպրոցի աշակերտ Արազ Միրզոյանը, 3-րդ տեղը՝ Հադրութի թիմից Մխիթար Օհանջանյանը (Տումու միջնակարգ դպրոց):

Ձգումներ պտտածողի վրա մրցաձևում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական ուսումնարանի սան Գոռ Մկրտչյանը, բազկամարտում լավագույն է ճանաչվել Արման Բեգլարյանը (Ասկերանի միջնակարգ դպրոց):

Մրցանակակիր թիմերը պարգևատրվել են ԿԳՍՆ դիպլոմով, հուշանվերով, թիմերի բոլոր անդամները մարզիչների հետ՝ դիպլոմով և դրամական պարգևով: Անհատական մրցումներում հաղթողները նույնպես արժանացել են պատվոգրի և դրամական պարգևի: Պարգևատրումներ են նախատեսված նաև ԱՀ պաշտպանության նախարարության կողմից:

Սեփ. լրատվություն

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 13.12.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: